

ԿՈՍՈՎՈՅԻ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ԿՈՂՄԻՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՀՈՉԱԿՄԱՆ  
ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

## ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ

**Հետազոտության համակարգող՝** իրավ. գիտ. թեկն. Եղիշե Գրիգորի Կիրակոսյան,  
Հայաստանի Հանրապետության վարչապետի օգնական, Երևանի պետական  
համալսարան

**Հետազոտության պատրաստմանը մասնակցեցին՝**

Գևորգյան Լևոն, Երևանի պետական համալսարան  
Երեմյան Լիլիթ, Հայ-Ռուսական սլավոնական համալսարան  
Երիցյան Արմեն, Երևանի պետական համալսարան  
Խաչատրյան Ասյա, Հայ-Ռուսական սլավոնական համալսարան  
Խզմալյան Արա, իրավ. գիտ. թեկն., Հայ-Ռուսական սլավոնական համալսարան  
Հայրապետյան Ջոն, Հայ-Ռուսական սլավոնական համալսարան  
Մարգարյան Վանիկ, Երևանի պետական համալսարան  
Մելիքյան Մակար, Երևանի պետական համալսարան  
Մելքոնյան Արաքս, Երևանի պետական համալսարան  
Մուշեղյան Հռիփսիմե, Երևանի պետական համալսարան  
Նահապետյան Տիգրան, իրավ. գիտ. թեկն., Հայ-Ռուսական սլավոնական համալսարան  
Շիրինյան Լուսինե, Երևանի պետական համալսարան  
Սարգսյան Դավիթ, Երևանի պետական համալսարան  
Սարգսյան Մանե, Երևանի պետական համալսարան  
Սիմոնյան Տարոն, Երևանի պետական համալսարան  
Վարդևանյան Արամ, Հայ-Ռուսական սլավոնական համալսարան

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀԴՀ- Հարավսլավիայի Դաշնային Հանրապետություն  
ՀՄԴՀ – Հարավսլավիայի Դաշնային Սոցիալիստական Հանրապետություն  
ԱՄԴ – Արդարադատության Միջազգային Դատարան  
ՄԱԿ- Միավորված Ազգերի Կազմակերպություն  
ԵՄ – Եվրոպայի Միություն  
ԵԽ- Եվրոպայի Խորհուրդ  
ԵԱՀԿ – Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպություն  
ԱԽ- ՄԱԿ- ի Անվտանգության Խորհուրդ  
ԳԱ – ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեա  
UNMIK – Uited Nations Interim Mission Administration in Kosovo- Կոսովոյում ՄԱԿ-ի  
միջանկյալ առաքելություն-վարչակազմ  
KFOR – NATO lead Kosovo Force –Հյուսիս Ատլանտյան Դաշինքի կողմից ղեկավարվող  
Կոսովոյի Ուժեր  
ICTY- Internaitonal Criminal Tribunal for the Former Yugoslavia- Նախկին Հարավսլավիայի  
Գործերով Միջազգային Քրեական Տրիբունալ  
SRSG- Special Representative of the Secretary-General – Գլխավոր Քարտուղարի Հատուկ  
Ներկայացուցիչ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Մերժողաբանություն.....	5
II. Փաստական հանգամանքների համառոտագիր.....	5
III. Դատարանի քննությանը հանձնված հարցի բովանդակությունը, շրջանակները և դատարանի իրավագործությունը .....	6
IV. Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման և իրավահավասարության սկզբունքը արդի միջազգային իրավունքում .....	9
A. Հնարավոր է արդյոք ազգերի և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի հիման վրա անջատման իրավունքի իրականացումը ապագադրությանցման համատեքստից դուրս .....	9
B. Արդյոք Կոստովոյի միակողմանի անջատումը հակասո՞ւմ է միջազգային իրավունքին.....	11
C. Արդյոք Կոստովոն հանդիսանո՞ւմ է ինքնորոշման իրավունքի սուբեկտ.....	14
D. Վերականգնողական (հատուցողական) անջատում (remedial secession). արդյոք մարդու իրավունքների սիստեմատիկ խախտումները և ռասայական խտրականությունը կարո՞ղ են իրավական հիմք հանդիսանալ միակողմանի անջատման համար .....	17
E. Արդյոք միակողմանի անջատումը խախտո՞ւմ է տարածքային ամբողջականության սկզբունքը.....	22
F. Արդյոք Կոստովոյի միակողմանի անջատումը հակասո՞ւմ է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 1244 բանաձևին.....	32
G. Արդյոք Կոստովոն հանդիսանո՞ւմ է պետություն ժամանակակից միջազգային իրավունքի տեսանկյունից.....	39
H. Արդյոք Կոստովոյի միակողմանի անջատման իրավաչափությունը անհրաժեշտ է գնահատել ՀԴՀ ներպետական իրավունքի տեսանկյունից.....	42
V. Անկախության հռչակագրի համապատասխանությունը միջազգային իրավունքին .....	43
VI. Արդյոք Կոստովոյի անկախացումը կարո՞ղ է նախադեպ ծառայել այլ նմանատիպ իրավիճակների համար .....	49
VII. ՄԱԿ-ի Միջազգային դատարանի մոտեցումների համառոտագիր .....	52
A. Հարցի շրջանակները եվ նշանակությունը.....	52
B. Արդյոք անկախության հռչակագիրը համապատասխանում է միջազգային իրավունքին .....	53
1. <i>Ընդհանուր միջազգային իրավունք.....</i>	<i>53</i>
2. <i>Անվտանգության խորհրդի 1244 բանաձև և սահմանադրական հիմնադրույթներ.....</i>	<i>54</i>
3. <i>Արդյոք անկախության հռչակագիրը համապատասխանում է Անվտանգության խորհրդի բանաձև 1244-ին.....</i>	<i>56</i>

## I. Մեթոդաբանություն

Հետազոտության մեջ համառոտագրված են Արդարադատության միջազգային Դատարանին ներկայացված պետությունների դիրքորոշումները Կոսովոյի անկախության հռչակագրի իրավաչափության հարցի առնչությամբ:

Հետազոտությունը դասակարգված է ըստ հիմնական հրցադրումների, որոնք առկա են պետությունների մեծամասնության դիրքորոշումներում՝ փաստաթուղթն առավել դյուրընթեռնելի դարձնելու նպատակով:

Յուրաքանչյուր հարցադրման ներքո ներկայացվում են և՛ դրական պատասխանը, և՛ բացասական պատասխանը հիմնավորող փաստարկները:

Պետությունների մեծ մասը իրենք գրավոր փաստարկներում առաջադրում էին մեծաթիվ քաղաքական փաստարկներ, որոնք որպես կանոն չեն ներառվել հետազոտության մեջ, փոխարենը փորձ է կատարվել ուշադրությունը կենտրոնացնել իրավական փաստարկների վրա:

## II. Փաստական հանգամանքների համառոտագիր

Հիմնական փաստական հանգամանքները, որոնք ներկայացնում են գործի էությունը հանգում են հետևյալին.

1. Կոսովոյի և Մետոխիայի Ինքնավար մարզը 1974 թ.-ից ի վեր օժտված էին Նախկին Հարավսլավիայի վեց հանրապետությունների կարգավիճակին հավասար կարգավիճակով: 1989 թ. Կոսովոյի հատուկ կարգավիճակը վերացվեց: 1991թ. սեպտեմբերին ոչ պաշտոնական անկախության հանրաքվե անցկացվեց Կոսովոյում: Հոկտեմբերին ձևավորվեց ժամանակավոր կառավարությունը: 1992թ. մայիսին տեղի ունեցան Ասամբլեայի ոչ պաշտոնական ընտրություններ և ընտրվեց նախագահ: Մինչև 1992-1999թթ. հունիսը Կոսովոյում մարդու իրավունքների դաժան և պարբերական խախտումներ են տեղի ունեցել:
2. 1998թ. փետրվարին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդը իր 1199 բանաձևում պահանջեց, որ երկու կողմերը քայլեր ձեռնարկեն բարելավելու մարդու իրավունքների իրավիճակը: 1999թ. հունիսի 10-ին Անվտանգության խորհուրդն ընդունեց Կոսովոյում իրավիճակի վերաբերյալ 1244 բանաձևը, որից հետո մինչ այժմ Սերբիան Կոսովոյի հանդեպ որևէ իշխանական գործողություններ չի իրականացրել:
3. 1998 թ. սեպտեմբերին Անվտանգության խորհրդը 1199 բանաձևով պահանջեց Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունից «... (d) կատարել զգալի առաջընթաց երկխոսության հստակ ժամանակացույց սահմանելու խնդրում,... որի մասին նշված է 1160 (1998) բանաձևում ...՝ Կոսովոյի խնդրի համար քաղաքական լուծում գտնելու նպատակով»: (օր. para. 4): 15 ամիս տևած բանակցությունները ձախողվեցին 2007թ. վերջին:
4. Հատուկ ներկայացուցիչ գլխավոր քարտուղար, Մարտի Ահտիսիարին իր S/2007/168 զեկույցում եզրակացրեց, որ «խնդրի լուծման միակ իրական տարբերակը Կոսովոյի անկախությունն է»:
5. 2007թ. դեկտեմբերին Տրոյկան եզրակացրել է, որ կողմերը չեն կարողացել բանակցությունների միջոցով հասնել Կոսովոյի կարգավիճակի վերաբերյալ համաձայնության: Կոսովոյի խնդիրը 2007թ. դեկտեմբերի 9-ին, 2008թ. հունվարի 16-ին և

2008թ. փետրվարի 14-ին քննարկման էր դրվել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի օրակարգում, սակայն արդյունք:

- 2008 թ. հոկտեմբերի 8-ին, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 22-րդ նստաշրջանում Մերթիայի առաջարկությամբ ընդունեց 63/3 (A/63/L.2) բանաձևը, որով ՄԱԿ-ի Միջազգային Դատարանի, վերջինիս Ստատուտի 65-րդ հոդվածի համաձայն Դատարանից խնդրեց խորհրդատվական եզրակացություն տալ հետևյալ հարցի կապակցությամբ:

**«Արդյոք Կոսովոյի ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված անկախության հռչակագիրը համապատասխանում է միջազգային իրավունքին»:**

### **III. Դատարանի քննությանը հանձնված հարցի բովանդակությունը, շրջանակները և դատարանի իրավագործությունը**

- Կոսովոյի անկախության հռչակագիրը «միակողմանի» որակելը էական չէ գործի հանգամանքների տեսանկյունից, թերևս դա միայն կարող է կարևոր լինել Անկախության հռչակագրի ոչ կոնսենսուալ բնույթը ընդգծելու համար: Իրավանախորդ պետության սահմանադրության վրա հղելով որևէ կազմավորման կողմից անկախության հռչակումը չի կարող հանդիսանալ միջազգային իրավունքի տեսանկյունից իրավաչափության որոշիչ չափարոշիչ:<sup>1</sup>
- Դատարանին ներկայացված հարցի ձևակերպումը այնպիսին է, որ ենթադրում է, թե արդյոք միջազգային իրավունքում առկա է միակողմանի անկախության հռչակումը թույլատրող նորմ:<sup>2</sup>
- Համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության հոդված 96 և ՄԱԿ-ի Դատարանի Ստատուտի հոդված 65-ի, Դատարանին ներկայացված հարցերը պետք է բավարարեն մի շարք պահանջների. պետք է լինեն ժամանակակից և պրակտիկ: Հարցերին ներկայացվող չափանիշներից մեկն այն է, որ հարցը չպետք է լինի վերացական և դրա պատասխանը պետք է օժանդակի Գլխավոր Ասամբլեային իր գործառույթների իրականացման գործում, սակայն անկախության հռչակագրերի իրավական գնահատականը դուրս է գալիս Գլխավոր Ասամբլեային իրավասության շրջանակներից:<sup>3</sup> Կոսովոյի կարգավիճակի հիմնախնդիրը չի հանդիսանում Գլխավոր Ասամբլեայի օրակարգի հարց այս պահին, և հետևաբար իրավական ուղղորդման կարիք չկա:<sup>4</sup>
- Որպես պետությունների ճանաչման չափանիշ միջազգային իրավունքը առաջադրում է պետության էֆեկտիվության գաղափարը, երբ Լատինական Ամերիկայի պետությունները անկախացան, ընդունված էր, որ երրորդ պետությունները կարող են ճանաչել նոր պետություններին անկախության հռչակագրից հետո, եթե նոր պետությունն արդեն գործում է (the new state is effective):<sup>5</sup>

<sup>1</sup> Written Statement of the United Kingdom, para. 1.10.

<sup>2</sup> Written Statement of the United Kingdom, para. 1.14.

<sup>3</sup> Written Statement of Albania, paras. 41-42; Written Statement of Ireland, para. 10-11.

<sup>4</sup> Written Statement of Ireland, para. 12.

<sup>5</sup> James Crawford, *The Creation of States in International Law*, 2<sup>nd</sup> ed., Oxford Univ. Press, New York, 2007 pp. 376-383, 379; *The Territorial Integrity of Quebec in the Event of the Attainment of Sovereignty*, para. 4.01 (iv), available online at:

<http://www.uni.ca/library/5experts.html> (last accessed on 15 April 2009) հղումն ըստ՝ Written Statement of Albania, paras. 43-44.

11. Չնայած նրան, որ անկախության հռչակագիրը կիրառվում է միջազգային հարաբերություններում, այնուամենայնիվ, այն հանդիսանում է ներքին ակտ և կարգավորվում է ներպետական իրավունքով, և հետևաբար ՄԱԿ-ի Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունը չի կարող քննարկել ներքին սահմանադրական ակտի իրավաչափության հիմնախնդիրները: <sup>6</sup>
12. Հաշվի առնելով նշված փաստարկները՝ Ալբանիայի կառավարությունը գտնում է, որ բարձրացված հարցը չի հանդիսանում Գլխավոր Ասամբլեայի իրավասության շրջանակների մեջ մտնող հարց համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության:<sup>7</sup>
13. Համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության հոդված 12-ի, երբ Անվտանգության խորհուրդը որևէ իրավիճակի կամ վեճի նկատմամբ իրականացնում է Կանոնադրությամբ իրեն վերապահված իր լիազորությունները, Գլխավոր Ասամբլեան իրավասու չէ այդ վեճի կամ իրադրության նկատմամբ որևէ քայլ ձեռնարկել, եթե Անվտանգության խորհուրդը նման խղնրանք չի ներկայացրել: Կոնկրետ Կոսովոյի դեպքում Անվտանգության խորհրդի բանաձև 1244-ը ընդունվել էր Կանոնադրության գլուխ VII –ի հիման վրա, որը միջազգային անվտանգության և խաղաղության պահպանման առաջնային պատասխանատվությունը դնում է Անվտանգության խորհրդի վրա: Կանոնադրության հիշատակված հոդված 12-ը հաղնսիսանում է երաշխիք այդ պատասխանատվության համար, հետևաբար, Գլխավոր Ասամբլեան իրավասու չէր նման հարց ներկայացնել Դատարանին:<sup>8</sup>
14. Անվտանգության Խորհուրդը և Գլխավոր Ասամբլեան ի տարբերության այլ նմանատիպ իրավիճակների որևէ կերպ չեն կոչ արել պետություններին ճանաչել կամ չճանաչել Կոսովոյին:
15. Իռլանդիան այն կարծիքն է, որ եթե Դատարանը որոշում կայացնի տալ խորհրդատվական եզրակացությունը, ապա այն պետք է միայն սակմանափակվի առաջըրված հարցի շրջանակներում:<sup>9</sup>
16. Իռլանդիան նաև այն կարծիքին է, որ Դատարանը խորհրդատվական եզրակացություն տալիս պետք է հետևի իր իսկ կողմից նախորդ եզրակացություններով սահմանած չափանիշներին (*Western Sahara Advisory Opinion, Construction of the Wall on the Occupied Palestinian Territory*). մասնավորապես, դատավոր Օվադայի առանձին կարծիքում նշվում է, որ երկկողմանի վեճի առկայությունը պետք է հանդիսանա հանգամանք, որը Դատարանը պետք է հաշվի առնի, երբ վերջինս որոշում է թե ինչպես, և ինչ սահմաններում է իրականացնելու իր իրավազորությունը նման խորհրդատվական եզրակացությունների դեպքում:<sup>10</sup> Դատավոր Օվադան, խոսելով Պատի կառուցման օրինականության մասին, նշում է, որ Դատարանը պետք է հաշվի առնի պատի կառուցման ընդհանուր նախապատմությունը, սակայն միևնույն ժամանակ պետք է կարողանա ապահովել համապատասխան բալանսը, որպեսզի չշեղվի հիմնական հարցից, որը դրված է Դատարանի առջև:<sup>11</sup>
17. Դատարանի առջև բարձրացված հարցը կապված չէ Կոսովոյի ներկա կամ ապագա կարգավիճակի կամ ճանաչման հարցերի հետ: Անկախության հռչակագրի

<sup>6</sup> Written Statement of Albania, para. 47.

<sup>7</sup> Written Statement of Albania, para. 47.

<sup>8</sup> Written Statement of Albania, paras. 49-51.

<sup>9</sup> Written Statement of Ireland, para. 13; Denmark WS, para. 2.1.

<sup>10</sup> Separate Opinion of Judge Owada, *Construction by Israel of a Wall in the Occupied Palestinian Territory*, Advisory Opinion of 9 July 2004, ICJ Reports 2004, 136, para. 10, հղումն ըստ Written Statement of Ireland, para. 14.

<sup>11</sup> Separate Opinion of Judge Owada, *Construction by Israel of a Wall in the Occupied Palestinian Territory*, Advisory Opinion of 9 July 2004, ICJ Reports 2004, 136, para. 27, հղումն ըստ Written Statement of Ireland, para. 15.

«օրինականության» վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունն ինքնին չի կարող որոշիչ լինել Կոստվոյի ներկա կամ ապագա կարգավիճակի համար կամ այլ պետությունների կողմից դրա ճանաչման հարցում<sup>12</sup>:

18. Դատարանի տված խորհրդատվական եզրակացությունը մեծ նշանակություն կունենա միջազգային իրավունքի սկզբունքների միջև առաջացող հակասությունները պարզելու համար, մասնավորապես քննարկվող հարցի լույսի ներքո: Դատարանը հայտարարել է, որ Դատարանի գործառույթը իրավունքի վրա հիմնված կարծիք տալն է՝ գալով եզրակացության, որ բարձրացված հարցերն ունեն պրակտիկ ու ժամանակակից նշանակություն, հետևաբար, զուրկ չեն օբյեկտից և նպատակից:<sup>13</sup>
19. Թեև բանաձև 63/3-ում շարադրված հարցը վերաբերվում է միայն Կոստվոյի անկախության վերաբերյալ միակողմանիորեն արված հռչակագրի՝ միջազգային իրավունքի հետ համապատասխանությանը, այնուամենայնիվ այն չի կարող դիտարկվել առանց հաջորդող իրավական հետևանքների: Հռչակագիրն ու այն արդյունքները, որոնք հռչակագրի հեղինակները հետապնդում էին պետք է դիտարկվեն Դատարանի կողմից միասնության մեջ:<sup>14</sup>
20. Իսպանիայի դիրքորոշման համաձայն, Միջազգային դատարանի առջև դրված հարցն իր բնույթով իրավական է և, թեև, այն ունի նաև քաղաքական ենթատեքստ, վերջինս չի կարող հիմք համարվել Դատարանի՝ իր կողմից իրավագործության չիրականացման համար:<sup>15</sup>
21. Դատարանին ուղղված հարցը չպետք է ենթարկվի սահմանափակ մեկնաբանման: Հարցադրումը պետք է քննարկվի անկախության հռչակագրի բոլոր իրավական և քաղաքական հետևանքների համատեքստում:<sup>16</sup>
22. Կոստվոյի հիմնահարցը, որքան էլ այն տարբերվի այլ իրավական խնդիրներից, պետք է լուծվի միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած նորմերի հիման վրա:<sup>17</sup>
23. Ինչպես նշվել է հենց ԳԱ-ի կողմից, վերջինիս՝ խորհրդատվական եզրակացության հայցը հիմնված է պարզապես մի շարք պետությունների ցանկության վրա և նպատակ է հետապնդում պարզապես լուսաբանելու մի շարք այլ պետությունների գործողությունների օրինականությունը: Հետևաբար հարցադրման նպատակը հանդիսանում է զուտ միջպետական վեճի կարգավորումը և չի կարող հանդիսանալ խորհրդատվական ընթացակարգի առարկա:<sup>18</sup>
24. Դատարանը չպետք է միջամտի և կարծիք հայտնի մի իրավիճակի մասին, որից ձեռնպահ են մնացել ՄԱԿ-ի այլ մարմինները, առավել ևս, որ հիմնախնդիրը նախքան անկախության հռչակագրի ընդունումը եղել է և, հետևաբար շարունակում է մնալ, ԱԽ-ի իրավագործության ներքո:<sup>19</sup>
25. Դատարանի առջև բարձրացրած հարցը չունի և ոչ մի պրակտիկ նշանակություն: Կոստվոյի պետականության հիմնախնդիրը, այն այլ պետությունների կողմից ճանաչելը և այլ հնարավոր իրավական հարցեր չեն հանդիսանում Դատարանին առաջադրված հարցի առարկան: Ինչ վերաբերվում է անկախության հռչակագրի օրինականության հիմնախնդրին, ապա այն չի կարող ունենալ որևիցե պրակտիկ ազդեցություն ընթացիկ վեճի վրա, հետևաբար հարցադրումը զուրկ է նպատակից, և այդ իսկ պատճառով

<sup>12</sup> Written Statement of Germany, para.6.

<sup>13</sup> Written Statement of Egypt, p. 23

<sup>14</sup> Written Statement of Spain, paras. 10-19.

<sup>15</sup> Oral Comments of Spain, paras. 5-10.

<sup>16</sup> Oral Comments of Spain, paras. 11-17

<sup>17</sup> Oral Comments of Spain, para. 18.

<sup>18</sup> Written Comments of France, para. 5.

<sup>19</sup> Written Comments of France, paras. 7-8.



- Դատարանը պետք է հրաժարվի իր իրավագործությունը իրականացնելուց: <sup>20</sup>
26. Պետությունների այն պնդումները, թե Կոսովոյի անկախությունը փաստի խնդիր է և կարիք չկա անդրադառնալ հռչակագրի իրավաչափությանը, անհիմն են, քանի որ, ինչպես Կիպրոսի Հանրապետությունը նշել էր իր գրավոր հայտարարությունում, «պետականության ձեռքբերումը ավելին է, քան պարզապես փաստի հարց, և որ պետականության հատկանիշները միայն փաստի բնույթ չունեն և կախված են միջազգային իրավունքից»: <sup>21</sup>

#### **IV. Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման և իրավահավասարության սկզբունքը արդի միջազգային իրավունքում**

##### ***A. Հնարավոր է արդյոք ազգերի և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի հիման վրա անջատման իրավունքի իրականացումը ապագադուրախացման համատեքստից դուրս***

#### ԱՅՈ

27. «Միջազգային իրավունքը, մասնավորապես՝ տարածքային ամբողջականության սկզբունքը չի արգելում ոչ գաղութային ժողովուրդների կողմից անկախության ձեռքբերումը»<sup>22</sup>:
28. Ինքնորոշման իրավունքը ամրագրված է իբրև բոլոր գաղութային ժողովուրդների իրավունք Գլխավոր Ասամբլեայի 1514 (XV) բանաձևով, սակայն գաղութային անկախացումներից հետո բաց մնաց ՄԱԿ-ի Կանոնադրության 11 և 12 գլուխների համատեքստից դուրս անկախ պետություններից ոչ գաղութային մասերի անջատման հնարավորությունը: 1945թ.-ից ի վեր մոտ 20 նոր պետություններ են ստեղծվել գաղութային համատեքստից դուրս, որոնցից մի քանիսը՝ անջատման ճանապարհով:<sup>23</sup>
29. Ինքնորոշումը կարող է ունենալ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին դրսևորում: Գոյություն ունի կարծիք, որ գաղութատիրական համատեքստից դուրս ինքնորոշման իրավունքը չի գործում (տվյալ դեպքում հարցը դրան չի վերաբերում). անջատման իրավունք գոյություն չունի: Այդուամենայնիվ պրակտիկայում այն իրավունք է տալիս ներքին ինքնորոշման: Որևէ խումբ միջազգային իրավունքի համապատասխան չի կարող իրականացնել ինքնորոշում: Պետության ներսում մեծամասնությունը կարող է հանգիստ և անպատիժ ճնշել փոքրամասնությանը՝ առանց այդ փոքրամասնության համար որևէ հնարավորության<sup>24</sup>:
30. Մյուս կողմից, որևէ մեկը չի պնդում, որ ցանկացած խումբ, որը կարող է մատնանշել որոշակի տարբերություն իր և մեծամասնության միջև անջատման իրավունք ունի: Նման լայն իրավունքը կվտանգեր միջազգային խաղաղությունը: Միջազգային իրավակարգի կայունության պահպանման տեսանկյունից ինքնորոշման իրավունքը պետք է իրականացվի պետության գոյություն ունեցող սահմանների ներսում, այն կարող է

<sup>20</sup> Written Comments of France, paras. 10-14.

<sup>21</sup> Written Comments of the Republic of Cyprus, para. 41. & Republic of Cyprus's First Written Statement, para. 184-191.

<sup>22</sup> Thomas Franck, Rosalyn Higgins, Allain Pallet, Malcolm Shaw Christian Tomuschat, "The Territorial integrity of Quebec in the Event of the Attainment of Sovereignty" in QUEBEC AND LESSONS LEARNED 284-285.

<sup>23</sup> Written Statement of the United Kingdom, para. 5.18-5.26.

<sup>24</sup> Written Statement of Germany, pp.33-34.

- օրինականացնել անջատումը միայն այն դեպքում, երբ դա ներքին ինքնորոշման իրավունքի իրականացման երկարաձգված մերժման դեմ միակ միջոցն է <sup>25</sup>:
31. Ազգերի ինքնորոշման իրավունքը «անառարկելի և անօտարելի է» և որպես այդպիսին ճանաչված է միջազգային հանրության կողմից: Դրա իրականացումը այդուամենայնիվ շարժունակ է և ներառում է տարաբնույթ տարրեր, որոնք հաշվի են առնում սովորության միջազգային իրավունքի այլ սկզբունքները, և պահպանում են դրանք:<sup>26</sup>
32. Միաժամանակ, ինքնորոշման իրավունքը ձևավորվելով միջազգային սովորության իրավունքի շրջանակներում, որպես պայմանագրային պարտավորություն իրավաբանորեն պարտադիր դարձավ ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ ամրագրվելուց հետո: Դրա իրականացումը, սակայն, չպետք է հանգեցնի իրավիճակների, որոնք կվտանգեն միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը:<sup>27</sup>
33. *Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory* խորհրդատվական եզրակացության մեջ Դատարանը ընդգծեց ինքնորոշման սկզբունքի չափազանց կարևորությունը և, ինչպես Ռ. Հիգինսն է նշել իր առանձին կարծիքում, առաջին անգամ պատմության մեջ ընդունեց ինքնորոշման սկզբունքը գաղութային համատեքստից դուրս:<sup>28</sup>
34. Ինքնորոշման իրավունքը բնորոշվել է որպես «անբախտելի իրավունք» (inalienable right) (1993թ. մարդու իրավունքների Համաշխարհային Համաժողովին ընդունված Վիեննայի Հռչակագիրը և գործողությունների պլանը; 1966 թ. Դաշնագրերի հոդված 1-ի մեկաբանությունը՝ ընդունված Մարդու Իրավունքների Կոմիտեի կողմից 1984թ.- Գլխավոր Մեկնաբանություն թիվ 12): *East Timor –ի* գործով Դատարանը եզրակացրեց, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի *erga omnes* բնույթը որևէ կասկած չի կարող հարուցել:<sup>29</sup>
35. *Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory* գործով վերահաստատվեց ժողովուրդների ինքնորոշման իրավունքի *erga omnes* բնույթը:<sup>30</sup> ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովը, հղում կատարելով *East Timor* գործի վրա, գտավ որ «ինքնորոշման իրավունքը հարգելու պարտականությունը» հանդիսանում է այնպիսի նորմ, որի իմպերատիվ (peremptory) բնույթը «հիմնականում ընդունված է»:<sup>31</sup>
36. Կոսովոն պնդում է, որ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը լայնորեն ճանաչված և ընդունված է ժամանակակից միջազգային իրավակարգու <sup>32</sup> և համարվում է դրա ամենաեական սկզբունքներից մեկը: Եվ այն, հակառակ Սերբիայի և մի շարք այլ պետությունների պնդմամբ, չի տարածվում միայն ապագաղութացման դեպքերի վրա, ինչը

<sup>25</sup> Written Statement of Germany, p. 34.

<sup>26</sup> Written Statement of Egypt, p. 59.

<sup>27</sup> Written Statement of Egypt, p. 76

<sup>28</sup> ICJ Reports, 2004, pp. 136, 217, paras. 88, 30 հղումն ըստ՝ Written Statement of the Kingdom of the Netherlands, para. 3.1.

<sup>29</sup> ICJ Reports 1995, p. 90, at para. 29, հղումն ըստ՝ Written Statement of the Kingdom of the Netherlands, para. 3.2; տես նաև Written Statement of Switzerland, para. 58, հիմնավորելու համար ինքնորոշման սկզբունքի հիմնարար տեղը միջազգային իրավակարգում՝ Շվեյցարիան հղում է կատարում նաև հետևյալ որոշումների վրա. *Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) Notwithstanding of the Security Council Resolution 276 (1970) Advisory Opinion*, I.C.J. Reports 1971, pp. 31-32, paras. 52-53; *Western Sahara Advisory Opinion*, I.C.J. Reports 1975, pp. 31-33, paras. 54-59.

<sup>30</sup> ICJ Reports 2004, p. 136, at para. 155, հղումն ըստ՝ Written Statement of the Kingdom of the Netherlands, para. 3.2.

<sup>31</sup> Commentary to Article 40 of the Draft Articles on Responsibility of States for Internationally Wrongful Acts, para. 5, հղումն ըստ՝ Written Statement of the Kingdom of the Netherlands, para. 3.2; տես նաև Written Statement of Poland, para. 6.13, որտեղ հղում է կատարվում հետևյալ աղբյուրներին՝ A. Cassese, *International Law*, 2<sup>nd</sup> Edition, Oxford Univ. Press 2005, pp 64-67; Commentaries to the Draft Articles on Responsibility of States for Internationally wrongful Acts, YILC, 2001, Vol.II, pp.110 *et. seq.*

<sup>32</sup> *Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 276 (1970), Advisory Opinion*, I.C.J Reports 1971, pp. 31-32, paras. 52-53; *Western Sahara, Advisory Opinion*, I.C.J Reports 1975, pp. 31-33, paras. 54-59.

փաստում են միջազգային համաձայնագրերը: Եվ քանի որ այդ իրավունքը սահմանափակված չէ միայն ապագադրության դեպքերով, սույն գործի համար կարևոր չէ, որ Կոսովոն չի համարվել խնամարկալության մանդատի ներքո գտնվող տարածք կամ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից չի ներառվել կախվածության մեջ գտնվող տարածքների շարքում:<sup>33</sup>

## ՈՉ

37. Չինաստանը պնդում է, որ նույնիսկ գաղութային դարաշրջանի ավարտից հետո ինքնորոշման սկզբունքի կիրառման շրջանակները չեն փոխվել, ինչը հիմնավորվում է ՄԱԿ-ի մի շարք հիմնարար փաստաթղթերի ընդունմամբ, օրինակ՝ 2000թ. Սեպտեմբերի 8-ին ընդունված Հազարամյակի հռչակագիրը, որը «վերահաստատում է պետությունների տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության կարևորությունը ... գաղութային լծի տակ մնացող ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, ինչպես նաև ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների հիմնարար նշանակությունը ...»<sup>34</sup>
38. Չինաստանի կառավարությունն այն կարծիքին է, որ «ինքնորոշման իրավունք» և «միակողմանի անջատում» հասկացությունները կտրականապես տարբեր են և կապ չունեն մեկը մյուսի հետ: Որպես հիմնավորում հղում է կատարվում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Գեներալ Յու. Թհանթ-ին, որը, խոսելով Կոնգոյից Կատանգայի անջատման և Նիգերիայից Բիաֆրայի անջատման մասին, 1970 թ. հունվարի 4-ին նշել է. «... ՄԱԿ-ը՝ որպես միջազգային կազմակերպություն երբեկ չի ընդունել և ես չեմ կարծում, որ երբևէ կձանաչի անդամ պետության տարածքի մի մասի անջատման իրավաչափությունը»:<sup>35</sup>

### ***B. Արդյոք Կոսովոյի միակողմանի անջատումը հակասո՞ւմ է միջազգային իրավունքին***

## ՈՉ

39. Կոսովոյի ժողովուրդը չի կարող հանդիսանալ անջատման միջոցով ինքնորոշման իրավունքի կրող, ոչ 1991-1992թթ. և ոչ էլ 1999թ.: Պետք է հիշել, որ Կոսովոյի ինքնորոշման հարցը չի ծագել 1991-1992թթ., երբ Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետությունը դադարեց գոյություն ունենալ: Ինչպես և 1991-ին, այնպես էլ 1999 թ.-ին միջազգային հանրության հիմնական նպատակը եղել է «լայն ինքնավարության», «էական ինքնակառավարման», «հատուկ կարգավիճակի» տրամադրումը: Հետևաբար, քանի որ անջատման կամ սեցեսիայի միջոցով ինքնորոշման հարցը չէր ծագել 1999թ.-ին, այն *a fortiori* չէր կարող ծագել 2008թ.-ին:<sup>36</sup>
40. Քվեբեկի գործով դատավճռում Կանադայի գերագույն դատարանը գտնում է, որ. «... երբ որևէ ժողովուրդ զրկված է իր ներքին ինքնորոշման իրավունքի ողջամիտ իրականացման

<sup>33</sup> International Covenant on Civil and Political Rights, New York, 16 December 1966, Article 1 (1), United Nations, *Treaty Series*, vol. 999, p. 171 (emphasis added); International Covenant on Economic, Social and Cultural Rights, New York, 16 December 1966, Article 1 (1), United Nations, *Treaty Series*, vol. 993, p. 3. See also World Conference on Human Rights, Vienna Declaration and Programme of Action, 25 June 1993 (A/CONF.157/23), Article I.2.

<sup>34</sup> Written Statement of the People's Republic of China, p. 5.

<sup>35</sup> UN Monthly Chronicle, United Nations Office of Public Information, Volume VII, Number 2, February 1970, p.36, հղումն ըստ Written Statement of the People's Republic of China, pp. 6-7.

<sup>36</sup> Russian Federation Written Statement, para.

հնարավորությունից, իրավունք ունի, որպես վերջին միջոց, իրականացնելու ինքնորոշման իրավունքը անջատման միջոցով»<sup>37</sup>:

41. Անջատումը ենթադրում է պետության տարածքի մի մասի միակողմանի, ոչ կոնսենսուալ անջատում՝ նոր պետություն հիմնելու նպատակով: Միջազգային իրավունքը *per se* չի պարունակում որևէ նորմ, որը կարգելի անջատումը: Օրինակ, 1776 թ. հուլիսի 4-ի անկախության հռչակագիրը համարվում էր դավաճանության ակտ Բրիտանական իրավունքի տեսանկյունից, սակայն միջազգային իրավունքի համաձայն չկար որևէ արգելք:<sup>38</sup>
42. Կանադայի Գերագույն դատարանը *Quebec Secession Reference* գործում հղում կատարելով 2625(XXV) Միջազգային իրավունքի սկզբունքների մասին Հռչակագրի և 1993 թ. Վիեննայի Հռչակագրի վրա նշել է.

[Բ]ազմաթիվ տեսաբաններ նշել են, որ ինքնորոշման իրավունքը կարող է հիմք հանդիսանալ միակողմանի անջատման համար երրորդ իրավիճակում: Չնայած որ այդ երրորդ իրավիճակը բնութագրվել է մի քանի եղանակներով, այնուամենայնիվ հիմնարար դրույթն այն է, որ երբ ժողովուրդը (people) գրկվում է իր ինքնորոշման իրավունքը ներքին մակարդակում ներկայացուցչական ճանապարհով իրացնելուց, ապա այդ ժողովուրդն իրավասու, որպես վերջին միջոց, է այդ իրավունքը իրականացնել անջատման ձևով...<sup>39</sup>

43. Միջազգային իրավունքին հայտնի են **անջատման անօրինական դեպքեր**, երբ ոչ իրավաչափությունը և դրա հետևանքով հետագա չճանաչումը, հիմնված են եղել կոնկրետ իրադրությունը որպես ծանր գնահատելու և միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնալիք հանդիսանալու հանգամանքների հիման վրա: Ոչ իրավաչափ անջատման օրինակներ են՝ Կատանգան (Կոնգո), Հարավային Ռոդեզիան, Հարավ Աֆրիկյան Բանտուստանս, Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը :<sup>40</sup>
44. Սերբիան մերժում է «Կոսովոյի տարածքի» ինքնորոշման իրավունքը, մինչդեռ ինքնորոշման իրավունքը տարածքի իրավունք չէ, այլ տվյալ տարածքում բնակվող ժողովրդի իրավունք. կարևոր գործոն, որ Սերբիան անտեսում էր 1990-կաններին և անտեսում է այսօր: Սերբիայի վերաբերմունքը Կոսովոյի նկատմամբ միայն որպես տարածք է՝ առանց բնակիչների որևէ իրավունքների և շահերի:
45. Սերբիայի նման գործողությունների արդյունքում էր, որ Կոսովոյում ստեղծվել էր հումանիտար ճգնաժամ, ինչի մասին փաստվել է նաև դատական որոշումներում [*Prosecutor v. Milan Milutinović, Nikola Šainović, Dragoljub Ojdanić, Nebojša Pavković, Vladimir Lazarević, Sreten Lukić (IT-05-87-T), Judgement, 26 February 2009*] և Գլխավոր ասամբլեայի բանաձևերում: Այդ ամբողջը խոսում է այն փաստի օգտին, որ Կոսովոյի ժողովուրդը գրկված են եղել իրեն պատկանող ինքնորոշման իրավունքի որևէ ձևի իրականացումից և ՀՄԴՀ/ՀԴՀ քաղաքական գործընթացներին մասնակցելու իրավունքից: Կոսովոյի ժողովրդի նկատմամբ կիրառված մարդու իրավունքների լայնածավալ խախտումները, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, էթնիկ զտումները, զանգվածային

<sup>37</sup> See *Reference re Secession of Quebec*, [1998] 2 S.C.R. 217, para. 134, հղումն ըստ՝ Written Statement of Estonia, p 4.

<sup>38</sup> Written Statement of the United Kingdom, para. 5.13.

<sup>39</sup> *Reference Re Secession of Quebec*, [1998] 2 S.C.R. 217, paras. 134-135, հղումն ըստ՝ Written Statement of the United Kingdom para. 5.32.

<sup>40</sup> Written Statement of the United Kingdom, paras. 5.34-5.50.

փախստականների ճգնաժամը և մնացյալ դեպքերը, որոնք Անվտանգության Խորհրդի կողմից որակվել են որպես խաղաղությանն ուղղված սպառնալիք, և հանգեցրել են միջազգային միջամտության, իրավունք են տվել Կոսովոյին ազատորեն սահմանել իր քաղաքական կարգավիճակը և հռչակել անկախությունն դրանց մեջ մեղավոր պետությունից<sup>41</sup>:

### **ԱՅՈ**

46. Ռումինիայի Հանրապետության պնդմամբ Կոսովոյի նկատմամբ Սերբիայի ինքնիշխանությունը տարածվել է ամբողջ ժամանակաընթացքում, այդ թվում նաև անկախության հռչակման ժամանակ, և միայն այն հանգամանքը, որ Կոսովոյի կառավարումը հանձնվել է ժամանակավոր վարչակազմին 1244 բանաձևով չի նշանակում, որ դրա հետ միասին ՄԱԿ-ի միջազգային հանրությանն է անցել նաև ինքնիշխանությունը<sup>42</sup>: Եվ Սերբիան ոչ մի անգամ չի հրաժարվել իր այդ իրավունքից: Այս հանգամանքների հիման վրա Կոսովոյում պետության հիմնումը կարող էր միայն լինել միջազգային իրավունքում պետությունների ստեղծման ընդհանուր ձևերից դուրս՝ միակողմանի անջատման միջոցով:<sup>43</sup>
47. Հիմնվելով Քվեբեկի գործի վրա և մասնավորապես՝ դրա այն պնդմանը, որ «միջազգային իրավունքը չի պարունակում միակողմանի անջատման իրավունք և ոչ էլ նման իրավունքի որևէ ակնհատ մերժում» և որ «միջազգային իրավունքը մեծապես կարևորում է ազգային պետությունների տարածքային ամբողջականությունը և, մեծապես, նոր պետությունների ստեղծման որոշումը թողնում է ներքին օրոնսդրությանը»<sup>44</sup>, Ռումինիան ընդգծում է, որ Կոսովոյի միակողմանի անջատումը թույլատրված չէ Սերբիայի ներքին օրենսդրությամբ<sup>45</sup>, և Դատարանի առջև բարձրացրած խնդիրը Կոսովոյի օգտին կարող է լուծվել միայն այն դեպքում, եթե ապացուցվի, որ Կոսովոն հանդիսանում է ինքնորոշման իրավունքի սուբյեկտ:
48. Սերբիան նշում է, որ նույնիսկ Գաղութային երկրներին անկախության տրամադրման մասին Հռչակագրի 6-րդ կետն ամրագրում է Պետությունների ազգային միասնականության և տարածքային ամբողջականության մասնակի կամ արողջական պառակտման յուրաքանչյուր փորձ անհամատեղելի է ՄԱԿ-ի Կանոնադրության նպատակների և սկզբունքների հետ<sup>46</sup>:
49. Անդրադառնալով միջազգային պրակտիկային, Սերբիան հղում է *uti possidetis juris* սկզբունքի վրա, որը լայնորեն կիրառվել է Հարավսլավիայի փլուզման արդյունքում առաջացած պետությունների ճանաչման գործընթացում «Բատինդերի Հանձնաժողովի» կողմից: Վերոնշյալ սկզբունքը Սերբիան հասկանում է որպես անկախության պահին և/կամ իրավահաջորդությամբ ձևավորված սահմանների փոփոխության անթույլատրելիություն և անընդունելիություն: Այս համատեքստում նշվում է, որ Կոսովոյի անկախության միակողմանի հռչակումը և անջատումը խախտում է Սերբիայի միջազգայնորեն ճանաչված սահմանները և *uti possidetis juris* սկզբունքը<sup>47</sup>:
50. Վկայակոչվում է նաև Կանադայի Գերագույն Դատարանի կողմից *Re Secession of Quebec* գործը, որտեղ Դատարանը ինքնորոշման իրավունքի իրականացումը դիտարկում է

<sup>41</sup> Written Comments of Kosovo, para. 4.48.

<sup>42</sup> Written Statement of Romania, para. 110.

<sup>43</sup> Written Statement of Romania, para. 111.

<sup>44</sup> Reference re Secession of Quebec, Supreme Court of Canada, 1998, para. 112.

<sup>45</sup> Written Statement of Romania, para. 116.

<sup>46</sup> Written Statement of Serbia, para. 559, pp. 203-204.

<sup>47</sup> Written Statement of Serbia, para. 564, pp. 205-206.

բացառապես ինքնիշխան պետության տարածքային ամբողջականության շրջանակներում<sup>48</sup>: Սերբիան հղում է կատարում նաև հանրաճանաչ գիտնականների աշխատություններին: Մասնավորապես վկայակոչվում է Քրոուֆորդը, ըստ որի՝ «սկսած 1945թ. միջազգային հանրությունը խստորեն խուսափում է ընդունել անկախ պետությունների մասերի միակողմանի անջատումը, եթե տվյալ պետությունների կառավարությունները ընդհանում են անջատմանը: Սկսած 1945թ., միակողմանի անջատմամբ ստեղծված որևիցե պետություն չի ընդունվել ՄԱԿ՝ ի հակառակ այն պետության կամքի որից անջատվում է: Գաղութատիրական համակարգի փլուզումից հետո, պետությունները խուսափում են ընդունել միակողմանի անջատումը անկախ պետություններից, և հետևաբար ներկա պայմաններում ինքնորոշման իրավունքի իրագործումը անջատման եղանակով այլ պատկեր ունի»<sup>49</sup>:

### ***C. Արդյոք Կոսովոն հանդիսանո՞ւմ է ինքնորոշման իրավունքի սուբեկտ***

#### **ՈՉ**

51. Հիմնահարցի ողջ ընթացքում, ընդհուպ մինչև 2008 թ.-ը Կոսովոն շարունակել է գտնվել միջազգային հանրությունից զգալի կախվածության մեջ, մասնավորապես՝ ուժային կառուցներից, UNMIK և KFOR –ը քանակով գերազանցում էին ոստիկանությանը և Կոսովական պաշտպանական ուժերին, տեղական հարկային եկամուտները անհամեմատ ավելի քիչ էին քան միջազգային ներկայացվածության բյուջեն, որը *inter alia* կարող է առաջացնել պետության հատկանիշների հարց:<sup>50</sup>
52. Արգենտինան նաև նշում է, որ ժամանակակից միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքը՝ ինքնորոշման իրավունքը կիրառելի չէ գոյություն ունեցող իրավիճակում, կամ այլ խոսքերով Կոսովոյի բնակիչները ինքնորոշման իրավունք ունեցող ժողովուրդ չեն, իսկ միջազգային իրավունքի տեսանկյունից միայն ժողովուրդներն են օժտված ինքնորոշման իրավունքով: ՄԱԿ-ի հիմնական մարմինները՝ Գլխավոր Ասամբլեան, Խնամակալության խորհուրդը և Ապագադուրայնացման հանձնաժողովը բազմիցս անդադարձ են կատարել կոնրետ խումբը որպես «ժողովուրդ» և հետևաբար որպես ինքնորոշման իրավունքի կրող դիտարկելու համար:<sup>51</sup> Նույնիսկ ապագադուրայնացման համատեքստում ինքնորոշման սկզբունքի չի կիրառվել բոլոր իրավիճակների նկատմամբ: ՄԱԿ-ը մշակել էր որոշակի չափանիշներ, որոնք ներառում էին նաև ինքնորոշման սկզբունքի կիրառման չափորոշիչներ, որոնց հիման վրա որ ինքնորոշման սկզբունքը չի կիրառվել որոշ ոչ ինքնակառավարվող տարածքների բնակիչների նկատմամբ:<sup>52</sup>
53. Նման չափանիշների կիրառումը հայտնի է ՄԱԿ-ի Դատարանի իրավագործությանը. այսպես, 2004 թ. Խորհրդատվական եզրակացության մեջ Դատարանը նշում է. «ինչ վերաբերում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը սահմանող սկզբունքին, ապա

<sup>48</sup> Written Statement of Serbia, p. 206.

<sup>49</sup> Written Statement of Serbia, paras. 567, 568, p. 207.

<sup>50</sup> Russian Federation Statement, paras. 70-73.

<sup>51</sup> Խոսքը գնում է նախկին Պորտուգալական գաղութների, Հարավային Աֆրիկայի, Նամիբիայի և Պաղեստինի մասին, Written Comments of Argentina, paras. 87-100.

<sup>52</sup> Case of Ifni (GA Resolution 2428 (XXIII) of 18 December 1968), Gibraltari (GA Resolution December 1965 and 3160 (XXVIII) of 14 December 1973 among others. See also the amendment draft to the text that became Resolution 40/21 of 27 November 1985, rejected by the General Assembly (Doc. A/40/L.20 of 22 November 1985) հղումն ըստ՝ Written Comments of Argentina, para. 91.

Դատարանը գտնում է, որ Պաղեստինյան ժողովրդի գոյությունն այլևս քննարկման ենթական չէ»:<sup>53</sup>

54. 1999թ. Ռամբույեի Համաձայնագրերում պարունակվում էր դրույթ, որը հղում էր կատարում «ժողովրդի կամք» հասկացության, սակայն այդ հիշատակումը որևէ կերպ չի կարող նշանակել իրավական իմաստով որպես ժողովուրդ ճանաչելը: Չկա որևէ հղում ժողովուրդների ինքնորոշման սկզբունքին, իսկ «ժողովրդի կամքը» պետք է հաշվի առնվի այլ հանգամանքների հետ մեկտեղ:<sup>54</sup>
55. Կիպրոսի Հանրապետությունը պնդում է, որ Կոսովոյի ժողովուրդը չունի արտաքին ինքնորոշման իրավունք: Ինքնորոշման իրավունքի սուբյեկտ, ապագադուրայնացման համատեքստից դուրս, հանդիսանում են միայն ժողովուրդները (peoples): «Պետության ներսում ժողովուրդների կամ խմբերի ինքնորոշումը պետք է իրագործվի սահամադրական համակարգի շրջանակներում և տարածքային ամբողջականության հարգմամբ»:<sup>55</sup>
56. Կիպրոսի Հանրապետությունն այն կարծիքին է, որ ոչ Կոսովոյի բնակչությունը (որը բաղկացած է ոչ միայն էթնիկ Ալբանացիներից) և ոչ էլ Սերբիայի ալբանացիները չեն հանդիսանում «ժողովուրդ» արտաքին ինքնորոշման իրավունքի տեսանկյունից:<sup>56</sup>
57. Ավելին, Կոսովոյի ալբանացիները և Սերբայում բնակվող ալբանացիները հանդիսանում են ազգային փոքրամասնություն, և հետևաբար ունեն այն բոլոր իրավունքները որոնք նախատեսված են պետության ներսում բնակվող ազգային փոքրամասնությունների համար:<sup>57</sup>
58. Օգտագործելով դոկտրինալ աղբյուրները, մասնավորապես՝ Քրոֆորդի աշխատությունները<sup>58</sup>՝ Ռումինիան մերժում է Կոսովոյի՝ որպես ինքնորոշման իրավունքի սուբյեկտ լինելը: Համաձայն այդ մոտեցման՝ այդ սկզբունքը տարածվում է այն միավորների և հատկապես մանդատավորված, խնամարկյալության կամ ոչ ինքնակառավարվող տարածքների վրա, ում ինքնորոշման իրավունքը հաստատված է միջազգային իրավունքով: Երկրորդ. այն կիրառվում է գոյություն ունեցող պետությունների վրա: Այս դեպքում այս սկզբունքը ստանում է ներքին գործերին չմիջամտելու ձև, երբ ժողովուրդն ինքն է որոշում իր կառավարման ձևը և իրականացնում այլ իրավունքներ<sup>59</sup>:
59. Կոսովոն չի հանդիսանում, ըստ Ռումինիայի, ինքնորոշման իրավունքի սուբյեկտ, քանի որ՝
- a. գոյություն չի ունեցել որևէ միջազգային համաձայնագիր, որով Կոսովոն կստանար նման իրավունք;
  - b. անկախության հռչակման պահին Կոսովոյի բնակիչները հնարավորություն ունեին իրականացնելու իրենց ինքնորոշման իրավունքը Սերբիայի տարածքում,
  - c. նման իրավունք և հնարավորություն ամբողջությամբ ապահովված է եղել Սերբիայի իշխանությունների կողմից;
  - d. Սերբիան ունի Կոսովոյի բնակիչների իրավունքների պաշտպանության պարտավորություն: Ընդհանուր կանոնից հնարավոր բացառությունն այն է, որ

<sup>53</sup> Legal Consequences of the Construction of the Wall in Occupied Palestinian Territory, Advisory Opinion, I.C.J. Reports 2004, pp. 182-183, para.118 հղումն ըստ՝ Written Comments of Argentina para. 91.

<sup>54</sup> Written Comments of Argentina, para. 99.

<sup>55</sup> Crawford J., Creation of States in International Law (2<sup>nd</sup> ed, 2006), p. 417, հղումն ըստ՝ Written Statement of the Republic of Cyprus, para. 135.

<sup>56</sup> Bing Bing Jia, The Independence of Kosovo: A Unique Case of Secession” 8 Chinese Journal of International Law (2009) p. 27 at pp. 31-37, հղումն ըստ Written Statement of the Republic of Cyprus, para. 135, p. 35.

<sup>57</sup> Written Statement of the Republic of Cyprus, para. 139.

<sup>58</sup> James Crawford, The Creation of States in International Law, Second Edition, Clarendon Press, Oxford, 2006, p. 126.

<sup>59</sup> Written Statement of Romania, para. 110.

առկա իշխանությունների կողմից այդ իրավունքի իրականացումը մերժվի և մարդկանց այդ կոնկրետ խումբը ենթարկվի խտրական վերաբերմունքի: <sup>60</sup>

60. Միջազգային իրավունքում ու միջազգային պրակտիկայում բոլոր պետությունները պարտավոր են հարգել և հետևել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 27-րդ հոդվածում ամրագրված՝ փոքրամասնությունների իրավունքները: Բայց այս պարտականությունը ոչ մի կերպ չի հակասում տարածքային ամբողջականության սկզբունքին: Միջազգային իրավունքը չի ճանաչում միակողմանի անջատման իրավունք փոքրամասնությունների կողմից: <sup>61</sup>
61. Իրանի Իսլամական Հանրապետությունը հղում է կատարում Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 23 մեկնաբանության վրա, որտեղ հստակ տարբերություն է դրվում ինքնորոշման իրավունքի և փոքրամասնությունների իրավունքների միջև: Համաձայն այդ մեկնաբանման, ինքնորոշման իրավունքը կիրառելի չէ պետության ներսում բնակվող ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Թիվ 23 մեկնաբանման համաձայն, Մարդու իրավունքների կոմիտեին հասցեագրված մի շարք դիմումներում հոդված 27-ով երաշխավորվող իրավունքը հաճախ շփոթվում է Դաշնագրի հոդված 1-ով երաշխավորված ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հետ: Պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքի անտեսումը Դատարանի կողմից կխրախուսի պառակտողական խմբերին բռնի գործողություններ ձեռնարկել՝ այդպիսով դրդելով իշխանություններին պատասխան բռնության դիմել՝ մարդասիրական իրավունքի խախտումներ առաջացնելու, իսկ հետո դրանից օգուտ քաղելու նպատակով: Բռնությունների այս արատավոր շղթան ոչ միայն կվտանգի պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը, այլև կսպառնա միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը: <sup>62</sup>
62. Հասկանալի է, որ Սերբիան, սահմանափակելով ինքնորոշման իրավունքի սուբյեկտների կազմը ՄԱԿ-ի կողմից ճանաչված ինքնակառավարում չունեցող, գաղութային, հատուկ մանդատի և խնամակալության տակ գտնվող տարածքներով, նշում է, որ Կոսովոյի ալբանական բնակչությունը չի հանդիսանում արտաքին ինքնորոշման իրավունքով օժտված միավոր, քանի դեռ դրա մասով ճանաչված չէ վերոգրյալ կարգավիճակներից որևէ մեկը <sup>63</sup>: Ուստի, Կոսովոն, մնալով ՀԴՀ-ի բաղկացուցիչ մաս, շարունակում է այդպիսին լինել անկախ Սերբիայի Հանրապետությունում, իսկ Կոսովայի բնակչությունը, լինելով ազգային փոքրամասնություն մի մաս՝ հանդիսանում է Սերբիայի ժողովրդի բաղկացուցիչ մասնիկը: <sup>64</sup>

## ԱՅՈ

63. Սերբիան մերժում է «Կոսովոյի տարածքի» <sup>65</sup> ինքնորոշման իրավունքը, մինչդեռ ինքնորոշման իրավունքը տարածքի իրավունք չէ, այլ տվյալ տարածքում բնակվող ժողովրդի իրավունք, կարևոր գործոն, որ Սերբիան անտեսում էր 1990-կաններին և

<sup>60</sup> Written Statement of Romania, para. 131.

<sup>61</sup> Written Statement of Iran, para. 5.3, p. 9.

<sup>62</sup> General Comment No. 23: The rights of minorities, Art. 27, 08/04/94, CCPR/C/21/Rev. 1/Add. 5, General Comment No. 23 հղումն ըստ Written Statement of Iran, para. 5.3, p. 9; այս մասին տես նաև Written Statement of Slovakia, paras. 14-17.

<sup>63</sup> Written Statement of Serbia, para. 571, p. 208.

<sup>64</sup> *Ibidem*, para 572

<sup>65</sup> *Serbia*, para. 570.



անտեսում է այսօր: Սերբիայի վերաբերմունքը Կոսովոյի նկատմամբ միայն որպես տարածք է՝ առանց բնակիչների որևէ իրավունքների և շահերի:<sup>66</sup>

64. Անվտանգության խորհրդի 1244 և այլ բանաձևերը խոսում են «Կոսովոյի ժողովրդի» կամ «ժողովրդի իրավունքի» մասին: Այն 1244 բանաձևն ինքը կարող է համարվել որպես Կոսովոյի ինքնորոշման իրավունքը հաստատող փաստաթուղթ. տարածքի միջազգային վարչակազմը ստեղծվել էր ոչ միայն նրա համար, որ բացառի ՀԴՀ/Սերբիային Կոսովոյի կառավարումից, այլ նաև և ամենաշատը նրա համար, որ ստեղծի հարմար պայմաններ Կոսովոյի ժողովրդի համար ինքնորոշման իրավունքը իրականացնելու համար՝ առանց կանխատեսելու, թե կարգավիճակի վերջնական լուծումը կստանա ներքին, թե արտաքին ինքնորոշման տեսք:<sup>67</sup>
65. Էստոնիան պնդում է, որ ինքնորոշման իրավունքի կրողներն են նաև փոքրամասնությունները:<sup>68</sup>
66. Որևէ կասկած չի կարող լինել, որ Հռչակագիրը ստորագրողները և ընդունողները դա իրականացրել են ոչ թե որպես Ինքնակառավարման ժամանակավոր կառույցներ, այլ որպես Կոսովոյի բնակչության ներկայացուցիչներ և նրանց կամքի իրականացնողներ:<sup>69</sup>

***D. Վերականգնողական (հատուցողական) անջատում (remedial secession). արդյոք մարդու իրավունքների սիստեմատիկ խախտումները և ռասայական խտրականությունը կարո՞ղ են իրավական հիմք հանդիսանալ միակողմանի անջատման համար***

67. Իռլանդիան գտնում է, որ չի կարող գոյություն ունենալ անջատման իրավունք այն դեպքում, երբ առկա է ներկայացուցչական կառավարություն համակատասխան պետության ներսում:<sup>70</sup>
68. Իրավաբանների միջազգային կոմիտեն, 1920-1921 թթ. Աալանդյան կղզիների արբիտրաժային որոշման մեջ ընդգծել է *carence de souveraineté* սկզբունքի կարևորությունը, համաձայն որի, այն պարագայում երբ որևէ տարածք «թերիկառավարվում է պետության կողմից, ապա այդ տարածքը անջատվելու իրավունք ունի»<sup>71</sup>:
69. Ըստ Լեհաստանի անհրաժեշտ է տարբերակել անջատման սկզբնական և վերականգնողական (remedial) ձևերը: Վերականգնողական ձևը (remedial) հիմնված է այն նախադրյալի վրա, որ պետությունը լրջորեն խախտում է մարդու իրավունքներն ու մարդասիրական իրավունքը իր տարածքի բնակիչների նկատմամբ: Այդ խախտումների շարքին են դասվում, *inter alia*, ցեղասպանությունը, պատերազմական հանցագործությունները, մարդու իրավունքների ու մարդասիրական իրավունքի այլ լուրջ խախտումները: Լեհաստանն այս պնդումը հիմնավորելու նպատակով հղում է կատարում Կանադայի Գերագույն դատարանի *In re Secession of Quebec* գործով կայացրած որոշման վրա: Այդպիսով, վերականգնողական (remedial) անջատումը քննարկման առարկա

<sup>66</sup> Written Comments of Kosovo, para. 4.42.

<sup>67</sup> Written Comments of Kosovo, para. 4.45.

<sup>68</sup> See K. Doering, Self-determination, in B. Simma (ed), The Charter of the United Nations. A commentary, Vol I, 2nd edition, 2002, p. 55, հղումն ըստ՝ Written Comments of Estonia, p 5.

<sup>69</sup> Written Statement of Germany, para. 7.

<sup>70</sup> Rosalyn Higgins, Problems and Process: *International Law and How We Use It (1994)*, at 115, հղումն ըստ Written Statement of Ireland, para. 28-29.

<sup>71</sup> Ana Filipa Vrdoljak “Self-Determination and Cultural Rights” in F. Francioni and M. Scheinin (Eds.), *Cultural Human Rights (2008)*, at 46, հղումն ըստ Written Statement of Ireland para. 29.

- կղաճառ միայն ծայրահեղ դեպքում, երբ անհրաժեշտ կլինի տարածքի բնակիչներին պաշտպանել պետության հակաիրավական գործողություններից:<sup>72</sup>
70. Նիդեռլանդների Թագավորությունը գտնում է, որ արտաքին ինքնորոշման իրավունքը հնարավոր է իրագործել, եթե առկա է **ա**. Ինքնորոշման իրավունքը հարգելու և երաշխավորելու պարտականության կամ **բ**. Ժողովրդին այդ իրավունքից զրկելու որևէ քայլից ձեռնպահ մնալու պարտականության «կոպիտ խախտում»:<sup>73</sup>
71. Առկա է ինքնորոշման իրավունքը հարգելու և երաշխավորելու պարտականության խախտում, երբ **ա**. Խախտվում են հիմնարար իրավունքները կամ **բ**. առկա է կառավարություն, որը չի ներկայացնում տվյալ տարածքում գտնվող ամբողջ ժողովրդին: ՄԱՆ-ի ԳԱ բանաձև 2625-ը սահմանում է, որ մարդու հիմնարար իրավունքների անտեսումը «հանդիսանում է ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի խախտում»: Այն ամրագրում է նաև, որ պետությունը գործում է ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքին համապատասխան միայն այն դեպքում, եթե այդ պետության կառավարությունը ներկայացնում է պետական տարածքում բնակվող ամբողջ ժողովրդին:<sup>74</sup>
72. Նիդեռլանդները գտնում է, որ Հարավսլավիական և Սերբական իշխանությունները աստիճանաբար վերացրեցին Կոսովոյի ինքնավարությունը՝ զրկելով Կոսովոյի ժողովրդին՝ իր շահերը ներկայացնելու հնարավորությունից: Իսկ վերջինիս արդյունք հանդիսացավ այն, որ խախտվեց Կոսովոյի ժողովրդի ինքնորոշման իրավունքը հարգելու պարտականությունը: Այս խախտում կրում էր պարբերական բնույթ. Սահմանադրական կարգի փոփոխությունը, խտրական օրենքների և քաղաքականության ընդունումը և կիրառումը վկայում էին այն մասին, որ այն իրագործվում էր կազմակերպված եղանակով: Ավելին, Կոսովոյի ժողովրդի մարդու հիմնարար իրավունքները սիստեմատիկ կերպով խախտելը փաստվում է ICTY-ի որոշումներով: Այս ամենը հիմք է տալիս եզրակացնելու, որ Կոսովոյի ժողովուրդն ունի արտաքին ինքնորոշման իրավունք:<sup>75</sup>
73. Սերբիան ճնշում էր Կոսովոյի ալբանացիների քաղաքական և մշակութային իրավունքները, օտարում ալբանացիներին ղեկավար պաշտոններից, փակում ալբանական դպրոցները, երթևեկության նշանները փոխում սերբական այբուբենի: Այս բոլորի նպատակը Կոսովոյի ինքնավար կարգավիճակի վերացումն էր:<sup>76</sup>
74. Քվեբեկի գործով Կանադայի Գերագույն դատարանը «հռչակում է արտաքին ինքնորոշման իրավունքը (անկախություն) այն դեպքերում (...), երբ համապատասխան խմբին անողջամիտ մերժվում է մուտքը կառավարություն՝ իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը իրականացնելու համար» ապա Կոսովոյի ժողովուրդը, համաձայն այդ իրավունքի, իրավագործված էր անկախության հռչակագիրը հռչակելու իրավունքով:<sup>77</sup>
75. Սերբիան պարբերաբար փաստում է, որ նման իրավունքը «պատժում» է կոնկրետ պետությանը, և որ միջազգային պատասխանատվության իրավունքը թույլ չի տալիս նման սանկցիա: Թեպետ դա չի կարող բխի միջազգային հանրության շահերից, որպեսզի առաջարկի միայն կոմպենսացի գոյություն ունեցող կառավարությանը, որպեսզի վերջինս

<sup>72</sup> A. Buchanan, *Justice, Legitimacy and Self-determination: Moral Foundations for International Law*. Oxford Univ. Press 2004, p. 271; J. Crawford, *The Creation of States in International Law*, Second Ed., Oxford Univ. Press 2006, pp. 119-128, հղումն ըստ՝ Written Statement of Poland, paras. 6.4, 6.5., 6.7.

<sup>73</sup> Written Statement of the Kingdom of the Netherlands, para. 3.9.

<sup>74</sup> Written Statement of the Kingdom of the Netherlands, paras. 3.9, 3.10.

<sup>75</sup> Written Statement of the Kingdom of the Netherlands, paras. 3.11- 3.21.

<sup>76</sup> Written Statement of Kosovo, para, 8.23.

<sup>77</sup> *Secession of Quebec*, [1998] 2 S.C.R. 217 (Can.), para. 138, reprinted in I.L.M., vol. 37, 1998, p. 1340

«ավելի լավ» գործի, երբ իրականում տեղի են ունենում մարդու իրավունքների զանգվածային խախտումներ, և մերժվում է ժողովրդի իրավունքը՝ մասնակցել իր ճակատագրի որոշմանը:

76. «Ժամանակակից միջազգային իրավունքը ժողովուրդների իրավունք է, որ պաշտպանում է ժողովուրդներին, մարդկային արարածներին հատկապես այն դեպքերում, երբ պետությանը չի հաջողվում դա անել: Նման հանգամանքներում իրավախախտ պետությունը պետք է կրի իր գործողությունների հետևանքները. այլ կերպ՝ ոչ թե պատիժ, այլ մարդու հիմնական իրավունքների անհրաժեշտ զուգորդություն<sup>78</sup>:
77. Անկասկած, մարդու իրավունքների լայնածավալ և կազմակերպված խախտումները, ինչպես նաև ճնշումների քաղաքականությունները, ինչպես դա տեղի է ունեցել Կոսովար Ալբանացիների հանդեպ 1989-1999 թթ., միանշանակ խախտում են մարդու արժանապատիվ գոյության նվազագույն չափորոշիչները: Հետևաբար և Կոսովոյի անկախության հռչակագրի իրավաչափությունը ևս մեկ անգամ հիմնավորվում է նաև տարիների ընթացքում Կոսովար ալբանացիների ճնշման և նրանց սոցիալ-մշակութային կյանքին մասնակցելու հնարավորությունից զրկելու փաստերով, որը 1998-1999 թթ.-ին հասավ իր կուլմինացիային՝ էթնիկ զտման:<sup>79</sup>
78. Ե՛վ ՄԱԿ-ի Դատարանը, և՛ Գլխավոր Ասամբլեան, և Անվտանգության խորհուրդը բազմիցս հիշատակել են ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը հարգելու պետության պարտականությունը:<sup>80</sup>
79. Այդուամենայնիվ ընդունված է, որ արտաքին ինքնորոշումը՝ անջատման ձևով, թույլատրելի է երկու նախապայմաններում. Առաջինը. պետության ներսում բնակվող խմբի ներքին ինքնորոշման կոպիտ և երկարաժամկետ մերժումն է: Սա նույնական չէ, սակայն համահունչ է մարդու իրավունքների կոպիտ խախտումներին, իրավունքների, ինչպիսիք են կյանքի իրավունքը, ազատության իրավունքը, սակայն նաև հավաքների և միավորման ազատությունները: Ներքին ինքնորոշման իրականացման մերժման փաստարկների համար խորհրդանշական են քաղաքական ընդդիմության երթերն արգելելը, կամայական ձեռքակալություններն և կալանավորումները, խոշտանգումներն ու նվաստացումները (վատ վերաբերմունքը):
80. Երկրորդ նախապայմանն է առաջացած կոնֆլիկտի լուծման ցանկացած այլ միջոցների բացակայությունը: Ենթադրվում է, որ արտաքին ինքնորոշումը ներքին ինքնորոշման հետևողական ժխտման պայմաններում որպես *ultima ratio* կիրառվող միակ միջոցն է: Դա նշանակում է, որ ստեղծված իրավիճակի կարգավորման այլ եղանակները սպառված են: Այլ եղանակները ենթադրում են բանակցությունները, համապատասխան միջազգային կազմակերպություններին և մարմիններին դիմելը, ինչպիսին է, օրինակ ՄԱԿ-ը:<sup>81</sup>
81. Ռումինիան շեշտադրում է կատարում, որ հատուցողական անջատումը կարող է տեղի ունենալ՝ որպես ընդհանուր կանոնից բացառություն, եթե միայն՝
  - a. Անկախության միակողմանիորեն հռչակման ժամանակ Կոսովոյի բնակչությունը գտնվել է մարդու իրավունքների լայնածավալ խախտումների ներքո և
  - b. Կոսովոն որևէ այլ հնարավորություն չի ունեցել Մերքիայի կազմում ներքին ինքնորոշման իրավունքն իրականացնելու համար:

<sup>78</sup> Written Comments of Kosovo, para 4.41.

<sup>79</sup> Written Statement of Albania, para. 79.

<sup>80</sup> Written Statement of Albania, para. 80.

<sup>81</sup> Written Statement of Germany, pp.34-36; տե՛ս նաև Written Statement of Poland, para. 6.15; Written Statement of Switzerland, paras. 66-69.

82. Այս պահանջներից ոչ մեկը բավարարված չեն եղել անկախության հռչակման ժամանակ: Հռչակման ժամանակ Կոսովոն գտնվել է ՄԱԿ-ի վերահսկողության ներքո և բացի այդ անգամ 1999թ-ին ռազմական իրադարձությունների ժամանակ արտաքին ինքնորոշումը չի դիտարկվել որպես միակ և վերջի հնարավորությունը և ավելի ընդունվել է 1244 բանաձևը, ինչն ամրագրել է Սերբիայի տարածքային ամբողջականությունը<sup>82</sup>:
83. Սերբիայի ժամանակակից իրավական համակարգը, մասնավորապես՝ Սահմանադրությունը երաշխավորում են իրավունքի գերակայությունը և իրավունքների պաշտպանությունը: <sup>83</sup>
84. Որոշ դեպքերում, ինքնորոշման սկզբունքը կարող է բացառության կարգով լեգիտիմացնել անջատումը: Սա կլինի այն դեպքում, եթե անջատումը հանդիսանում է (1) միակ միջոցը ներքին ինքնորոշման երկար ու կոշտ մերժման դեմ<sup>84</sup>, (2) չկա իրավիճակին լուծում տալու որևէ այլ հնարավորություն<sup>85</sup>: Չանգվածային խախտումները ամրագրված են բազմաթիվ միջազգային փաստաթղթերում. ԵԱՀԽ, ՄԱԿ ԳԱ, ՄԱԿ Գլխավոր քարտուղար, Նախկին Հարավսլավիայի գործերով քրեական տրիբունալի կողմից կայացրած որոշումները:<sup>86</sup>
85. Երկու կարևոր բաղադրիչներ թույլ են տալիս հռչակել անկախություն. ժողովրդի առկայությունը և այն ժողովրդի պաշտպանության իրականացման անհնարինությունը այլ պետության կողմից: Կոսովոյի բնակչության 90 տոկոսը ալբանացիներ են, որոնք խոսում են ալբաներեն և հիմնականում դավանում են մահմեդականություն: Կոսովոյում սերբ պաշտոնյաները թույլ են տվել մարդու իրավունքների լուրջ խախտումներ, որոնք դատապարտվել են Անվտանգության խորհրդի, Գլխավոր ասամբլեայի և այլ միջազգային մարմինների կողմից: Սերբ իշխանությունները նաև Կոսովոյի ալբանացի ներկայացուցիչներին չէին հրավիրել մասնակցելու 2006 թվականի Սերբիայի սահմանադրության մշակմանը: Միայն Կոսովոյի սերբ բնակչությունն էր մասնակցել հանրաքվեին: Սահմանադրությունը քննադատվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից՝ Կոսովոյի ինքնավարության երաշխիքների բացակայության պատճառով: <sup>87</sup> Այս պայմաններում, անկասկած, Կոսովոյի ժողովուրդն իրավունք ուներ անկախանալու: <sup>88</sup>
86. Սերբիայի նման գործողությունների արդյունքում էր, որ Կոսովոյում ստեղծվել էր հումանիտար ճգնաժամ, ինչի մասին փաստվել է նաև դատական որոշումներում<sup>89</sup> և Գլխավոր ասամբլեայի բանաձևերում: Այդ ամբողջը խոսում է այն փաստի օգտին, որ Կոսովոյի ժողովուրդը զրկված է եղել իրեն պատկանող ինքնորոշման իրավունքի որևէ ձևի իրականացումից և Նախկին Հավսլավիայի քաղաքական գործընթացներին մասնակցելու իրավունքից: Կոսովոյի ժողովրդի նկատմամբ կիրառված մարդու իրավունքների լայնածավալ խախտումները, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, էթնիկ զտումները, զանգվածային փախստականների ճգնաժամը և մնացյալ դեպքերը, որոնք ԱԽ-ի կողմից որակվել են որպես խաղաղությանն ուղղված սպառնալիք, և հանգեցրել են

<sup>82</sup> Written Statement of Romania, para. 147.

<sup>83</sup> Written Statement of Romania, para. 152-158.

<sup>84</sup> K. Doering, Art. 1 Self-determination, in B. Simma (ed), The Charter of the United Nations. A Commentary, Vol I, 2nd edition, 2002, p. 58.

<sup>85</sup> Written Comments of Estonia, p. 5.

<sup>86</sup> Written Comments of Estonia, p. 6-9.

<sup>87</sup> European Commission for Democracy through Law, Opinion on the Constitution of Serbia, Venice, 17-18 March 2007, paras. 7-8, available on [http://www.venice.coe.int/docs/2007/CDL-AD\(2007\)004-e.pdf](http://www.venice.coe.int/docs/2007/CDL-AD(2007)004-e.pdf).

<sup>88</sup> Written Comments of Kosovo, para. 8.40.

<sup>89</sup> *Prosecutor v. Milan Milutinović, Nikola Šainović, Dragoljub Ojdanić, Nebojša Pavković, Vladimir Lazarević, Sreten Lukić* (IT-05-87-T), *Judgement*, 26 February 2009.

միջազգային միջամտության, իրավունք են տվել Կոսովոյին ազատորեն սահմանել իր քաղաքական կարգավիճակը և հռչակել անկախություն: <sup>90</sup>

## ՈԶ

87. 1970 թ. Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի պարագրաֆ 7-րդը սահմանում է. «ինքնորոշման իրավունքը չի կարող ձևակերպվել այնպես, որ խրախուսի կամ թուլատրի խաթարել կամ վնասել որևէ կերպ ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքին համապատասխան վարքագիծ դրսևորող, և հետևաբար իր տարածքում բնակվող, առանց խտրականության, ողջ բնակչությանը ներկայացնող կառավարություն ունեցող պետության տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական միասնությունը»:
88. Սովորաբար պարագրաֆ 7-րդը մեկնաբանվում է *a contrario*. Համաձայն նման մեկնաբանության, եթե պետությունը չի ապահովում ներքին ինքնորոշում՝ ռասայական խտրականության հիմքի վրա զրկելով մարդկանց սահմանադրական կարգին հավասար մասնակցության հնարավորությունից, ապա ժողովուրդը կարող է խախտել այդ պետության տարածքային ամբողջականությունը:
89. Կիպրոսի Հանրապետությունը գտնում է, որ նման մեկնաբանությունը տեղին չէ հետևհավ պատճառաբանությամբ՝ 1. նման լուրջ իրավունք պետք է ամրագրվի առավել պոզիտիվ աղբյուրում, այլ ոչ թե ենթադրվի *a contrario* մեկնաբանման արդյունքում; 2. 1970թ. Հռչակագրի նախագծման աշխատանքներին մասնակցող պետությունների մեծամասնությունը համաձայն չէր, որ ժողովուրդները պետք է ունենան պետությունից անջատվելու իրավունք; 3. Փաստաթղթում հղում է կատարվում 1960թ. Հռչակագրում ամրագրված ինքնորոշմանը, իսկ վերջինս ընդունվել էր հիմնականում ապագադրությանացման համատեքստում և չէր վերաբերում փոքրամասնություններին; 4. Եթե նույնիսկ նշված դրույթը չի արգելում անջատումը, ապա միջազգային իրավունքի շատ այլ սկզբունքներ արգելում են: Ընդհանուր առմամբ, նշված դրույթը ամրագրում է միայն ներքին ինքնորոշման իրավունքը:<sup>91</sup>
90. Կիպրոսի Հանրապետությունը պնդում է, որ «ծայրաստիճան հանգամանքներում» անջատման իրավունք ամրագրված չէ ոչ պայմանագրերում, և ոչ էլ միջազգային սովորության իրավունքում: *Secession of Quebec* գործով Կանադայի Գերագույն Դատարանը գտավ, որ «պարզ չէ, թե արդյոք... ներկայացված դրույթը հանդիսանում է միջազգային իրավունքի մաս»: <sup>92</sup> Պետությունների պրակտիկան հիմնավորում է այն, որ անջատման իրավունքը հաստատված չէ ժամանակակից միջազգային իրավունքում. պետությունների վերաբերմունքը Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անջատման դեպքերի նկատմամբ: <sup>93</sup>
91. Նույնիսկ պետության տարածքի որոշ մասերում Մարդու իրավունքների և Մարդասիրական իրավունքի լայնածավալ և սիստեմատիկ խախտումները իրավունք չեն տալիս տուժածներին միակողմանիորեն անջատվել: Տարածքային ամբողջականության սկզբունքը պետք է հարգվի նույնիսկ վերոնշյալ և բոլոր նմանատիպ դեպքերում: Այլ կերպ ասած, փոքրամասնությունների ինքնորոշման իրավունքը ներքին իրավունք է և

<sup>90</sup> Written Comments of Kosovo, para 4.48.

<sup>91</sup> Written Statement of the Republic of Cyprus, para. 142, p. 37.

<sup>92</sup> *Reference re Secession of Quebec* [1998] 2 S.C.R.217, reproduced in 115 ILR p. 539 at 585, para. 130 հղումն ըստ՝ Written Statement of the Republic of Cyprus, para. 143, p. 37.

<sup>93</sup> Written Statement of the Republic of Cyprus, para. 144, p. 37-38.

նշանակում է ժողովրդավարության իրավունք ու մարդու իրավունքներ. այն չի ներառում պետության կազմից դուրս գալու որևէ իրավունք: Մա նշանակում է, որ ինքնորոշման իրավունքը ոչ թե բաժանման կամ անջատման, այլ ներառման սկզբունք է: Իրանի Իսլամական Հանրապետությունն իր դիրքորոշումը հիմնավորում է նաև հղում կատարելով Միջազգային քրեական դատարանի Կանոնադրության վրա, որի 8-րդ հոդվածը նախատեսում է, որ պետությունների տարածքային ամբողջականությունը պետք է հարգվի նաև հեղաշրջման դեպքում (8-րդ հոդված 3-րդ կետ):<sup>94</sup>

92. Հղում կատարելով Քաղաքական և Քաղաքացիական Իրավունքների դաշնագրի առաջին հոդվածին՝ Կոսովոն պնդում է, որ ինքնորոշման իրավունքը ներառում է անկախությունը, ինչպես նաև սահմանափակված չէ դրանով՝ կախված յուրաքանչյուր գործի առանձնահատկություններից:<sup>95</sup>
93. Եթովպիայում Սոմալիցիների ինքնորոշման հարցի վերաբերյալ Մեծ Բրիտանիայի արտաքին և ընկերակցության գործերի պետական նախարարը նշել է 1983 թ. դեկտեմբերի 12-ին. «ՄԱԿ-ում բազմիցս նշվել է, որ ինքնորոշումը չի ենթադրում, որ պետության ներսում գտնվող յուրաքանչյուր տարածքային ենթամիավոր, կամ որոշակի էթնիկ խումբ իրավունք ունի անջատվել այդ պետությունից և այդպիսով խաթարել սուվերեն և անկախ պետության տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական միասնությունը»:<sup>96</sup>
94. Վերականգնողական սեցեսիայի տեսանկյունից անհրաժեշտ է նշել, որ Կոսովոյի բնակչությունը ստացել է արդեն իսկ հատուցում 1999թ.-ին և որևիցե նոր հատուցման մասին, հատկապես պետական տարածքի տարանջատման ճանապարհով, խոսք լինել չի կարող:<sup>97</sup>

### ***E. Արդյոք միակողմանի անջատումը խախտո՞ւմ է տարածքային ամբողջականության սկզբունքը***

95. 1975թ. Հելսինկիի եզրափակիչ ակտ.

*«Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի ուժով, բոլոր ժողովուրդները մշտապես իրավունք ունեն իրենց ցանկացած ժամանակ և եղանակով, լիակատար ազատության պայմաններում որոշելու իրենց ներքին և արտաքին քաղաքական կարգավիճակը, առանց արտաքին միջամտության, և իրենց ցանկությանը համապատասխան հետամուտ լինել իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»:*

### **ԱՅՈ**

96. Միջազգային իրավունքը միշտ գերապատվություն է տվել պետությունների տարածքային ամբողջականությանը և համապատասխանաբար պետության կառավարությանը իրավունք է վերապահել **բոլոր իրավաչափ միջոցներով** դեմ հանդես գալ պետության մասի միակողմանի անջատմանը: Այսպիսի վեճի դեպքում ենթադրվում է երրորդ պետությունների չեզոքությունը այն պատճառով, որ օժանդակությունը անջատողական

<sup>94</sup> Written Statement of Islamic Republic of Iran, p. 7

<sup>95</sup> Written Comments of Kosovo, para 4.36.

<sup>96</sup> Records of UK House of Lords debate (HL, Deb, vol 446, cc94WA), available at:

[http://handsard.millbanksystems.com/written\\_answers/1983/dec/12/somalis-and-self-determination#S5LV0446P0\\_19831212\\_LWA\\_34](http://handsard.millbanksystems.com/written_answers/1983/dec/12/somalis-and-self-determination#S5LV0446P0_19831212_LWA_34), հղումն ըստ Written Statement of the People's Republic of China, p. 7.

<sup>97</sup> Written Comments of Spain, para. 8.

խմբին, որոնց չի հաջողվել հաստատել անկախություն, կարող է դիտարկվել որպես միջամտություն պետության ներքին գործերին:

97. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 27-րդ հոդվածը, ընթերցելով 1(3) հոդվածի, Ապագադուրացման մասին հռչակագրի և Պետությունների բարեկամական հարաբերությունների մասին հռչակագրի լույսի ներքո, ապահովում է մարդու իրավունքների իրականացման այնպիսի եղանակ, որը չի խախտում պետության տարածքային ամբողջականությունը:<sup>98</sup>
98. Միաժամանակ, միջազգային իրավունքում ոչնչով հիմնավորված չէ, որ ինքնորոշման իրավունքը կարող է իրականացվել միայն որպես արտաքին, քանի դեռ չկան խտրականության դեմ համարժեք երաշխիքներ: Բացի այդ ընդհանրացված չափանիշների հաստատումը վնասաբեր կլիներ և միջազգային խաղաղության և անվտանգության սպառնալիք կհանդիսանար, ինչը, համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության, անցանկալի կլիներ<sup>99</sup>:
99. Անվիճարկելի է, որ պետության տարածքային ամբողջականության սկզբունքի պահպանումը անխախտելի է: Այդ սկզբունքի խստագույն պահպանումը ՄԱԿ-ի Կանոնադրության նպատակներից բխող միջոցառումների մասնակից բոլոր պետությունների, այդ թվում ՄԱԿ-ի մարմինների, պարտականությունն է<sup>100</sup>:
100. Ապագադուրացման համատեքստում միջազգային իրավունքը հնարավոր է համարում պետության կամքին հակառակ դրա մի մասի անջատումը բացառապես ինքնորոշման իրավունքի հիման վրա և միայն բացառիկ դեպքերում, երբ ժողովրդի նկատմամբ շարունակաբար կատարվում են խտրականության բռնի գործողություններ<sup>101</sup>:
101. Ազգերի ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների փոխհարաբերակցությունը կարգավորվում է այսպես կոչված «երաշխիքային դրույթով», որը նախատեսվել էր 1970թ. Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրով, հետագայում ձևափոխվել է 1993 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Համաշխարհային համաժողովի Վիեննայի Հռչակագրով. «ինքնորոշման իրավունքը չի կարող ձևակերպվել այնպես, որ խրախուսի կամ թույլատրի խաթարել կամ վնասել որևէ կերպ ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքին համապատասխան վարքագիծ դրսևորող, և հետևաբար իր տարածքում բնակվող, առանց խտրականության, ողջ բնակչությանը ներկայացնող կառավարություն ունեցող պետության տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական միասնությունը»: <sup>102</sup> Այս «երաշխիքային դրույթի» նպատակը և իմաստը պետությունների տարածքային ամբողջականությունը պահպանելն է, որի պայմաններում ինքնորոշում հնարավոր է միայն արտաքին հարձակման դեպքում, երբ վտանգվում է այդ ժողովրդի գոյությունը: <sup>103</sup>
102. Ըստ Սլովակիայի, «երաշխիքային դրույթը» վկայում է այն մասին, որ միջազգային հանրությունը չի ընդունում պետությունից անջատման իրավունքի գոյության փաստը:<sup>104</sup>
103. Իրանի Իսլամական Հանրապետությունը պնդում է, որ տարածքային ամբողջականության սկզբունքը հանդիսանում է *jus cogens* նորմ: Այս սկզբունքը համարվում է ՄԱԿ-ի Կանոնադրության անկյունաքարը և դրանով պահպանվող կոլեկտիվ անվտանգության

<sup>98</sup> Written Statement of Egypt, p. 67.

<sup>99</sup> Written Statement of Egypt, p. 74

<sup>100</sup> Written Statement of Egypt, p. 75; տարածքային ամբողջականության աներկբա պաշտպանությամբ հանդես է գալիս նաև Լիբիան, Note of the Great Socialist People's Libyan Arab Jamahirya.

<sup>101</sup> Written Statement of Russian Federation, para. 87.

<sup>102</sup> International Legal Materials (1993), p. 1665, հղումն ըստ՝ Written Statement of Russian Federation, para. 83;

<sup>103</sup> Written Statement of Russian Federation, p. 40;

<sup>104</sup> Written Statement of Slovakia, para. 8.

գաղափարի հիմնական նպատակն ու ողջամիտ հիմնավորումը: Միջազգային իրավունքում տարածքային ամբողջականության սկզբունքի բնույթից ու կարգավիճակից բխում է, որ դրանից ոչ մի վերապահում թույլատրելի չէ: Իրանի Իսլամական Հանրապետությունն իր դիրքորոշումը հիմնավորում է հղում կատարելով ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի Հանձնաժողովի Պետությունների պատասխանատվության մասին հոդվածների նախագծի վրա:<sup>105</sup>

104. Իրանի Իսլամական Հանրապետությունը շեշտում է տարածքային ամբողջականության սկզբունքի կարևորությունը և իրավական պարտադիրությունը՝ ընդգծելու նպատակով մատնանշում է, որ այն ամրագրված է բազմաթիվ միջազգային-իրավական փաստաթղթերում:<sup>106</sup>

105. ՄԱԿ-ը միշտ լրջորեն ըդդիմացել է պետության տարածքային ամբողջականության և ազգային մասնության մասնատմանը կամ խախտմանը: Ադրբեջանի կառավարությունն իր դիրքորոշումներում հղում է կատարում Ջեյմս Քրոֆորդի հիմնարար աշխատություններից մեկի վրա, որում հեղինակը պնդում է, որ «1945թ. ի վեր միջազգային հանրությունը որպես կանոն հակված չի եղել ընդունել հիմնական պետության համաձայնությանը հակառակ որոշակի մասի անջատումը»<sup>107</sup>:

106. Տարածքային ինքնիշխանության ստաբիլությունը հանդիսանում է կենտրոնական կոնցեպցիա միազգային իրավունքի համար, և դրա հիմնարար նշանակությունը միջազգային իրավակարգի համար համընդհանուր ճանաչում ունի:<sup>108</sup>

107. Կիպրոսի Հանրապետությունը այն կարծիքին է, որ պետական և վարչական սահմանները չափազանց մեծ կարևորություն ունեն ժամանակակից միջազգային հարաբերություններում և, որ սահմանները փոփոխվել է հազվադեպ, այն էլ համապատասխան պետությունների համաձայնության առկայության դեպքում: Որպես նշվածի հիմք Կիպրոսի Հանրապետությունը մատնանշում է *uti possidetis* սկզբունքը:<sup>109</sup>

108. Կիպրոսի Հանրապետությունը գտնում է, որ Նախկին Հարավսլավիայի փլուզումը չի կարող հիմք հանդիսանալ Կոսովոյի նկատմամբ Սերբիայի սուվերեն իրավունքների կորստի համար: Նախկին Հարավսլավիային փլուզման ժամանակ Եվրոպական Ընկերակցությունը կիրառեց նորարական մոտեցում նորանկախ պետությունների ճանաչան գործընթացում՝ հիմնելով արբիտրաժային Հանձնաժողով (Բադինտերի Հանձնաժողովը, այսուհետ՝ Հանձնաժողովը- Badinter Commission): Հանձնաժողովը իր դիրքորոշումը հիմնեց *uti possidetis* սկզբունքի փոփոխված կիրառման վրա՝ նշելով, որ

<sup>105</sup> Paragraph 2, Article 41 of the International Law Report (ILC) draft articles on Responsibility of States for International Wrongful Acts stipulates that "no State shall recognize as lawful a situation created by serious breach [of an obligation arising under a peremptory norm of general international law] ... , nor render aid or assistance in maintaining that situation." Report of the International Law Commission, 2001, A/56/10, p. at 286, հղումն ըստ Written Statement of Islamic Republic of Iran, paras. 2.1 – 2.2, p. 3.

<sup>106</sup> UN Charter, Article 2, paragraph 4; Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and cooperation among states in accordance with United Nations Charter, Annex to the General Assembly Resolution 2625, 24th October 1970; UN Millennium Declaration, General Assembly Resolution 55/2, 18 September 2000; the Declaration on the Occasion of the Fiftieth Anniversary of the United Nations, General Assembly Resolution 50/6, 9th November 1995; resolution on "Maintenance of International Security - Prevention of the Violent disintegration of states, General Assembly Resolution 53/71, 4th December 1998; Vienna declaration and Program of Action, Adopted by consensus by the representatives of 171 states at the end of the World Conference on Human Rights, Vienna, 14-25 June 1993 հղումն ըստ՝ Written Statement of Islamic Republic of Iran, para. 2.2, p. 3.

<sup>107</sup> J. Crawford, Creation of States in International Law, Oxford, 2<sup>nd</sup> ed., 2006, p. 390, հղումն ըստ Written Statement of Azerbaijan, para. 26.

<sup>108</sup> I. Brownlie, Principles of Public International Law (7<sup>th</sup> ed. 2008), p. 289 "The sovereignty and equality of states represent the basic constitutional doctrine of the law of the nations"; M. Shaw, International Law (6<sup>th</sup> Ed., 2008) p. 488: "The Principle of the respect for the territorial integrity of states is well-founded as one of the linchpins of the international system" հղումն ըստ Written Statement of the Republic of Cyprus, paras. 83, 86; տես նաև Written Statement of Romania,

<sup>109</sup> M. Shaw, International Law (6<sup>th</sup> ed., 2008), pp. 523-524, հղումն ըստ Written Statement of the Republic of Cyprus, para. 86.



հակազաղութային պայքարի և ինքնորոշման իրավիճակներից զատ այն կիրառելի է նաև դաշնային պետությունների փլուզման դեպքերում: Իսկ դա արդեն ենթադրում էր, որ նախկին Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետության դաշնային սուբյեկտների ներքին սահմանները հանդիսանալու են նորանկախ պետությունների միջազգային սահմաններ: Նման եղանակով Հանձնաժողովը հակադրվում էր՝ էթնիկապես միատար և այլ սահմաններով ուժով պետություններ ստեղծելու տենդենցներին:<sup>110</sup>

109. Բաղինտերի Հանձնաժողովին դիմում էր ներկայացվել Կոսովոյի ինքնորոշման հարցի վերաբերյալ 1991 թ. դեկտեմբերին, սակայն այն չի քննարկվել Հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը Խորվաթիայի (Krajina) և Բոսնիա-Հերցեգովինայի սերբ բնակչության ինքնորոշման հարցի վերաբերյալ պատասխանել էր, որ այդ խմբերը ինքնորոշման իրավունք չունեն, և, որ ամեն դեպքում, ցանկացած ինքնորոշման իրավունքի իրականացում չպետք է փոփոխի *uti possidetis* սկզբունքի կիրառման արդյունքում ստացված սահմանները: Կիպրոսի Հանրապետություն գտնում է, որ հաշվի առնելով նշվածը, Հանձնաժողովը նաև կեզրակացներ, որ Կոսովոյի ժողովուրդը իրավունք չունի անկախանալ և չի կարող ստեղծել առանձին պետություն:<sup>111</sup>

110. Արդի միջազգային իրավունքում տարածքային ամբողջականության սկզբունքը պարտականություններ է ստեղծում ոչ միայն պետությունների և միջազգային կազմակերպությունների համար, այլ նաև այլ միջազգային ակտորների համար, մասնավորապես՝ միջազգային անվտանգությանն ու խախտությանը սպառնացող ներքին զինված հակամարտություններին միջամտող կողմերը: Արգենտինայի կառավարությունը որպես օրինակ հղում է կատարում Անվտանգության խորհրդի մի շարք բանաձևերի վրա, որոնք պաշտպանում են պետության տարածքային ամբողջականությունը անջատողական և սեպարատիստ կազմավորումներից. այսպես, Անվտանգության խորհուրդը վերահաստատել է Սոմալիի, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության, Սուդանի և Վրաստանի տարածքային ամբողջականությունը ներքին և անջատողական հակամարտությունների համատեքստում:<sup>112</sup>

111. Ապացուցելու համար անջատման օրինականությունը միջազգային իրավունքի տեսանկյունից Ավստրիական կառավարությունը հղում է կատարում 1949թ. ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովում տեղի ունեցած Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին Հռչակագրի տեքստի քննարկումներին, որտեղ մասնավորապես ասվում է, որ ուժով ձեռք բերված տարածքները չճանաչելու պարտականությունը կիրառելի է միայն պետությունների նկատմամբ, և չի տարածվում անջատման դեպքերի վրա:<sup>113</sup>

112. Անջատման ակտը ոչ իրավական, և ոչ էլ հակաիրավական է միջազգային իրավունքում, այն պարզապես հանդիսանում է իրավական տեսանկյունից նեյտրալ վարքագիծ, որի հետևանքներն արդեն կարգավորվում են միջազգային իրավունքով:<sup>114</sup> Ինչպես նշում է

<sup>110</sup> Badinter, Opinion No. 3, para.2 հղումն ըստ՝ Written Statement of the Republic of Cyprus, paras. 115, 118, pp. 29-30

<sup>111</sup> Letter from Dr. Rugova to Lord Carrington, Peace Conference on Yugoslavia, 22 December 1991, in H. Kreiger, *The Kosovo Conflict and International Law: An Analytical Documentation 1974-1999*, (2001), p. 118; the Report of the Secretary-General of the UN (UN doc. S/24795); M. Vickers, *Between Serb and Albanian: a History of Kosovo* (1998), p. 252; R. Caplan, *Europe and the Recognition of New States in Yugoslavia* (2005), p. 139, հղումն ըստ Written Statement of the Republic of Cyprus, paras. 115, 118, p. 30; տես նաև Written Statement of Romania, paras. 117-131.

<sup>112</sup> SC Resolutions 1772 (2007) of 20 August 2007, 1784 (2007) of 31 October 2007, 1756 (2007) of 15 May 2007 and 1808 (2008) of 15 April 2008, հղումն ըստ Written Comments of Argentina paras. 75-82.

<sup>113</sup> ILC, Draft Declaration on the Rights and Duties of States, UN Doc. A/CN.4/SR.14, YBILC 113 (1949), հղումն ըստ Austria Written Statement, para. 37, p. 22.

<sup>114</sup> Crawford J., *The Creation of States in International Law*, p. 389, հղումն ըստ Written Statement of Austria, para. 38.

Լոտերպախտը. «միջազգային իրավունքը չի դատապարտում անկախության համար պայքարող ապստամբներին և անջատողական ուժերին»:<sup>115</sup>

113. Ընդգծելով պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքը և հղում կատարելով ՄԱԿ-ի կանոնադրության, Պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքների սկզբունքների հռչակագրին<sup>116</sup>՝ Կիպրոսի Հանրապետությունը նշում է վերջինիս կողմից սահմանված այն դրույթը, որ դրանցում պարունակած ոչ մի դրույթ չպետք է հասկացվի որպես տարածքային ամբողջականության կամ քաղաքական ինքնիշխանության խախտման «իրավագործության տրամադրում»<sup>117</sup>: Սա պետք է հասկանալ, որպես ընդհանուր միջազգային իրավական նորմ, որը իրավագործության բացակայության պայմաններում բացառում է պետության տարածքային ամբողջականության դեմ ուղղված որևէ քայլ, և կարևոր չէ, թե այդ քայլերը գալիս են պետության ներսից, թե դրսից<sup>118</sup>: Եվ ինքնորոշման համար պայքարի պատմությունը ցույց է տալիս, որ միջազգային իրավունքը սահմանում է իրավունքներ և պարտականություններ ազգային ազատագրական շարժումների և ոչ ինքնակառավարվող տարածքների համար<sup>119</sup>, որոնք չեն պահպանվել:
114. Իրանի Իսլամական Հանրապետությունը հավատում է, որ տարածքային ամբողջականության սկզբունքը գործում է թե պետությունների միջև, թե դրանց ներսում: Այն գործում է նույնիսկ ոչ միջազգային զինված հակամարտությունների ընթացքում և կառավարության ու ապստամբների միջև հարաբերություններում<sup>120</sup>:
115. *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրի նախապատրաստական աշխատանքները*, ինչպես նաև դրա դրույթների կոնստեքստուալ ընթերցումը վկայում են այն մասին, որ սուվերեն ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքները և ոչ մի դեպքում ստորադաս չեն ինքնորոշման սկզբունքին և ավելին՝ դասվում են **միջազգային իրավունքի անօտարելի սկզբունքների շարքին**:<sup>121</sup>
116. Անվտանգության խորհրդի պրակտիկան մատնանշում է, որ ուժի գործադրման արգելքի բոլոր կոպիտ խախտումների դեպքերում (Կիպրոս, Նիկարագուա, Քուվեյթ, Օկուպացված արաբական տարածքներ և այլն) այն իր բանաձևերում կոչ է արել անդամ պետություններին հարգել միմյանց տարածքային ամբողջականությունը:<sup>122</sup>
117. ԱԽ-ն պահպանել է այս նույն դիրքորոշումը նաև «անկում ապրած պետությունների» (“failed states”) պարագայում ներքին զինված ընդհարումների դեպքերում, ինչպես նաև այն պարագաներում, երբ պետություններն ունակ չեն եղել իրենց արդյունավետ վերահսկողությունը իրականացնել սեփական տարածքի բոլոր մասերի նկատմամբ: Նման դեպքերում ևս ԱԽ-ն վերահաստատել է այդ պետությունների տարածքային ամբողջականությունն ու սուվերենությունը:<sup>123</sup>
118. Այս տեսանկյունից արժանահիշատակ են նախկին Հարավսլավիայի ընդհարումների համատեքստում ընդունված ԱԽ բանաձևեր 855(1993)-ը և 1022(1995)-ը, Լեոնային

<sup>115</sup> Lauterpacht H., Recognition in International Law, 8 (1947) հղումն ըստ՝ Crawford J., Creation of States in International Law, p. 390, հղումն ըստ՝ Written Statement of Austria, para. 37, p. 22.

<sup>116</sup> General Assembly resolution 2625 (XXV)

<sup>117</sup> Written Comments of the Republic of Cyprus, para. 15.

<sup>118</sup> Written Comments of the Republic of Cyprus, para. 15.

<sup>119</sup> Written Comments of the Republic of Cyprus, para. 18.

<sup>120</sup> Written Statement of Iran, p. 4.

<sup>121</sup> Written Statement of Spain, para. 25.

<sup>122</sup> Written Statement of Spain, paras. 28-29.

<sup>123</sup> Written Statement of Spain, paras. 30-32.

Ղարաբաղի համատեքստում՝ բանաձևեր 822(1993)-ը, 874(1993)-ը, 884(1993)-ը, Տաջիկիստանի պարագայում՝ բանաձև 999(1995)-ը և այլն:<sup>124</sup>

119. Սերբիայի գրավոր հայտարարության հիմնասյուներն են պետությունների իքնիշխան հավասարության, տարածքային ամբողջականության և սահմանների անքակտելիության սկզբունքները: Միաժամանակ, Սերբիան պնդում է, որ Կոսովոյի անկախության միակողմանի հռչակման ընդունումը միջազգային իրավունքի տեսանկյունից որպես իրավաչափ գործողություն հղի է այս սկզբունքների հանդեպ պետությունների համաձայնեցված երկարատև պրակտիկայի խաթարմամբ, ինչի հետևանքը կլինի սկզբունքների դերի և ուժի նվազեցումը:
120. Այս առումով Սերբիան հանգամանալից անդրադառնում է պետության ինքնիշխանությանը՝ ներպետական և արտաքին հարաբերություններում լիակատար ինքնուրույնությամբ, և պետության ներքին գործերում այլ պետությունների միջամտության անթույլատրելիությանը<sup>125</sup>: Ուշադրության է արժանի նաև այն, որ այստեղ Սերբիան շեշտադրում է կատարում պետության տարածքային ինքնիշխանության վրա՝ զարգացնելով պետական ինքնիշխանության և տարածքային ամբողջականության փոխկապակցվածության տարրերն ու դրանց համադրությունը<sup>126</sup>:
121. Էական նշանակություն ունի և մեծագույն կարևորություն են ներկայացնում Սերբիայի պնդումներն ու հիմնավորումներն առ այն, որ տարածքային ամբողջականության սկզբունքի հարգումը/պահպանումը պարտադիր է նաև ոչ պետական սուբյեկտների համար՝ անկախության համար պայքարի և/կամ անջատման գործընթացներում: Հատկապես պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, որ Սերբիան լավագույնս կանխամտածված կերպով խուսանավում է պետության հանդեպ այլ պետությունների կողմից ագրեսիայի և սպազադուրականացման դեքերի դիտարկումից, այդպիսով իսկ հարցը տեղափոխելով ներպետական (ոչ միջազգային) հակամարտության տիրույթ: Սերբիան հանգամանալից անդրադարձ է կատարում միջազգային հանրության կողմից տարածքային ամբողջականության պահպանման պարտավորության՝ հատկապես ոչ պետական սուբյեկտներին վերագրող դիրքորոշումներին:<sup>127</sup>
122. Սերբիայի դիրքորոշումը մեծապես հիմնված է Բոսնիայի և Հերցեգովինայի, Սոմալիի, Վրաստանի (Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ հակամարտություններում), Կոնգոյի, Մուդանի և այլ հակամարտությունների վերաբերյալ միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից արտահայտված դիրքորոշումների վրա:<sup>128</sup>
123. Ներկայացնելով իրենց փոխկապակցված ամբողջականության մեջ և բացելով տարածքային ինքնիշխանության էության, ուժի կիրառման կամ ուժի կիրառման սպառնալիքի արգելքի և պետության գործերին չմիջամտելու սկզբունքները՝ Սերբիան տրամաբանորեն եզրափակում է այս շղթան սահմանների բռնի փոփոխության անթույլատրելիության հիմնավորմամբ: Մատնանշելով ուժի կիրառման կամ ուժի կիրառման սպառնալիքի արգելքի *jus cogens* բնույթը<sup>129</sup>՝ Սերբիան նշում է, որ այն որ սահմանները չեն կարող իրավաչափ կերպով փոփոխվել ուժի կիրառմամբ հանդիսանում է հավելյալ սկզբունք: Սերբիան, որպես հիմք է ներկայացնում Անվտանգության Խորհրդի

<sup>124</sup> Written Statement of Spain, para. 33.

<sup>125</sup> Written Statement of Serbia, para 414, p. 148

<sup>126</sup> Written Statement of Serbia, paras. 415, 416, 419, 420, 423, pp 148-150, 152.

<sup>127</sup> (B) “The UN Repeatedly Affirmed the Principle of Territorial Integrity”, “II With regards to internal conflicts particular” հղումն ըստ՝ Written Statement of Serbia, pp. 154, 158

<sup>128</sup> “II With regards to internal conflicts particular” հղումն ըստ՝ Written Statement of Serbia, pp. 158, 161, 163, 164, 166, 169

<sup>129</sup> Written Statement of Serbia., para. 496, p.178.

1967թ.-ի 242 բանաձևը, որտեղ ընդգծվում է «պատերազմի միջոցով տարածքի ձեռք բերման անթույլատրելիությունը»:<sup>130</sup>

## ՈՉ

- 124.1970 թ. հռչակագրում ինքնորոշման սկզբունքը ներկայացված է ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքների հետ հավասար մակարդակի վրա:<sup>131</sup>
- 125.Շվեյցարիան այն համոզման է, որ վերը հիշատակված 1970 թ. Սկզբունքների հռչակագրի երաշխիքային դրույթը իմաստն այն է, որ պետության տարածքային ամբողջականությունը չի պաշտպանվում այն դեպքում, երբ պետությունը չի ներկայացնում իր տարածքում բնակվող ողջ բնակչությանը, կամայականորեն խտրական քաղաքականություն է վարում որոշակի խմբերի նկատմամբ, և այդպիսով ակնհայտորեն խախտում է ինքնորոշման իրավունքը: Նման պայմաններում պետության ժողովրդի մի մասը կազմող խմբի կողմից անկախության հռչակումը կարող է համապատասխանել միջազգային իրավունքին և տարածքային ամբողջականության սկզբունքին: Էստոնիան ևս կողմնակից է, որ երաշխիքային դրույթը հնարավորություն է տալիս խուսափել այս երկու սկզբունքների միջև հնարավոր կոնֆլիկտից:<sup>132</sup>
126. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1995թ.-ի նոյեմբերի 9-ի 50/6 բանաձևում օգտագործվում են հետևյալ ձևակերպումները. «ինքնորոշում ... օտար գերակայություն ... չպետք է խախտվի»~~պետությունների~~ տարածքային ամբողջականությունը, ... որոնք գործում են ինքնորոշման սկզբունքին համապատասխան, ուստի ներկայացնում են իրենց տարածքի ողջ բնակչությանը»<sup>133</sup>:
- 127.Պետությունների ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը հարգելու սկզբունքը արքսիոմատիկ է և վերաբերում է բոլոր պետություններին: ՄԱԿ-ի Կանոնադրության 2/4 հոդվածը ամրագրում է, որ «Բոլոր անդամները միջազգային հարաբերություններում ձեռնպահ են ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ և/կամ ՄԱԿ-ի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի գործադրումից կան դրա սպառնալիքից»:
- 128.2/1 հոդվածի համաձայն՝ «Կազմակերպությունը հիմնվում է իր բոլոր անդամների ինքնիշխան հավասարության սկզբունքի վրա»: Սակայն այն հանգամանքը, որ այս սկզբունքները արքսիոմատիկ են, չի նշանակում, որ ներպետական կազմավորումները զրկված են գոյություն ունեցող պետության տարածքում նոր պետության ստեղծման հնարավորությունից:
- 129.Տարածքային ամբողջականության սկզբունքը կիրառվում է պետությունների միջև հարաբերություններում և այլ ոչ թե ոչ պետական կազմավորման և պետության միջև հարաբերություններում:<sup>134</sup> «Միայն կլինեք փաստել, որ սեցեսիան խախտում է պետության տարածքային ամբողջականությունը, քանի որ վերջինս կիրառվում է միջազգային հարաբերություններում, այսինքն՝ պարտականություններ է ստեղծում այլ պետությունների համար չխախտել մյուս պետությունների տարածքային ամբողջականությունը. սկզբունքը չի կիրառվում պետության ներսում»:<sup>135</sup>

<sup>130</sup> Written Statement of Serbia, para.497.

<sup>131</sup> Written Statement of Estonia, para. 5.

<sup>132</sup> Written Statement of Switzerland, para. 63; Written Statement of Estonia, para. 6.

<sup>133</sup> Written Statement of Estonia, para. 5.

<sup>134</sup> Written Statement of the United States, p. 69, Written Comment of Kosovo para 4.06.

<sup>135</sup> Georges Abi Saab, Conclusion *in* SECESSION: INTERNATIONAL LAW PERSPECTIVES 474 (MARCELO KOHEN, ED. 2006) հղումն ըստ՝ Written Comments of the United States, para.15.

130. Համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության 6-րդ գլխի՝ տարածքային ամբողջականության սկզբունքը չի խոչընդոտում, որ պետության տարածքում գտնվող որոշակի կազմավորումներն անկախանան:<sup>136</sup>
131. Ճիշտ է, որ պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը պաշտպանվում է միջազգային իրավունքի կողմից, սակայն այդ պաշտպանությունը տարածվում է միայն ուժի կիրառման և երրորդ պետությունների կողմից միջամտությունների դեպքերի վրա: Այդ սկզբունքը պետությանը չի երաշխավորում ներքին զարգացումների հետևանքով կազմալուծումից կամ վերակազմակերպումից:<sup>137</sup>
132. Ֆինլանդիայի համոզմամբ արտաքին ինքնորոշման իրավունքի կիրառման դեպքում իրավիճակը լինում է սովորաբար ոչ նորմալ, օրինակ Աալանդի կղզիների դեպքում, կամ նախկին Հարավսլավիայի տարածքում պատերազմական գործողությունների ձգձգվելը, իսկ նման պայմաններում անիմաստ կլինի որպես հիմք ընդունել «կայունության և սահմանների վերջնական լինելու» սկզբունքները:<sup>138</sup> Այս մոտեցումը լիովին կիրառելի է Կոսովոյի իրավիճակի նկատմամբ:<sup>139</sup> Ֆինլանդիան գտնում է, որ Կոսովոյի իրավիճակը որպես «ոչ նորմալ» գնահատելու համար առկա են հետևյալ հանգամանքները. 1. նախկին Հարավսլավիայի փլուզումը, որը ընթացավ կոնֆլիկտային միջավայրում, 2. Կոսովոյի սահմանադրական կարգավիճակի միակողմանի փոփոխությունները՝ 1989 և 1990 Սերբիայի Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելով, 3. Կոսովացի ալբանացիների հետապնդումները 1989-1999թթ., որոնք դրսևովրվում էին Կոսովացի ալբանացիների դեմ կատարվող մարդու իրավունքների լուրջ խախտումներով, մարդկության դեմ ուղղված հանցագործություններով, ինչը հաստատվել է Նախկին Հարավսլավիայի տրիբունալի կողմից քննված գործերով<sup>140</sup>, այս ամենի կուլմինացիան հանդիսացավ 1999թ. մարդկանց զանգվածային տեղահանումները Կոսովոյից և դեպի Կոսովո; 4. իրավիճակի հատուկ բնույթի ճանաչումը միջազգային հանրության կողմից, մասնավորապես Անվտանգության խորհրդի կողմից ընդունված 1244 բանաձևով; 5. Սերբական պաշտոնյաների կողմից Ներքին ինքնորոշման համար անհրաժեշտ պայմաններ չստեղծելը:<sup>141</sup>
133. Սկզբունքը պարզապես չի տարածվում այն դեպքերի վրա, որոնք տեղի են ունենում պետության ներսում, և չի ստիպում անկախության հռչակագրի հեղինակներին ձեռնպահ մնալ նման քայլից: Սույն գործում հռչակագրի հեղինակները գործել են ոչ թե պետության անունից, այլ ժողովրդի և չեն խախտել ՄԱԿ-ի Կանոնադրության 2.4 հոդվածի պահանջները, որը նույնպես ուղղված է միայն պետություններին:<sup>142</sup>
134. Այս սկզբունքի խախտմանը վերաբերող Սերբիայի և մի շարք այլ պետությունների կողմից ներկայացված փաստարկների հիմքում ընկած է պետություն-պետություն հարաբերությունները (անգամ որպես *erga omnes* պարտավորություն), ինչը սույն գործով կիրառելի չէ: Անգամ սկզբնապես Սերբիան ճանաչել էր, որ այս սկզբունքը պետություն-պետություն հարաբերություններում է գործում, սակայն հետագայում փորձել է ապացուցել, որ այն այդքան էլ սահմանափակ չէ՝ հիմնվելով Գլխավոր ասամբլեայի և

<sup>136</sup> Written Comment of the United States, p. 25 հիմնընկնող դիրքորոշում է արտահայտվում նաև Մեծ Բրիտանիայի գրավոր հայտարարության մեջ, տես Written Statement of the United Kingdom, paras. 5.8-5.11.

<sup>137</sup> Written Statement of the United Kingdom, para. 5.10.

<sup>138</sup> Case Concerning the Temple of Preah Vihear (Cambodia v. Thailand), Merits, Judgment of 15 June 1962, I.C.J. Reports 1962, at 34-35 հղումն ըստ Written Statement of Finland, para. 9, pp. 4-5.

<sup>139</sup> Written Statement of Finland, para. 10, pp. 5.

<sup>140</sup> Prosecutor v. Milutinović et. al., Judgement of 26 February 2009 հղումն ըստ Written Statement of Finland, para. 10, p. 6.

<sup>141</sup> Written Statement of Finland, para. 10, pp. 5-7.

<sup>142</sup> Written Comment of Kosovo, para. 4.07.

Անվտանգության խորհրդի բանաձևերի և այլ ակտերի վրա (*General Assembly resolution 2625 (XXV) of 24 October 1970, General Assembly resolution 41/128 of 4 December 1986, The Guiding Principles on Humanitarian Assistance annexed to General Assembly resolution 48/192 of 19 December 1991, General Assembly resolution 52/112, The Millennium Declaration and the World Summit Outcome, Article 46 (1) of the United Nations Declaration on the Rights of Indigenous Peoples of 7 September 2007*), ինչին Կոսովոն, անդրադառնալով դրանցից յուրաքանչյուրին, պատասխանել է՝ մերժելով վերջիններիս վերաբերելիությունը գործին և/կամ մատնանշելով դրանց խորհրդատվական բնույթը, ինչպես նաև փաստելով, որ եթե անգամ դրանք արտահայտում են սովորության միջազգային իրավունքը, դրանք պարզապես չեն նպաստում Սերբիայի կողմից արված եզրակացություններին:<sup>143</sup>

135. Ինչ վերաբերում է տարածքային ամբողջականությանը նմանատիպ սկզբունք համարվող «սահմանների անխախտելիության» սկզբունքին, ապա, ըստ Կոսովոյի, դա նույնպես ուղղված է պետություն-պետություն հարաբերություններին և չի պաշտպանում պետությանը մասնատումից, այլ պարունակում է, միջազգային իրավունքի համաձայն, օգտակար գործիք, որը պետությանը մասնատումը սահմանափակում է սեփական տարածքում՝ առանց հարևան պետությունների սահմանների փոփոխության:<sup>144</sup>
136. Ավելին, եթե նույնիսկ վերաիմաստավորվի տարածքային ամբողջականության սկզբունքը սահմանների անխախտելիության և պահպանության (*uti possidetis*), ապա պետք է փաստել, որ որևէ հիմք չկա իրավունքում և պրակտիկայում, ինչը կփաստեր, որ այդ սկզբունքը առավելություն ունի ինքնորոշման սկզբունքի նկատմամբ:<sup>145</sup>
137. Ինքնիշխանության սկզբունքը, և դրա մի տարրը հանդիսացող տարածքային ամբողջականության սկզբունքը, կարևոր, սակայն միջազգային իրավունքի միակ կարևոր սկզբունքը չէ: Հավասարազոր սկզբունք է նաև ինքնորոշման սկզբունքը: Ինքնորոշման սկզբունքը ճանաչված է որպես միևնույն աստիճանի և ամեննին ստորադասված չէ ինքնիշխանության, ինքնիշխան հավասարության և տարածքային ամբողջականության սկզբունքներին:<sup>146</sup>
138. Պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը հստակորեն ամրագրված է միջազգային իրավունքում: ՄԱԿ-ի Կանոնադրությամբ այն փոխկապակցված է միջազգային իրավունքի այնպիսի հիմնարար սկզբունքի հետ, ինչպիսին է պետությունների միջև ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառման արգելումը: Տվյալ սկզբունքի հասցեատերերը պետություններն են: Դրանք պետք է հարգեն միմյանց տարածքային ամբողջականությունը (այլ ոչ անհատները կամ բնակչությունը):<sup>147</sup>
139. Տարածքային ամբողջականության սկզբունքը ամրագրվել է որպես միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք, իսկ ՄԱԿ-ի Կանոնադրության ստեղծմամբ դրա բոլոր անդամ պետությունները պարտավորվել են պահպանել այն: Հետևաբար այն հանդիսանում է միջազգային հարաբերությունների անկյունաքարը:<sup>148</sup> Այդուամենայնիվ, անհրաժեշտ է նկատել, որ բացառիկ հանգամանքների պայմաններում միջազգային հանրության միջամտությունը թույլատրելի է, հատկապես Անվտանգության խորհրդի լիազորությունների շրջանակներում, որը միջազգային խաղաղության և անվտանգության համար հիմնական պատասխանատվություն կրողն է: Իրականացնելով իր լիազորությունները ՄԱԿ-ի Կանոնադրության VI, VII կամ VIII գլուխների համաձայն՝ այն

<sup>143</sup> Written Comments of Kosovo, para 4.10.

<sup>144</sup> Written Comments of Kosovo, para 4.12

<sup>145</sup> Written Comments of Kosovo, para 4.37.

<sup>146</sup> Written Statement of Germany, p. 32

<sup>147</sup> Written Statement of Germany, p. 27

<sup>148</sup> Written Statemetn of Egypt, para. 28

չի կարող ավելի մեծ դեր կատարել՝ ի խախտումն Կանոնադրությամբ ամրագրված սկզբունքների: Այդպիսով, որևէ միջոց իրավունքի ուժով չի կարող հանգեցնել հետևանքների, որոնց համար այն չի ստեղծվել ի սկզբանե: Այլ բառերով, գործողությունների ցանկացած իրավագործություն կպահպանվի իր հնարավորությունների ու սահմանների շրջանակներում:<sup>149</sup>

140. Կասկածի ենթակա չէ այն հանգամանքը, որ տարածքային ամբողջականության պահպանումը միջազգային իրավունքի անխախտելի սկզբունք է և անքակտելի է պետության ինքնիշխանությունից և անկախությունից: Այդուամենայնիվ պետությունների սահմանների ճանաչումը պետք է հստակ ուսումնասիրությունների ենթարկվի: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է հաշվի առնել, որ Արդարադատության Միջազգային Դատարանը մի շարք գործերում փաստել է, որ «յուրաքանչյուր դեպք պետք է գնահատվի կոնկրետ հանգամանքներին համապատասխան»:<sup>150</sup>
141. Իհարկե կասկածից վեր է, որ անջատումը խախտում է այն պետության տարածքային իշխանությունը, որից կատարվում է անջատումը: Սակայն միջազգային իրավունքում տարածքային ամբողջականության սկզբունքը գործում է ոչ թե պետության և նրա սեփական բնակչության միջև, այլ պետությունների միջև, ինչը բխում է ՄԱԿ-ի Կանոնադրության 2(4) հոդվածից: Դրանից հետևում է, որ տարածքային ամբողջականության սկզբունքը բացառում է ցանկացած արտաքին միջամտություն՝ ուղղված պետության մասնատմանը, այդ թվում անջատողական շարժումներին ռազմական օգնությունը, ինչը սակայն, չի նշանակում, որ միջազգային իրավունքը արգելում է անջատումը որպես այդպիսին:<sup>151</sup>
142. Ցանկացած հակառակ տեսակետ կնշանակեր կասկածի տակ դնել շատ պետությունների անկախացման օրինականությունը, որոնց գոյությունը այժմ անվիճելի է և դրանք բոլորն էլ Միավորված ազգերի կազմակերպության անդամներ են. օրինակ. Գրան-Կոլումբիայի իրավահաջորդները, Հնդկաստանի և Պակիստանի տրոհումը, Էրիթրեան, Սենեգալը, որը դուրս եկավ Մալիի Դաշնության կազմից, Սիրիան, որը հանգեցրեց Միացյալ Արաբական Հանրապետության փլուզմանը, Սինգապուրը կամ հանրապետությունները, որոնք առաջացան ԽՍՀՄ և նախկին Հարավսլավիայի վերացման հետևանքով:<sup>152</sup>
143. Իհարկե, հարցի մյուս կողմն է, որ որևէ պետության տարածքում անկախության հռչակությունը և նոր «պետության» ստեղծումը կարող է ներառել ՄԱԿ-ի Կանոնադրությանը հակասող ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառում, կամ ուղեկցվել միջազգային իրավունքի բազում խախտումներով, ինչը բոլոր կողմերից առանց բացառության պահանջում է ձեռնպահ մնալ խախտումները և վերջնական արդյունքը օրինական ճանաչելուց:<sup>153</sup>

<sup>149</sup> Written Statemetn of Egypt, para. 30

<sup>150</sup> Written Statemetn of Egypt, para. 51

<sup>151</sup> Written Statement of France, p. 26, para. 2.6

<sup>152</sup> Written Statement of France, p. 27, para. 2.8

<sup>153</sup> Written Statement of France, p. 28, para. 2.13

**F. Արդյոք Կոստվոյի միակողմանի անջատումը հակասո՞ւմ  
ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 1244 բանաձևին**

**ԱՅՈ**

144. 1244 բանաձևում Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության տարածքային ամբողջականության մասին բազմաթիվ հիշատակումները, ինչպես նաև Կոստվոյի հնարավոր անկախության փաստի հիշատակման բացակայությունը ուժեղ կանխավարկած են ստեղծում հոգուտ Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության, իսկ հետագայում նաև Սերբիայի տարածքային ամբողջականության:<sup>154</sup>
145. Բանաձևը հնարավոր չէր համարում կամքի միակողմանի արտահայտմամբ հարցի լուծման տարբերակը:<sup>155</sup> Ինքնակառավարման ժամանակավոր մարմինները հիմնված էին բանաձև 1244-ի վրա, և պետք է ղեկավարվեին դրանով: Անկախության հռչակումը դուրս էր այդ մարմինների իրավասության շրջանակներից: Ինքնակառավարման ժամանակավոր մարմինները հիմնվել էին Պայմանական Սահմանադրական Ձևաչափի (Provisional Constitutional Framework) համաձայն որոնց նպատակն էր ապահովել բանաձև 1244-ի Կոստվոյի ինքնառավարմանը վերաբերող դրույթների կիրառումը:<sup>156</sup>
146. Ռումինիայի պնդմամբ 1244 բանաձևը միանշանակորեն խախտվում է Կոստվոյի միակողմանիորեն անջատվելով, քանի որ բանաձևը հստակորեն ամրագրում է Սերբիայի տարածքային ամբողջականության սկզբունքը և սահմանում, որ Կոստվոյի կարգավիճակի ցանկացած լուծման դեպքում այդ սկզբունքը պիտի հաշվի առնվի, ինչն էլ պիտի տեղի ունենա շահագրգիռ կողմերի երկխոսության միջոցով:<sup>157</sup>
147. Կիպրոսի Հանրապետության դիրքորոշումն այն է, որ բանաձևը անկասկած, հաստատում էր Սերբիայի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, մասնավորապես հղում է կատարվում բանաձևի նախաբանին, որտեղ ընդգծվում է Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության և տարածաշրջանի այլ պետությունների տարածքային ամբողջականության և ինքնիշխանության հարգման պարտավորության մասին: Ըստ Կիպրոսի Հանրապետության, նախաբանի այդ հիշատակումը պետք է հիմք ընդունվի բանաձևի տեքստի հետագա մեկնաբանման համար:<sup>158</sup>
148. Ավելին, բանաձև 1244-ի օպերատիվ պարագրաֆ 11(a) և (e)-ն հղում են Ռամբույեյի Համաձայնագրերին, որոնք հստակորեն ամրագրում են Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը:<sup>159</sup> Բանաձևի իմաստը նրանում է, որ լուծումը պետք է լինի երկկողմանի համաձայնեցված և միակողմանի լուծումը չի կարող պարտադրվել մյուս կողմից, ինչը կհակասի բանաձևի, թե տառին, և թե ոգուն:<sup>160</sup>
149. Կիպրոսի Հանրապետությունն այն կարծիքին է, որ Անվտանգության խորհուրդն իրավասու չէ փոփոխել տարածքի նկատմամբ տիտղոսը: Կանոնադրության VII գլխի հիման վրա Անվտանգության Խորհրդի լիազորությունները հիմնական ուղղված են միջազգային անվտանգության և խաղաղության ապահովմանը, և, չնայած, որ այդ իրավասությունները բավականին լայն են, սակայն անսահմանափակ չեն: Որպես

<sup>154</sup> Written Statement of Russian Federation, para. 54.

<sup>155</sup> Written Statement of Russian Federation, para. 63

<sup>156</sup> Written Statement of Russian Federation, paras. 70-73

<sup>157</sup> Written Statement of Romania, para. 57.

<sup>158</sup> Written Statement of the Republic of Cyprus, para 92.

<sup>159</sup> Written Statement of the Republic of Cyprus, para 93.

<sup>160</sup> Written Statement of the Republic of Cyprus, para 98.



օրիանակ բերվում է Քուվեյթի և Իրաքի միջև սահմանների դեմակարկացիայի իրականացման գործընթացում Անվտանգության խորհրդի զուտ տեխնիկական մասնակցությունը:<sup>161</sup>

150. Բանաձևի տեքստը կառուցված է Կոսովոյի տարածքի նկատմամբ Սերբիայի սովորենության ենթադրությամբ: Բանաձևում հստակ հիշատակվում է տարածքում միջազգային ներկայացվածության համար Սերբիայի համաձայնության մասին: Այն հանգամանքը, որ Սերբիան համաձայնություն է տվել միջազգային մարմիններին իրականացնել կառավարման գործառույթներ, ներառյալ տեղական մարմինների գործունեությունը համակարգելը, չի կարող հիմք հանդիսանալ այդ տարածքի նկատմամբ Սերբիայի ինքնիշխանությունը դադարեցնելու համար:<sup>162</sup>
151. 1999 թվականի Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության (ՀԴՀ) տարածքային ամբողջականությունը նույնը չէ, ինչ 2008 թվականի Սերբիայի տարածքային ամբողջականությունը: ՀԴՀ-ը իր անվանումը փոխեց 2003 թվականին և դարձավ Սերբիա և Չեռնոգորիա: Երբ 2006 թվականին Սերբիան և Չեռնոգորիան անջատվեցին, նոր պետությունը անվանվեց Սերբիայի Հանրապետություն: Բացի այդ 1999 թվականի ՀԴՀ-ի տարածքը նույնը չէ, ինչ 2008 թվականի Սերբիայի տարածքը: Չեռնոգորիայի անջատումով փոփոխվել էր նաև պետության դաշնային բնույթը:<sup>163</sup>
152. Անվտանգության խորհուրդը հավատարիմ մնաց իր մտեցումներին նաև բանաձև 1244-ում, որը բացահայտ կերպով ճանաչում է Հարավսլավիայի (Սերբիայի) տարածքային ամբողջականությունը:<sup>164</sup> Բանաձև 1244-ը նախատեսում էր ժամանակավոր ինքնակառավարման ինստիտուտների հիմնադրում և, դրան զուգահեռ, Կոսովոյի վերջնական ստատուսի որոշում և ոչնչով չէր լիազորում Կոսովոյի անջատումը Սերբիայից: Բանաձև 1244-ը պետք է հիմք ծառայի Կոսովոյի վերջնական կարգավիճակի որոշման համար, որը նախատեսում է բանակցային գործընթացի ձևաչափը՝ էական կարևորություն տալով կողմերի «համաձայնությանը» և բացառելով քաղաքական գործընթացի միակողմանի լուծումը:<sup>165</sup>
153. Սերբիան վկայակոչում է այն փաստը, որ երբևիցե որևէ պետության կողմից չի առարկվել Սերբիայի՝ Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության իրավահաջորդ հանդիսանալու փաստը: Հետևաբար, նշվում է, որ 1244 Բանաձևի դրույթներն այս առումով ամբողջովին կիրառելի են 2008թ. պայմաններում և կիրառելի են հենց Սերբիային նկատմամբ: Այս առումով վկայակոչվում է Սերբիայի և Մոնտենեգրոյի Սահմանադրական Կանոնադրության 60 հոդվածը, որտեղ նշվում է բանաձևի՝ Սերբիայի նկատմամբ կիրառելիության մասին: Նշվում է, որ Սերբիան անառարկելիորեն հանդիսացել է Սերբիայի և Մոնտենեգրոյի Պետական Միության, ուստի՝ ՀԴՀ-ի իրավահաջորդը: Սերբիան այս առումով վկայակոչում է նաև Բոսնիա և Հերցեգովինան ընդդեմ Սերբիա և Մոնտենեգրոյի գործով 2007թ. փետրվարի 26-ի ԱՄԴ-ի որոշումը, որտեղ Դատարանը հաստատում է Սերբիայի իրավահաջորդությունը Սերբիայի և Մոնտենեգրոյի Պետական Միության հանդեպ: Այսպիսով, Սերբիան եզրահանգում է, որ հանդիսանալով Սերբիայի և Մոնտենեգրոյի Պետական Միության իրավահաջորդը, Սերբիան իրավասու է պնդել ՀԴՀ-ի տարածքային ամբողջականության վերաբերյալ Անվտանգության Խորհրդի 1244 բանաձևում նշված դրույթի կիրառելիությունը ժամանակակից պայմաններում:<sup>166</sup>

<sup>161</sup> Written Statement of the Republic of Cyprus, para 102.

<sup>162</sup> Written Statement of the Republic of Cyprus, para 104.

<sup>163</sup> Written Comments of Kosovo, para. 9.32.

<sup>164</sup> Written Statement of Spain, paras. 35-36.

<sup>165</sup> Written Statement of Spain, paras. 56-58.

<sup>166</sup> Written Statement of Serbia, paras. 510-516, pp. 183-185.

- 154.1244 Բանաձևով երաշխավորվում է Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, այլ ոչ Սերբիայի: Այն փաստը, որ Բանաձևով Կոսովոն մնում է Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության սահմաններում, չի նշանակում դրա ընդգրկումը Սերբիայի սահմաններում:
155. Կոսովոյի ապագա կարգավիճակի հարցը ըստ Բանաձևի կախված չէ ոչ Անվտանգության Խորհրդի թույլտվությունից, ոչ Սերբիայի համաձայնությունից: Բանաձևը չի արգելում նույնիսկ Կոսովոյի անկախությունը:
156. Նորվեգիայի պնդմամբ Կոսովոյի միակողմանի անջատումը որևէ կերպ չի հակասում ՄԱԿ-ի ԱԽ 1244 բանաձևին, քանի որ վերջինս «չի սահմանում միջազգային իրավունքի ներքո որևէ պարտավորություն, որը արգելում է անկախության նման հռչակագրի հռչակումը, կամ այն համարում ոչ իրավաչափ»:<sup>167</sup>
157. ՄԱԿ-ի ԱԽ 1244 բանաձևը Կոսովոյի ապագա կարգավիճակի վերաբերյալ որևէ դիրքորոշում չի պաշտպանում և ոչ էլ սահմանում է, թե ժողովրդական ճանապարհով ընտրված ներկայացուցիչները կարող են արտահայտել Կոսովոյի վերջնական կարգավիճակի վերաբերյալ իրեն կարծիքը: Իսկ բանաձևի երկրորդ հավելվածում նշված կարգավիճակը վերաբերում է միայն անցումային փուլին, իսկ վերջնական կարգավիճակը կարգավորում չէր ստացել դրանում:<sup>168</sup>
158. Կոսովոն պնդում է, որ վերջնական կարգավիճակի որոշման համար Սերբիայի համաձայնությունը, ըստ 1244 բանաձևի, ամենևին պարտադիր չէ, իսկ բանաձևում տեղ գտած տարածքային ամբողջականության հարգման մասին դրույթը վերաբերում է միայն միջանկյալ ժամանակաշրջանին:<sup>169</sup> Այդ պատճառով, Կոսովոյի պնդման մեջ նախ մեջբերումներ են արվում բանաձևի համապատասխան հավելվածներից:<sup>170</sup>
159. Կոսովոն, իր դիրքորոշումը հիմնավորելու համար, մեջ է բերում նաև Ռամբույեի համաձայնագրի 3-դ պարբերությունը.  
*«Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելուց երեք տարի հետո կհրավիրվի միջազգային համաժողով՝ որոշելու Կոսովոյի խնդրի վերջնական կարգավորման համար մեխանիզմ. որը հիմնված կլինի ժողովրդի կամքի, **համապատասխան իշխանական մարմինների դիրքորոշման, բոլոր կողմերի՝ սույն համաձայնագրի և Հելսինկյան եզրափակիչ ակտը մեկնաբանելուն ուղղված ջանքերի հիման վրա...**»:*<sup>171</sup>
160. Այս պարբերությունում, ըստ Կոսովոյի, չկա երկկողմ համաձայնության հստակ պահանջ:<sup>172</sup> Սակայն մյուս կողմից, Սերբիան իր առարկությունների մեջ է բերում այս նույն հատվածը՝ **«համապատասխան իշխանությունների դիրքորոշման»** արտահայտության տակ հասկանալով հենց Սերբական իշխանություններին:<sup>173</sup>
161. Բանաձևում ՀԴՀ-ը, և հատկապես Սերբիան, հռչակվեց որպես վտանգ Կոսովոյի ժողովրդի համար: Այն հղում է կատարում Անվտանգության խորհրդի այլ բանաձևերին, որոնք դատապարտում են սերբական ոստիկանության կողմից ուժի կիրառումը

<sup>167</sup> Written Statement of Norway, para. 11.

<sup>168</sup> Written Statement of Norway, para. 16.

<sup>169</sup> Written Comments of Kosovo, para. 4.11.

<sup>170</sup> S/1999/649, Annex [Dossier No. 31], հղումն ըստ՝ Written Comments of Kosovo, para. 4.06.

<sup>171</sup> Written Comments of Kosovo, para. 4.17.

<sup>172</sup> Written Comments of Kosovo, para. 4.18.

<sup>173</sup> Written Comments of Serbia, para 321.

քաղաքացիական բնակչության և խաղաղ ցուցարարների դեմ, որի հետևանքով եղան բազմաթիվ կորուստներ, իսկ 230.000 մարդ տեղահանվեց: <sup>174</sup>

- 162.1244 բանաձևի քննարկման ժամանակ ՀԴՀ հատուկ ներկայացուցիչ Յովանովիչը (*Jovanovic*) ԱԽ-ում իր ելույթում պահանջեց, որ բանաձևը «Պետք է պարունակի ... Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը ամբողջապես հարգելու մասին հստակ և միանշանակ» (այդպիսով ընդունելով, որ դա այդպես չէր). Նա ասել է, որ այն պետք է ներառի դրույթ «Կոսովո և Մետոխիայի խնդրի քաղաքական լուծումը պետք է հիմնված լինի լայն ինքնավարության վրա» (կրկին ի գիտություն ընդունելով, այն հանգամանքը, որ նախագծի լեզուն, որն այնուհետև ընդունվել է Անվտանգության խորհրդի կողմից, այդպիսի բան չէր ենթադրում)<sup>175</sup>: ՀԴՀ ներկայացուցիչը ասաց, որ «11-րդ օպերատիվ կետը Կոսովոյի և Մետոխիայի համար բացում է ՀԴՀ կազմից դուրս գալու ուղին»: <sup>176</sup>
163. Մյուս կողմից՝ Անվտանգության խորհրդի անդամների հայտարարություններից ոչ մեկը չէր բացառում Կոսովոյի ներկայացուցիչների՝ անկախության հռչակման իրավունքը, ավելին՝ հայտարարություններից ոչ մեկը չի բացառում, որ Կոսովոն կարող է ձևավորվել որպես անկախ պետություն: Ընդհակառակը, որոշ անդամներ շեշտել են, որ Կոսովոյի ժողովրդի կամքը որոշիչ պետք է լինի Կոսովոյի վերջնական կարգավիճակի հաստատման համար: <sup>177</sup>
164. Կոսովոյի անկախության հռչակումը չի հակասում Անվտանգության խորհրդի 1244 (1999) բանաձևին: Նրա նախաբանում և բաժիններում չկա այնպիսի մի դրույթ, որն արգելում է անկախության հռչակումը: Բանաձևը կոչ է անում հարցը լուծել քաղաքական գործընթացի միջոցով, որի արդյունքը պետք է լինի կամ Կոսովոյի անկախությունը, կամ էլ ինքնավարությունը Սերբիայի տարածքում: <sup>178</sup>
165. Օպերատիվ պարագրաֆ 1-ը հստակեցնում է, որ քաղաքական լուծումը հիմնված է լինելու Հավելվածներում ամրագրված սկզբունքների վրա, սակայն միևնույն է փաստաթուղթը լուր է վերջնական կարգավիճակի կոնկրետ ձևի վերաբերյալ: Բանաձևն ըստ էության բաց է Կոսովոյի վերջնական կարգավիճակի ձևի տեսանկյունից, և բոլորովին չի բացառում անկախությունը: Հակառակ դեպքում անկախությունը ուղղակիորեն կբացառվեր որպես Կոսովոյի վերջնական կարգավիճակ: <sup>179</sup>
166. Ավստրիական կառավարությունն այն կարծիքին է, որ Անվտանգության խորհրդի բանաձև 1244-ը պետք է մեկնաբանել այդ փաստաթղթի առարկային և նպատակին համապատասխան: Վերջիններս բացահայտելու համար անհրաժեշտ է ընթերցել բանաձևի նախաբանը: Չնայած որ նախաբանում հիշատակվում տարածքային ամբողջականության մասին, այնուամենայնիվ, այն չի կարող հանդիսանալ բանաձևի հիմնական նպատակը, ավելին՝ բանաձևի հիմնական նպատակն է հանդիսանում տարածաշրջանում անվտանգության և խաղաղության ապահովումը: <sup>180</sup>
167. Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության տարածքային ամբողջականության մասին հիշատակում կատարվում է նաև բանաձևի Հավելված 2-ում, սակայն, ըստ Ավստրիայի, դա

<sup>174</sup> Written Comments of Kosovo, para. 9.07.

<sup>175</sup> Written Comments of Kosovo, para. 4.22(a).

<sup>176</sup> Security Council, provisional verbatim record, fifty-fourth year, 4011 th meeting, 10 June 1999, S/PVAOII and SIPVAOII (Resumption 1) [Dossier No. 33] p. 5.

<sup>177</sup> Մալայզիայի հայտարարություն, Security Council, provisional verbatim record, fifty-fourth year, 4011th meeting, 10 June 1999, S/PV.4011, p. 16 [Dossier No. 33].

<sup>178</sup> Written Statement of Kosovo, para. 9.01.

<sup>179</sup> Written Statement of Austria, paras. 29-30.

<sup>180</sup> Written Statement of Austria, paras. 31, 34.

չի կարող որևէ կերպ առաջացնել Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության տարածքային ամբողջականությունը հարգելու պարտավորություն, քանի որ Հավելվածի բովանդակությունը ենթադրում է, որ այն առաջադրում է միայն միջանկյալ լուծումներ միջանկյալ ժամանակահատվածի համար:<sup>181</sup>

168. Իրենց գրավոր հայտարարություններում Սերբիան և մի շարք այլ պետություններ փաստում են, որ 1244 բանաձևին նախորդող բանակցությունները (Rambouillet<sup>182</sup>, G-8-ի շրջանակներում<sup>183</sup>, Ահտիսաարի-Չերնոմիրդին բանակցությունները<sup>184</sup> և Ռազմական համաձայնագրի<sup>185</sup> կնքման բանակցությունները) ապացուցում են, որ Կոսովոն անջատվելու իրավունքով օժտված չի եղել, սակայն դրանք չեն նշում, որ այս բանակցային գործընթացներից բխող տեքստերից ոչ մեկը չի արգելում Կոսովոյին հռչակել իր անկախությունը իր ներկայացուցիչների միջոցով<sup>186</sup>:

169. Կոսովոյի շուրջ քաղաքական բանակցությունները, որոնք գլխավորում էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Մարտի Ահտիսաարին, հանգեցին այն արդյունքին, որ 2 կողմերի համար ընդունելի տարբերակով հարցի լուծման հնարավորությունը սպառվել է, և միակ հնարավոր ելքը Կոսովոյի անկախությունն է: Կոսովոյի անկախության հռչակումը անօրինական չի համարվել Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ կողմից<sup>187</sup>:

170. 1244 բանաձևի 2-րդ արձանագրությունում նշված Սերբիայի տարածքային ամբողջականությունը վերաբերում է միայն միջանկյալ քաղաքական գործընթացի փուլին, որը պետք է գործի վերջնական կարգավիճակի որոշումից առաջ: <sup>188</sup> Կոսովոյում հաստատվել էր ժամանակավոր կառավարություն, որը չէր բացառում հետագայում Կոսովոյի անկախության հռչակումը: Բանաձևով արգելվում էր ՀԴՀ-ի կողմից կառավարման իրականացումը Կոսովոյում ժամանակավոր կառավարման շրջանում: Կոսովոյից դուրս բերվեցին սերբական բոլոր զինված և ոստիկանական ուժերը: 1999 թվականի հուլիսից ի վեր Սերբիայի իշխանությունը ոչ մի կերպ չէր տարածվում Կոսովոյի վրա: Գլխավոր քարտուղարի և հատուկ ներկայացուցչի հանձնարարականներում նշված չէ, որ Կոսովոյի կարգավիճակը կարող է որոշվել միայն Սերբիայի համաձայնությամբ և Անվտանգության խորհրդի հետագա որոշումների հիման վրա: <sup>189</sup>

171. Իսկ, օրինակ, Վրաստանին վերաբերող Անվտանգության խորհրդի բանաձևերում նշված էր, որ «կողմերը պետք է հասնեն Աբխազիայի հարցի արագ քաղաքական հանգուցալուծմանը Վրաստանի պետության շրջանակներում», ինչը բացակայում է կոսովոյի դեպքում<sup>190</sup>:

172. 2007թ. դեկտեմբերին պարզ էր, որ արդեն խնդիրը բանակցությունների միջոցով լուծելու բոլոր հնարավորություններն արդեն սպառվել էին: Բոլոր հիմնական մասնակիցները համաձայն էին այն բանի շուրջ, որ գոյություն ունեցող ստատուս քվոն անկայուն էր<sup>191</sup>:

<sup>181</sup> Written Statement of Austria, para. 32.

<sup>182</sup> Written Comment of Serbia, paras. 781-784.

<sup>183</sup> Written Comment of Serbia, paras. 667 and 686-687.

<sup>184</sup> Written Comment of Serbia, paras. 684-685.

<sup>185</sup> Written Comment of Serbia, paras. 668-674.

<sup>186</sup> Written Comments of Kosovo, para. 5.05.

<sup>187</sup> Written Statement of Kosovo, para. 9.05.

<sup>188</sup> Written Statement of Kosovo, para. 9.30.

<sup>189</sup> Written Statement of Kosovo, para. 9.16.

<sup>190</sup> Written Statement of Kosovo, para. 9.11.

<sup>191</sup> See, among many such statements, the second Eide Report ("A comprehensive review of the situation in Kosovo", SI2005/635, 7 October 2005, Annex, para. 63 [Dossier No. 193]); the Report of the Security Council Mission ("the current status quo was not sustainable", S/2007/256, 4 May 2007, para. 59 [Dossier No. 207]); the Contact Group Ministers on 27 September 2007, who "endorsed fully the United Nations Secretary-General's assessment that the status quo is not sustainable" (Statement on Kosovo by the Contact

Վերադարձը մինչ 1999թ մարտի իրադրության անհնար էր համարվում<sup>192</sup>: Անվտանգության խորհրդի նոր որոշում ընդունելու հավանականությունը ևս բավականին էր: Վերջինիս հանձնարարությամբ օգոստոսից դեկտեմբերի 10-ը տրոյկային հանձնարարվեց վարել բանակցությունները: դեկտեմբերի 4-ին նրանք եզրակացրին, որ կողմերն անկարող են համաձայնության գալ:

173. Ուստի ընդունվեց անկախության հռչակագիրը և Կոսովոյի Հանրապետության սահմանադրությունը: Ո՛չ Անվտանգության խորհուրդը, ո՛չ էլ Գլխավոր քարտուղարը (կամ էլ վերջինիս հատուկ ներկայացուցիչը) որևէ քայլեր չձեռնարկեցին՝ արգելելու նման գործողությունները: <sup>193</sup> 2007թ մարտի 26-ին հատուկ ներկայացուցիչ Ահտիսաարին Անվտանգության խորհրդին իր ներկայացրած զեկույցում պնդում է, որ հետագա բանակցություններն անիմաստ են, և Կոսովոն պետք է անկախ դառնա՝ վերահսկվելով միջազգային հանրության կողմից:<sup>194</sup>
174. Մյուս կողմից, Անվտանգության խորհուրդը ընդհանրապես, և 1244 բանաձևի դեպքում մասնավորապես, պարտավորություններ չի սահմանում ոչ պետական դերակատարների համար: Իսկ Կոսովոյի հղումները վերաբերում են ներքին զինված կոնֆլիկտներին (Խորվաթիա, Վրաստան, Բոսնիա և Հերցեգովինա, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Սովալի և Սուդան): Մինչդեռ Կոսովոյի դեպքը դրանց հետ առընչություն չունի, քանի որ այն խաղաղ միջոցներով անջատմանն է վերաբերում: Եվ ավելին, Կոսովոն այստեղ չի նշում, որ դրանք, ըստ էության, ներքին կոնֆլիկտներ չեն, քանի որ առկա էր արտաքին միջամտություն, որի մասին նշել է ԱՄԴ (*Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Merits, Judgment, para. 386*):
175. 1244 բանաձևին նախորդող համաձայնագրերի (Rambouillet Serbia, paras. 781-784.), G-8-ի շրջանակներում (Written Statement of Serbia, paras. 667 and 686-687), Ահտիսաարի-Չերնոմիրդին բանակցությունները [Written Statement of Serbia, paras. 684-685] և Ռազմական համաձայնագրի տեքստերից ոչ մեկը չի արգելում Կոսովոյին հռչակել իր անկախությունը իր ներկայացուցիչների միջոցով: Դրանք խուսափել են սահմանել, թե ինչպիսին պիտի լինի Կոսովոյի վերջնական կարգավիճակը և չեն տվել Սերբիային veto-ի իրավունք այդ կարգավիճակի որոշման գործում:<sup>195</sup>
176. Կոսովոն պնդում է, որ փաստացի բանաձևում չկա որևէ պահանջ կամ անգամ ուղղերձ Կոսովոյի ալբանական առաջնորդներին, ինչը կար նախկին մի քանի բանաձևերում (1160 (1998), 1199 (1998)), ավելին, չկա որևէ արգելք անկախության հռչակագրի ընդունման կամ այլ գործողությունների համար, որոնք կարող են որոշել Կոսովոյի քաղաքական կարգավիճակը: Անհրաժեշտ է ընդգծել, որ Կոսովոն իր անկախությունը հռչակել է բանակցությունների ձախողումից հետո, որը կրտիկական ամսաթվի բացթողում չէ, քանի որ միակողմանի անջատման իրականացումը առանց բանակցություններով հարցը լուծել փորձելու կհակասեր ԱԽ 1244 (1999) բանաձևին, որում էլ ամրագրված էր վեճը ՄԱԿ-ի միջնորդությամբ բանակցությունների միջոցով լուծելու պահանջը:<sup>196</sup>

Group Ministers, New York, 27 September 2007, S/2007/723, 10 December 2007, Annex III [Dossier No. 209]). Ahtisaari said in his report, "Kosovo's current state of limbo cannot continue" (Report of the Special Envoy of the Secretary-General on Kosovo's future status, S/2007/168, 26 March 2007, Annex, para. 4 [Dossier No. 203]).

<sup>192</sup> Contact Group Statement, London, 31 January 2006 (available on <<http://www.unosek.org/docref/fevrier/STATEMENT BY THE CONTACT GROUP ON THE FUTURE OF KOSOVO - Eng.pdf>

<sup>193</sup> Written Statement of Kosovo, para. 4.57.

<sup>194</sup> Report of the Special Envoy of the Secretary-General on Kosovo's future status, S/2007/168, 26 March 2007, heading [Dossier No. 203]. para. 2-4, հղումն ըստ՝ Written Statement of Kosovo, para. 5.21.

<sup>195</sup> Written Comments of Kosovo, para 5.06.

<sup>196</sup> Written Statement of Estonia, para. 11.

177. Հոչակագիրը չի հակասում 1244 բանաձևին, եթե նույնիսկ հարցը դիտարկենք ինքնակառավարման ժամանակավոր ինստիտուտների գործողություն *ultra vires* բնույթի տեսանկյունից: Այսպես, ըստ Կոսովոյի, ինքնակառավարման ժամանակավոր մարմինները չեն, որ հոչակել են անկախությունը: Ինքնակառավարման ժամանակավոր մարմինները որպես ինստիտուտների ամբողջություն չեն գործում կոլեկտիվ կերպով նույնիսկ իրենց ամենօրյա գործունեությունում, և չեն կարող համարվել Հոչակագիրը ընդունող:<sup>197</sup>
178. Ըստ Կոսովոյի, եթե նույնիսկ ժողովրդավարության ճանապարհով Կոսովոյի առաջնորդների գործողությունները համարվեն Ինքնակառավարման ժամանակավոր ինստիտուտների գործողություններ, դրանք չեն կարող 1244 բանաձևին կամ UNMIK-ի ժամանակավոր փուլի կանոնակարգերին հակասող ճանաչվել: 2008 թ.-ի վերջնական կարգավիճակի սահմանումը համաձայնեցվել է ՄԱԿ-ի՝ գործընթացներին տեղում հետևող մարմինների հետ, քանի որ վերջիններս էլ են ընդունել, որ *status quo*-ն Կոսովոյում անկենսունակ է, Սերբիայի հետ բանակցությունները անիմաստ են, և անկախությունը միակ հնարավոր այլընտրանքն էր: Այս իմաստով, Կոսովոյի ապագա կարգավիճակը սահմանելու քաղաքական գործընթացի վերջին հասնելով՝ 1244 բանաձևի 11 (f) պարագրաֆը սահմանում էր, որ Կոսովոյի ժամանակավոր կառավարման մարմիններից իշխանությունը պիտի անցներ քաղաքական կարգավորման ներքո սահմանված ինստիտուտներին: Այս ամենի լույսի ներքո 2008 թ.-ի Անկախության հոչակագիրը ժողովրդի անունից գործող սահմանադիր մարմնի իրավագործության իրացում էր:<sup>198</sup>
179. Եվ եթե անգամ Ինքնակառավարման ժամանակավոր ինստիտուտները ընդունել են Հոչակագիրը, Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչն է, որ պիտի որոշի, թե ժամանակավոր իշխանությունների գործողությունները *ultra vires* կամ Սահմանադրական կարգերին համապատասխան է, թե ոչ: Սակայն Հոչակագրի հետ կապված նման ոչ մի գործողություն չի նախաձեռնվել Հատուկ ներկայացուցչի կողմից: Եվ հետևաբար Հատուկ ներկայացուցչի կողմից Հոչակագրի հակաիրավական չհայտարարվելը հիմք է եզրակացնելու համար, որ դա չի հակասել նրա կողմից սահմանված սահմանադրական կարգին և իր բնույթով *ultra vires* չէր:<sup>199</sup>
180. Եթե նույնիսկ ենթադրվի, որ Հոչակագիրը *ultra vires* ակտ էր և հակասում էր սահմանադրական կարգին, Սերբիան սխալվում է՝ պնդելով, որ դա հակասում է միջազգային իրավունքին, քանի որ դա միայն ներքին իրավունքի խախտում պետք է համարել՝ կիրառելի միայն Կոսովոյում: Եվ, որպես այդպիսին, Հատուկ ներկայացուցչի իշխանության կամ սահմանադրական կարգի ամեն մի շեղում պետք է դիտարկել միայն որպես ներքին իրավունքի խախտում, ոչ թե միջազգային: Եվ հետևաբար դուրս է գալիս Դատարանի առջև բարձրացրած հարցի շրջանակներից: Այս առումով, եթե Անկախության հոչակագիրը համարվեր *ultra vires*, ապա այդպիսին են եղել գրեթե բոլոր անկախության հոչակագրերը:<sup>200</sup>
181. Այն փաստը, որ բանաձևը Հարավսլավիայի տարածքային ամբողջականության պահպանմանը անդրադառնում էր միայն որոշակի ժամանակահատվածի համատեքստում և չէր տալիս վերջնական լուծում, հստակորեն ցուցադրում է, որ 1999թ. հունիսին Անվտանգության խորհրդի նպատակներն էին հանդիսանում՝ ավարտել բռնությունները և կոնֆլիկտը, սկսել քաղաքական գործընթաց, որը կհանգեցներ հարցի

<sup>197</sup> Written Comments of Kosovo, para 5.62; տե՛ս նաև Written Statement of Estonia, para. 3.

<sup>198</sup> Written Comments of Kosovo, para. 5. 63.

<sup>199</sup> Written Statement of the Kingdom of the Netherlands, p. 4.

<sup>200</sup> Written Comments of Kosovo, paras. 5. 66.

վերջնական լուծմանը, քաղաքական գործընթացի ընթացքում ունենալ որոշակի վերահսկող դիրք՝ կանխելու համար դրա ընդհատումները: Հետևաբար, Անվտանգության Խորհուրդը նպատակ չունի ամրագրել որոշակիացված կարգավիճակ՝ որպես վերջնական լուծում: 1244 Բանաձևը բացարձակապես չի անդրադառնում, թե ինչպիսին կլինե՞ր վերջնական լուծումը քաղաքական գործընթացների արդյունքում: Այն չի նախատեսում անկախություն, սակայն նաև չի բացառում այն:<sup>201</sup>

182. Այն հանգամանքը, որ Բանաձևը նախաբանում անդրադառնում է Սերբիայի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը, որևէ կերպ չի կարող նշանակել, որ Բանաձևն արգելում Կոսովոյի անկախացումը: Բանաձևը հստակորեն տարբերակում է ժամանակավոր և վերջնական կարգավիճակները: Բանաձևի համաձայն՝ Կոսովոյի անկախությունն արգելվում էր այնքանով, որքանով այն կվտանգեր ժամանակավոր կարգավիճակը:<sup>202</sup>

183. Բանաձև 1244-ը չէր բացառում Կոսովոյի անկախացման հնարավորությունը: Այն, որ մի շարք բանաձևերում, ելնելով անվտանգության և խաղաղության պահպանման անհրաժեշտությունից, ԱԽ-ն կոչ է արել ոչ միայն պետություններին, այլ նաև խմբերին պետությունների ներսում հարգել պետությունների տարածքային ամբողջականությունը, չի նշանակում, որ այդ պարտավորությունը բարձրացել է *erga omnes* պարտավորության մակարդակի և որ այն ուղղված է միջազգային հանրության բոլոր անդամներին: Այն, որ Բանաձև 1244-ը չի անդրադառնում Կոսովոյի բնակչության՝ Սերբիայի տարածքային ամբողջականությունը հարգելու պարտավորությանը, ինքնին վկայում է այդ մասին:<sup>203</sup>

### ***G. Արդյոք Կոսովոն հանդիսանու՞մ է պետություն ժամանակակից միջազգային իրավունքի տեսանկյունից***

#### **ՈՉ**

184. Կիպրոսի Հանրապետությունը գտնում է, որ Կոսովոն չի բավարարում պետականության հատկանիշներին, որոնք գործում են ժամանակակից միջազգային իրավունքում: Համաձայն 1933թ. Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին Մոնտեվիդեոյի Կոնվենցիայի պետությունը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, պետք է ունենա հետևյալ հատկանիշները. 1. մշտական բնակչություն; 2. որոշակի տարածք; 3. կառավարություն; և 4. այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու ունակություն:<sup>204</sup>

185. Կոսովոն չունի ոչ որոշակի տարածք և ոչ էլ մշտական բնակչություն, քանի որ քսաներորդ դարասկզբից ի վեր Սերբիայի կազմում Կոսովոյի վարչական սահմանները բազմա անթարկվել են փոփոխությունների, և բնակչության տեղաշարժը եղել է զգալի, տարբեր պատճառներով՝ այդ թվում նաև էթնիկ գտումների պատճառով: Բնակչության տեղաշարժերի պատճառով ոչ ալբանացի բնակչության զգալի հատված դուրս է եկել Կոսովոյից:<sup>205</sup>

<sup>201</sup> Written Statement of the Federativ Republic of Germany, p. 38

<sup>202</sup> Written Statement of France, p.32, para. 2.28

<sup>203</sup> Written Comments of France, paras. 30-31

<sup>204</sup> Written Statement of the Republic of Cyprus, para. 166, p. 43.

<sup>205</sup> Written Statement of the Republic of Cyprus, para. 172.

186. Կոսովոյի կառավարությունը մնում է զգալիորեն կախված միջազգային ներկայացվածությունից և երրորդ պետությունների անձնակազմերից և զինված ուժերից:<sup>206</sup>
187. Ինչ վերաբերում է այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու ունակությանը, ապա Կիպրոսի Հանրապետությունը կարծում է, որ արտաքին հարաբերություններում հիմնական լիազորությունները պատկանում են Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչին (SRSG) և UNMIK- ին:<sup>207</sup>
188. Նշված փաստական հատկանիշներից զատ, արդի միջազգային իրավունքում առկա է նաև իրավաչափության՝ չափանիշը, համաձայն, որի այս կամ այն կազմավորումը որպեսզի կոչվի պետություն պետք է ոչ միայն բավարարի Մոտեվիդեյի Կոնվենցիայով ամրագրված չորս հատկանիշներին, այլ նաև պետք է ստեղծված լինի միջազգային իրավունքի որոշակի հիմնարար սկզբունքներին համապատասխան եղանակով և ընթացակարգով:<sup>208</sup>
189. Որպես օրինակ կարող է հանդիսանալ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունը, որը հիմնադրվել էր ԽՍՀՄ կողմից 1945 թ. Չորս Տերությունների Համաձայնագրի (Four Power Agreement) խախտմամբ, ըստ ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի, ինչի հետևանքով ԳԴՀ-ն չէր դիտվում իբրև պետություն:<sup>209</sup>
190. Նմանապես, ոչ Կառավարման ժամանակավոր մարմինները և ոչ էլ Անվտանգության խորհուրդը իրավասու չէին հռչակել Կոսովոն անկախ պետություն, ինչից հետևում է, որ ամեն դեպքում Կոսովոն չի կարող դիտվել իբրև անկախ պետություն:<sup>210</sup>

## ԱՅՈ

191. Պետականության փաստացի չափանիշներն են որոշակի տարածքը, մշտական բնակչությունը, արդյունավետ կառավարումը և հնարավորությունը երկիրը ներկայացնելու միջազգային հարաբերություններում: Կարևոր է նաև ժողովրդի կամքը ստեղծելու պետություն, որը հաճախ արտահայտվում է անկախության հռչակագրի միջոցով: Պետության ստեղծման կարևոր պայման է նաև այլ պետությունների կողմից ճանաչումը<sup>211</sup>:
192. Անկախության հռչակագիրն ընդունվել է ոչ թե Կոսովոյի ինքնակառավարման ժամանակավոր կառույցների (PISG) կողմից, այլ ժողովրդավարական ճանապարհով ընտրված Կոսովոյի ժողովրդի ներկայացուցիչների կողմից:<sup>212</sup> Հռչակագիրն ընդունվել է Ասամբլեայի կողմից, բայց նրանք հավաքվել են արտահերթ նիստի և գործել են հատուկ ընթացակարգով, ոչ թե PISG կանոններով:<sup>213</sup>
193. Կոսովոյի պնդումներում մեծ ուշադրություն է դարձվում 1244 բանաձևի հիման վրա Կոսովոյում գործող միջազգային կառույցների գործառույթների և նրանց կատարած բարեփոխումների նկարագրման վրա: Դա արվել է հերքելու համար Սերբիայի այն

<sup>206</sup> Written Statement of the Republic of Cyprus, para. 173, p. 43.

<sup>207</sup> Written Statement of the Republic of Cyprus, paras. 177-183.

<sup>208</sup> Օրինակ՝ S.Sur and J. Combacau, *Droit International public* (7<sup>th</sup> ed., 2006), 282-283; J. Crawford, *The Creation of States in International Law* (2<sup>nd</sup> ed., 2006), Ch. 3. Նշվածը կարող է նաև հանդիսանալ առավել ընդհանուր սկզբունքի՝ *ex injuria non oritur jus*, և այսպես կոչված ‘Stimson Doctrine of Non-Recognition’, 14 BYIL 65 (1934) հղումն ըստ՝ Written Statement of the Republic of Cyprus, para. 184, p.47.

<sup>209</sup> Declaration of the UK House of Lords in *Carl Zeiss Stiftung v. Rayner & Keeler Ltd*, [1967] 1 AC 853 հղումն ըստ՝ Written Statement of the Republic of Cyprus, para. 188, p. 48.

<sup>210</sup> Written Statement of the Republic of Cyprus, para. 189.

<sup>211</sup> Written Statement of Kosovo, para. 8.09.

<sup>212</sup> Written Statement of Kosovo, para. 6.01.

<sup>213</sup> Written Statement of Kosovo, para. 6.08.



- պնդումները, թե Կոսովոյում չկա արդյունավետ գործող կառավարություն, ժողովրդավարություն և ոչ խտրական համակարգ:<sup>214</sup>
- 194.2005թ. սկսված Կոսովոյի վերջնական կարգավիճակի շուրջ բանակցություններին զուգահեռ UNMIK-ը Կոսովոյում սկսեց իրագործել իշխանության ապագա փոխանցման ծրագրի իրականացումը:<sup>215</sup> 2006 թ. ստեղծվեց Անցումային շրջանի պլանավորման և իրականացման (TPI) խումբը, որը զբաղվում էր անցումային շրջանի բոլոր ոլորներով՝ ընտրություններ, սահմանադրության կազմում, անվտանգություն, օրենքի գերակայություն, օրենսդրություն, սեփականություն և տնտեսություն, կառավարում և քաղաքացիական վարչակազմ:<sup>216</sup>
- 195.2007թ. նոյեմբերի 17-ին տեղի ունեցան Կոսովոյի Ասամբլեայի և ՏԻԿ մարմինների ընտրությունները՝ Եվրոպական ստանդարտներին համապատասխան:<sup>217</sup> Կոսովոյի ժամանակավոր կառավարման մարմինները ոչ միայն իրականացնում էին Կոսովոյի ներքին կառավարումը, այլ նաև այն ներկայացնում էին միջազգային հարաբերություններում: Մեծ թվով պետություններ իրենց ներկայացուցչությունները բացեցին Պրիշտինայում, որոնք իրենց կարգավիճակով հավասարեցվեցին դիվանագիտական ներկայացուցչությունների: Այդ պետությունները այդ պարագայում չէին սպասում Բելգրադի թույլատվությանը:<sup>218</sup>
- 196.Եվրոպական պետությունների մեծ մասը ճանաչել է Կոսովոն: Նա ճանաչվել է նաև իր բոլոր անմիջական հարևանների կողմից, բացի Սերբիայից: Եվրոպայի շրջանակներում Կոսովոյի կարգավիճակը որպես ինքնիշխան և անկախ պետություն կարևոր է տարածաշրջանային անվտանգության և խաղաղության պահպանման տեսանկյունից: Կոսովոն մեծ աջակցություն է ստացել միջազգային հանրությունից, այդ թվում այնպիսի պետություններից, որոնք դեռևս չեն ճանաչել Կոսովոն:<sup>219</sup>
- 197.Կոսովոյի ապագան մեծապես կախված է Եվրոպական ինտեգրացիոն գործընթացներից: Նա պետք է ջանքեր գործադրի ինտեգրվելու համար Եվրոպական Միություն և Եվրոպայի խորհուրդ:<sup>220</sup>
- 198.Անկախ Կոսովոն գոյություն ունի, և անկախության հռչակումը պետության ձևավորման որոշիչ քայլն է: Բոլոր երեք նախադրյալները, որոնք պահանջվում են պետականության համար տեսության կողմից, առկա են. պետության տարածք, պետության բնակչություն և կառավարություն<sup>221</sup>: Ոչ բոլոր փաստական իրավիճակներն են համապատասխանում իրավունքին՝ ելնելով դրանց զուտ փաստ հանդիսանալուց: Մակայն երբ խոսքը վերաբերում է պետականությանը, միջազգային փորձը ելնում է էֆֆեկտիվության սկզբունքից:<sup>222</sup>

<sup>214</sup> Written Statement of Kosovo, paras. 4.24-4.51.

<sup>215</sup> Written Statement of Kosovo, para. 4.52.

<sup>216</sup> Written Statement of Kosovo, para. 4.53.

<sup>217</sup> Report of the Secretary-General on the United Nations Interim Administration Mission in Kosovo, S/2007/768, 3 January 2008, paras. 3-8 [Dossier No. 84].

<sup>218</sup> Written Statement of Kosovo, para. 9.31.

<sup>219</sup> Written Statement of Kosovo, para. 10.10.

<sup>220</sup> Written Statement of Kosovo, para. 10.15.

<sup>221</sup> Written Statement of the Federativ Republic of Germany, p. 29

<sup>222</sup> Written Statement of of the Federativ Republic of Germany, p. 30

**Կ. Արդյոք Կոսովոյի միակողմանի անջատման  
իրավաչափությունը անհրաժեշտ է գնահատել ՀԴՀ  
ներպետական իրավունքի տեսանկյունից**

**ՈՉ**

199. Որևիցե ակտի իրավաչափությունը կամ ոչ իրավաչափությունը ներպետական իրավունքում որևէ կերպ չի կարող հիմք հանդիսանալ որոշելու համար, թե արդյոք այդ ակտը համապատասխանում է միջազգային իրավունքին կամ արդյոք այդ ակտը կարող է միջազգային իրավունքի համաձայն որևէ հետևանք առաջացնել: Միջազգային իրավունքը առանձին իրավական համակարգ է, որն ունի պետական պաշտոնյաների ակտերի իրավական հետևանքները նախատեսելու իր ուրույն չափանիշները ու չափորոշիչները:<sup>223</sup>
200. Այս սկզբունքը հանդիսանում է միջազգային իրավունքի բոլոր ճյուղերի ելակետային դրույթներից մեկը: Այսպես, Միջազգային իրավախախտումների համար պետությունների պատասխանատվության մասին հողվածների նախագծի հողված 4-ը, որը հստակ սահմանում է, որ պետության ակտը միջազգային հակաիրավական որակելու համար միակ հիմք կարող է հանդիսանալ միջազգային իրավունքը, և որ ներպետական իրավունքի տեսանկյունից այդ ակտը իրավաչափ գնահատելը որևէ նշատանակություն չի կարող ունենալ:<sup>224</sup>
201. Նշված մոտեցմանը համահունչ, միջազգային իրավունքը որևէ կերպ չի կարևորում իրավանախորդ պետության ներպետական իրավունքի տեսանկյունից անջատման իրավաչափության փաստը՝ միջազգային հարաբերություններում այդ ակտի իրավական գնահատականը տալու համար: Անջատման դեպքերի մեծամասնությունում, իհարկե, իրավանախորդ պետության իրավունքը չի պահպանվել, նույնիսկ անջատման իրավունքի ներպետական ամրագրման դեպքում էլ այդ ներպետական ընթացակարգերը չեն պահպանվում:<sup>225</sup>
202. Ավստրիայի գրավոր դիրքորոշումներում հղում է կատարվում *re Secession of Quebec* գործով կայացված որոշման վրա. «Չնայած, որ ոչ Սահմանադրությունը, և ոչ էլ միջազգային իրավունքը չեն թույլատրում միակողմանի անջատումը, այնուամենայնիվ դա չի բացառում անջատման հակասահմանադրական հռչակումը, որը արդյունքում հանգեցնում է փաստացի անջատման»:<sup>226</sup>

**ԱՅՈ**

203. Կոսովոն և մի շարք այլ պետություններ, իրենց պնդումներում պարբերաբար հղում են կատարում հենց Նախկին Հարավսլավիայի ներպետական իրավունքի վրա: Ասպես, Կոսովոյի կարգավիճակը նախկին Հարավսլավիայում գործնականորեն նույնն էր, ինչ

<sup>223</sup> Written Statement of the United Kingdom, para. 5.2.

<sup>224</sup> Draft Articles on Responsibility of States for Internationally Wrongful Acts, UN GA resolution 56/83 of 21 December 2001 հղումն ըստ՝ Written Statement of the United Kingdom, para. 5.2.

<sup>225</sup> Written Statement of of the United Kingdom, para. 5.5.

<sup>226</sup> Reference re Secession of Quebec, Supreme Court of Canada, 20 August 1998, 2 S.C.R. 217 (1998) para. 155, հղումն ըստ Written Statement of Austria, para. 39, pp. 22-23.

ՀՄԴՀ հանրապետություններին, մինչև որ այն անօրինական ճանապարհով փոփոխվեց 1989 թվականին:<sup>227</sup> Սերբիան 1989 թվականին վերացրեց Կոսովոյի ինքնավարությունը, ինչը, համաձայն ՀՄԴՀ սահմանադրության նա չէր կարող անել առանց Կոսովոյի ժողովրդի համաձայնության: ՀՄԴՀ-ի փլուզումից առաջ Կոսովոն ունեցել է երկակի կարգավիճակ. այն եղել է դաշնության սուբյեկտ և Սերբիայի ինքնավար մարզ:

204. ՀՄԴՀ-ի 1974 թ. սահմանադրությամբ Կոսովոն օգտվել է նույն իրավունքներից, ինչ 6 հանրապետությունները: Կոսովոն իրավունք է ունեցել նշանակելու թեկնածու դաշնային նախագահական ընտրություններին մասնակցելու համար: Կոսովոն ուղղակիորեն ներկայացված է եղել դաշնային Ասամբլեայում և իրավունք է ունեցել դիմելու դաշնային Սահմանադրական դատարան, եթե նրա և այլ հանրապետությունների, այդ թվում՝ Սերբիայի միջև վեճեր ծագեին:<sup>228</sup>

## V. Անկախության հռչակագրի համապատասխանությունը միջազգային իրավունքին

205. Կանոնը, համաձայն որի որևէ ակտը պետք է գնահատվի այդ ակտի կամ գործողության տեղի ունենալու պահին գործող իրավունքի լույսի ներքո, հանդիսանում է միջազգային իրավունքի կայացած սկզբունք:<sup>229</sup> Այս գործի տեսանկյունից կրիտիկական պահ (critical date) է հանդիսանում 2008թ.-ի փետվարի 17-ը, երբ ընդունվել է անկախության հռչակագիրը: Ակտերը, որոնք տեղի են ունեցել կրիտիկական ամսաթվից հետո, էական չեն անկախության հռչակագրի՝ միջազգային իրավունքին համապատասխանությունը որոշելու համար:<sup>230</sup>

### ՈՉ

206. Ինչպես Արդարադատության մշտական պալատն է եզրակացրել *S.S. Lotus* գործով կայացրած որոշման մեջ, «միջազգային իրավունքը պետությունների համար թողնում է գործելու բավականին լայն հնարավորություններ՝ սահմանափակելով դրանք որոշ արգելող նորմերով»<sup>231</sup>: Դանիական կառավարությունը գտնում է, որ առկա չէ ոչ սովորության իրավական, և ոչ էլ պայմանագրային իրավական արգելք անկախության

<sup>227</sup> Written Statement of Kosovo, para. 10.01.

<sup>228</sup> Written Statement of Kosovo, para. 10.04.

<sup>229</sup> Judge Max Huber in the *Island of Palmas Case (or Miangas) (United States of America v. The Netherlands)*, Award, II UNRIAA 829, p. 845; Rosalyn Higgins, has noted: “Few arbitral *dicta* have been more widely cited, or have come to assume a more important place in international law, than [this] *dictum* of Judge Huber in the *Island of Palmas* case”: Rosalyn Higgins, ‘Some Observation on the Inter-Temporal Rule in International Law’, in Jerzy Makarczyk (ed.), *Theory of International Law at the Threshold of the 21<sup>st</sup> Century – Essays in the honor of Krzysztof Skubiszewski* (The Hague: Kluwer Law International, 1997), reprinted in Rosalyn Higgins, *Themes and Theories. Selected Essays, Speeches, and Writings in International Law*, Vol.2 (Oxford University Press, 2009), p. 867, հղումն ըստ Written Statement of Argentina, para. 43.

<sup>230</sup> Այս սկզբունքը իր ամրագրումն է ստացել դատական որոշումներում՝ *Sovereignty over Pulau Ligitian and Pulau Sipadan (Indonesia/Malaysia)*, Judgment I.C.J. Reports 2002, p. 682, para. 135; *Territorial Dispute between Nicaragua and Honduras in the Caribbean Sea (Nicaragua/Honduras)*, Judgment of 8 October 2007, para. 117; *Sovereignty over Pedra Branca/Pulau Batu Puteh, Middle Rocks and South Ledge (Malaysia/Singapore)*, Judgment of 23 May 2008, para. 32 հղումն ըստ Written Statement of Argentina, para. 44; Written Statement of Denmark, para. 2.1; Written Statement of the Czech Republic, p. 7.

<sup>231</sup> The Lotus, PCIJ Series A No. 10 (1927), pp. 18 & 19 հղումն ըստ Written Statement of Denmark, para. 2.2.

հոչակագրի միակողմանի ընդունման առնչությամբ: Արգելող սովորությանին նորմի բացակայությունը հիմնավորվում է ՄԱԿ-ի պրակտիկայով. հազվադեպ է եղել, որ Անվտանգության խորհուրդը կամ Գլխավոր ասամբլեան բացասաբար արտահայտվեն այս կամ այն անկախության հոչակագրի վերաբերյալ, իսկ բացասական գնահատական արտահայտվել է միայն այն դեպքում, երբ այդ հոչակագիրը հակասել է միջազգային իրավունքի հիմնարար նորմերին:<sup>232</sup>

207. Համընդհանուր ճանաչված է, որ անկախության հոչակագրերը, որպես այդպիսին, փաստի հարց է, որը միջազգային իրավունքի կողմից ոչ թույլատրվում է, ոչ արգելվում: <sup>233</sup> Անկախության հոչակումը չի կարգավորվում ոչ ՄԱԿ-ի Կանոնադրությամբ, ոչ որևէ այլ միջազգային ընդհանուր համաձայնագրով, ոչ էլ միջազգային սովորությանին իրավունքով: <sup>234</sup> Այս փաստը զարմանալի չէ, քանի որ որպես ընդհանուր կանոն, կարգավորում է պետությունների միջև հարաբերությունները, այլ ոչ թե անձանց վարքագիծը՝ պետության ներսում: <sup>235</sup> Իհարկե, գոյություն ունեն նաև որոշ բացառություններ, որոնք վերաբերում են միջազգային մարդասիրական իրավունքին<sup>236</sup>, սակայն անկախության հոչակումը այդ բացառությունների շարքին չի դասվում: Նոր պետության ստեղծմանը հանգեցնող իրադարձությունները ընդհանուր առմամբ առաջացնում են պետության ներքին իրավասությանը վերաբերող խնդիրներ: <sup>237</sup>

208. Նորվեգիան պնդում է, որ անկախության միակողմանիորեն հոչակումը չի հակասում միջազգային իրավունքին, քանի որ «անկախության հոչակումը՝ որպես այդպիսին, չի հանդիսանում հանրային միջազգային իրավունքի կարգավորման օբյեկտ», և «այնքանով, որ դա համարվում է փաստական իրադարձություն կամ քաղաքական փաստ, որպես օրինակ, միջազգային իրավունքը մեծամասամբ սահմանափակում է իրեն դրանցից հետևանքները սահմանելիս, թե նման հոչակագիրը արդյունք կթողնի արդյունավետ և կայուն պետական իշխանության հաստատմանը»: <sup>238</sup>

209. Իհարկե, անկախության հոչակումը կարող է, և որպես այդպիսին, հաճախ հանդիսանում է պետության ներպետական իրավունքի խախտում: Միաժամանակ, դա չի նշանակում, որ այն հանդիսանում է միջազգային իրավունքի խախտում: Ինչպես նկատել է Օպենհեյմը. «Չնայած, որ ապստամբությունը կհանդիսանա պետության ներպետական իրավունքի խախտում, միջազգային իրավունքի որևէ խախտում տեղի չի ունենա՝ ելնելով զուտ այն փաստից, որ ապստամբական շարժումը փորձում է տապալել պետության կառավարությունը կամ առանձնանալ պետությունից»: <sup>239</sup>

<sup>232</sup> Written Statement of Denmark, paras. 2.2 & 2.3.

<sup>233</sup> *Theodore Christakis* “Secession: International Law Perspectives”, p.145 (Kohen, ed. 2006); See e.g. *Lauterpacht*, recognition in international Law (1947) (“International law does not condemn rebellion or secession aiming at acquisition of independence”), հղումն ըստ Written Statement of the United States of America, pp.50-53; Kosovo Written Statement para. 8.02; Written Statement of the United Kingdom of Great Britain and Northern Ireland, para. 1.15; Written Statement of Ireland, para. 18; Written Statement of Japan, p. 2; Written Statement of the Republic of Latvia, para. 1, p. 1; Written Statement of the Grand Duchy of Luxembourg, para. 16.

<sup>234</sup> Marcelo Kohen, “Introduction” in *Secession: International Law Perspectives*, p.20 (“No international rule prevents a political movement or an entity within a State from seeking a secession through non-focible means”); John Dugard & David Raic, “The Role of Recognition in the law and practice of secession” in *Secession: International Law Perspectives*, p. 102: հղումն ըստ Written Statement of the United States of America, pp. 50-56.

<sup>235</sup> See e.g. 1 *Oppenheim’s International law* p. 6 (9<sup>th</sup> ed. 1992)

<sup>236</sup> See e.g. *ibid* p. 7 հղումն ըստ Written Statement of the United States of America, p. 51.

<sup>237</sup> Thurer, *Secession*, in *Max Planck Encyclopedia of Public International Law*; p.2; See also Li-Ann Thio “International Law and Secession in Asia and the Pacific regions, in *Secession: International Law Perspectives*, p. 299 հղումն ըստ Written Statement of the United States of America, p.51.

<sup>238</sup> Written Statement of Romania, para. 10.

<sup>239</sup> See e.g. *ibid*. para. 49

210. Բազմաթիվ պետություններ հայտարարել են իրենց անկախության մասին հարյուրամյակների ընթացքում, նույնիսկ այնպիսի դեպքերում, երբ որևէ խումբ փորձել է անջատվել պետությունից, որի իրավասության տակ այն գտնվել է, առանց այդ պետության համաձայնության, և նման դեպքերը չեն համարվել միջազգային իրավունքի խախտում:<sup>240</sup>
211. Այդպիսով, համընդհանուր ճանաչված է, որ միջազգային իրավունքի տեսանկյունից պետության ձևավորման գործընթացը իրենից ներկայացնում է փաստի հարց:<sup>241</sup> Անկախության հռչակագրի ընդունմանը կարող են ուղեկցել իրադարձություններ, որոնք կկարգավորվեն միջազգային իրավունքի կողմից, սակայն «Պետությունը, միջազգային իրավունքի համատեքստում, պարզապես իրավաբանական անձ չէ, որի ձևավորման գործընթացը սահմանված է օրենքով: Ավելի ճիշտ՝ այն «հիմնական փաստն է», որը նախորդում է իրավունքին, և որը իրավունքը ճանաչում է միայն դրա ձևավորումից հետո՝ վերագրելով դրան որոշակի հատկանիշներ, այդ թվում իրավական կարգավիճակ»:<sup>242</sup>
212. Երբ 1991թ. հունիսին Խորվաթիան և Սլովենիան, այնուհետև նույն տարվա սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին Մակեդոնիան և Բոսնիա և Հերցեգովինան համապատասխանաբար անկախացան Հարավսլավիայի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետությունից ընդունելով անկախության հռչակագրեր, միջազգային հանրության մեծամասնությունը դեմ էր հանրապետությունների անկախացմանը և յուրաքանչյուր դեպքում անկախացումը տեղի էր ունենում դաշնային կառավարության կամքին հակառակ: Այդուամենայնիվ, վերոնշյալ հռչակագրերի փաստի առումով միջազգային հանրությունը չակնարկեց (չորոշեց), որ դրանք խախտում են միջազգային իրավունքը կամ կարգավորվում են միջազգային իրավունքի կողմից:<sup>243</sup>
213. Չնայած, որ անկախության հռչակումը, որպես այդպիսին, չի խախտում միջազգային իրավունքի նորմերը՝ այնուամենայնիվ հաճախ այն ուղեկցվում է գործողություններով, որոնց համատեքստում այն կարող է որակվել որպես միջազգային իրավունքի կոպիտ խախտում: Սա շատ կարևոր տարբերություն է: Օրինակ, եթե անկախության հռչակագիրը ընդունվել է՝ պաշտպանելու ապարտեիդի ռեժիմի ստեղծումը, ինչը կհանդիսանա միջազգային իրավունքի իմպերատիվ նորմի լուրջ խախտում<sup>244</sup>, անկախության հռչակումը կորակվի որպես անօրինական: Այդպես, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ընդունել է բանաձև՝ քննադատելով իշխանության զավթումը Հարավային Ռոդեզիայի կառավարության՝ սպիտակամորթների գերակայությունը ճանաչող ղեկավարի՝ Յան Սմիթի կողմից, և հաստատեց, որ կառավարության անկախության հռչակագիրը իրավական ուժ չունի:<sup>245</sup> Նույնիսկ այդ դեպքում, Անվտանգության խորհուրդը փաստեց, որ հռչակագիրը իրավաբանորեն առոչինչ է, այլ ոչ որ անկախության հռչակագիրը ինքնին միջազգային իրավունքի խախտում է:<sup>246</sup> Այսպիսով, այս դատապարտումը ուղղված է հռչակագրի իրավական հետևանքներին, այլ ոչ անկախության հռչակման օրինականությանը՝ որպես այդպիսին:<sup>247</sup>

<sup>240</sup> Written Comments of Kosovo, para. 8.07.

<sup>241</sup> Marcelo Kohen, "Introduction" in Secession: International Law Perspectives, p. 4.

<sup>242</sup> Georges Abi-Saab, "Conclusion", in Secession: International Law Perspectives, p. 470.

<sup>243</sup> Written Statement of the United States of America, p. 52; Written Comments of Kosovo, para. 8.07-8.16.

<sup>244</sup> Crawford, Fourth Report in State Responsibility, A/CN.4/517, 2 April 2001; para.41, տես օրինակ Written Statement of Ireland, para. 22.

<sup>245</sup> SC Resolution 217 (1965), S/Res/217, տես օրինակ Written Statement of Ireland, para. 23.

<sup>246</sup> Ibid. also SC Official Records 1258<sup>th</sup> meeting, 12 November, 1965, p.19.

<sup>247</sup> Written Statement of the United States of America; "Անկախության հռչակագիրը չի արգելվում միջազգային իրավունքով, եթե այն չի հակասում իմպերատիվ նորմերին" տե՛ս Written Comment of Albania, para. 35.

214. Այն, ինչ չի արգելվում միջազգային իրավունքով, համարվում է թույլատրելի: Այդպիսով, դա Դատարանի համար բավարար է, որպեսզի ապացուցվի, որ Կոսովայի անկախության հռչակագիրը չի հակասում միջազգային իրավունքի որևէ կիրառելի նորմի: <sup>248</sup>
215. Գոյություն ունեն հիմնավոր փաստեր որոնք հաստատում են, որ անջատման հանգեցնող անկախության հռչակագրերն ունեն զուտ փաստի նշանակություն և միջազգային իրավունքը ընդհանուր առմամբ լռում է դրանց օրինականության առումով: <sup>249</sup>
216. Կոսովոյի անկախության հռչակագիրը համապատասխանում է միջազգային իրավունքին, քանի որ այն.
- անդրադառնում է Կոսովոյի տարածքում բնակվող բոլոր համայնքների իրավունքների պաշտպանությանը, ինչը բխում է մարդու իրավունքների միջազգային իրավունքից;
  - նախատեսում է, որ Կոսովոն լինելու է ժողովրդավարական, աշխարհիկ, բազմազգ հանրապետություն՝ ղեկավարվող խտրականության արգելման և ըստ օրենքի հավասար պաշտպանության սկզբունքներով;
  - նախատեսում է ընդունել սահմանադրություն (արդեն ընդունվել է), որը «կամրագրի բոլոր քաղաքացիների իրավունքներն ու հիմնարար ազատությունները հարգելու պատասխանատվությունը»;
  - ի տարբերություն Սերբիայի սահմանադրության, որով Սերբիան հռչակվում է «սերբերի հայրենիք»՝ Կոսովոյի սերբական համայնքի անդամների իրավունքների պաշտպանությունը ընդգծվում է ոչ միայն Անկախության հռչակագրով, այլև Հռչակագրի ընդունմանը նախորդող շարունակական քաղաքական իրադարձություններով, ելույթներով;
  - ողջունում է Անվտանգության Խորհրդի 1244 բանաձևի հիման վրա ստեղծված միջազգային ներկայացուցչությունների միջոցով միջազգային հանրության աջակցությունը Կոսովոյի զարգացմանը, ինչպես նաև ողջունում է միջազգային քաղաքացիական ներկայությունը, որի նպատակն է վերահսկել «Ահտիսաարիի պլանի» կատարումը և այլն;
  - ամրագրում է Եվրամիությանը լիիրավ անդամակցելու Կոսովոյի նպատակը, և այդ նպատակով բոլոր անհրաժեշտ քայլերը համար քայլերի ձեռնարկումը և պահանջվող բարեփոխումների իրականացումը՝ Եվրամիություն և Հյուսիս-Ատլանտյան Դաշինք ինտեգրվելու համար;
  - ընդունում է միջազգային հանրության պատասխանատու անդամակցության պարտականություն՝ պարտավորվելով առաջնորդվել ՄԱԿ-ի Կանոնադրության, Հելսինկյան Եզրափակիչ Ակտի, ԵԱՀԿ-ի մյուս փաստաթղթերի դրույթներով, և պետությունների միջև հարաբերությունները կարգավորող այլ միջազգային իրավական փաստաթղթերով և միջազգային քաղաքավարության կանոններով, և հրաժարվել ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից, որը կհակասի ՄԱԿ-ի Կանոնադրության նպատակներին;
  - հաստատում է, որ Կոսովոն իրավաբանորեն պարտավորվում է իրականացնել Հռչակագրի դրույթները, ներառյալ հատկապես Ահտիսաարիի պլանով ամրագրված պարտավորությունները: Հաշվի առնելով այս ամենը՝ պարտավորվում է գործել միջազգային իրավունքի սկզբունքներին և Անվտանգության Խորհրդի բանաձևին, ներառյալ 1244 (1999) բանաձևը, համապատասխան: Հրապարակավ հայտարարում ենք, որ բոլոր պետությունները կարող են հիմնվել այդ

<sup>248</sup> Written Statement of the Federal Republic of Germany, p. 8.

<sup>249</sup> Written Statement of the Federal Republic of Germany, p. 27.

հայտարարություններին և դրա հիման վրա տրամադրել մեզ իրենց ընկերությունն ու աջակցությունը: <sup>250</sup>

217. Ինքնին անկախության հռչակագիրը չի կարող հակասել միջազգային իրավունքին. միջազգային իրավունքի որևէ նորմի խախտումը կարող է ի հայտ գալ հռչակագրի իրագործման համար ձեռնարկված միջոցառումներից: <sup>251</sup>
218. Անգամ եթե Դատարանը որոշի իրականացնել իր իրավագործությունը, այն պետք է ճանաչի միջազգային իրավունքի հետ անկախության հռչակագրի համապատասխանությունը: Հակառակ դիրքորոշումը պաշտպանող պետություններից և ոչ մեկը (իսկ նման դիրքորոշմամբ հանդես են եկել ՄԱԿ-ի 192 անդամներից միայն տասը) չկարողացավ ցույց տալ միջազգային իրավունքի որևէ նորմ, որը կարգելեր անկախության հռչակումը որպես այդպիսին: <sup>252</sup>

### ԱՅՈ

219. Միջազգային պրակտիկայում անկախության հռչակագրերը ճանաչվել են միջազգային իրավունքին հակասող, երբ ուղեկցվել են այլ խախտումներով: Միջազգային իրավունքը հստակորեն տարանջատում է տարածքի փոփոխությունը, որը կատարվել է այլ պետության կողմից ապօրինի ուժի կիրառմամբ, օրինակ՝ գրավումը, և բնակչության մի մասի տեղաշարժը մի պետության տարածքից այլ պետության տարածք՝ առանձնալով նրանից, որտեղ նման էլեմենտը բացակայում է: <sup>253</sup>
220. Այդուամենայնիվ, սա չի նշանակում, որ միջազգային իրավունքը չի կարգավորում իրավիճակն ընդհանրապես: Այսպես, միջազգային իրավունքը որոշակի պայմաններ է նախատեսում, որոնց առկայության դեպքում նորահռչակ պետությունը կարող է ճանաչվել այլ պետությունների կողմից. դա է երեք տարրերի միաժամանակյա առկայությունը. տարածք, բնակչություն և էֆֆեկտիվ կառավարություն: Ճանաչման հարցերում է, որ միջազգային իրավունքը սկսում է գործել: Ամենավերջին դեպքերը կապված Հարավային Օսեթիայի և Աբխազիայի հետ, դրա վառ ասպնոցն են: Երբ պետությունները և միջազգային կազմակերպությունները արձագանքեցին այդ կազմավորումների անկախության հռչակմանը, Ռուսաստանի ճանաչումն էր, որ դիտարկվեց որպես միջազգային իրավունքին հակասող՝ թողնելով մի կողմ անկախության հռչակման «օրինականության» հարցը: Անկախության հռչակագիրը պետության ստեղծման փաստի տարրերից մեկն է: Որպես այդպիսին, այն ոչ օրինական է, ոչ անօրինական: Մեծամասամբ դեպքերում իրավանախորդ պետությունը չի թույլատրի անջատումը ու կփորձի կանխել այն կամ խաղաղ միջոցներով կամ ուժով, սակայն իրավանախորդ պետության կարծիքը չի վերածվի սկզբունքի, քանի որ հակառակ դեպքում անջատման դեպքերը կհամարվեն միջազգային իրավունքին հակասող, իսկ դա այդպես չէ. միջազգային իրավունքը չեզոք դիրք է գրավում տվյալ հարցում: <sup>254</sup>
221. Պետության ստեղծման գործընթացը փաստական բնույթ ունի, գործընթաց, որը միշտ յուրօրինակ է, այլ տարրերի հետ կազմում է անկախության հռչակագրի հիմքը: Հետևաբար, անջատումը կհակասի միջազգային իրավունքին միայն այն դեպքում, երբ այն իրականացվել

<sup>250</sup> Declaration of Independence, Written Statement of the United States of America, pp. 63-64.

<sup>251</sup> Written Statement of Czech Republic, p. 6.

<sup>252</sup> Written Comments of France, paras. 24-29.

<sup>253</sup> Written Statement of the Federal Republic of Germany, p. 30.

<sup>254</sup> Written Statement of France, p. 26, para. 2.5.

է ի խախտումն իրավունքի կիրառելի նորմերի: Տվյալ դեպքում անկախության հռչակագիրը ինքնին՝ դրա օրինականության տեսանկյունից, կարող է դառնալ Դատարանի քննարկման առարկա:<sup>255</sup>

222. Անկախության հռչակագրի իրավաչափությունը անհրաժեշտ է որոշել հետևյալ սկզբունքները հաշվի առնելով՝

- a. Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության (ներկայումս Սերբիայի) ինքնիշխանության և տարածքային ամբողջականության հարգելը;
- b. Քաղաքացիական և անվտանգության ներկայացվածությունների հիման վրա տարածքի միջազգային կառավարումը;
- c. Կոսովոյի էական ինքնավարությունը;
- d. Կոսովոյի ապագա կարգավիճակի որոշմանը միտված քաղաքական գործընթացները;
- e. Բոլոր փախստականների և տեղահանված անձանց ապահով վերադարձը Կոսովո, և նրանց համար կյանքի խաղաղ պայմանների ապահովումը;
- f. Որևէ ժամանակային սահմանի բացակայությունն նման ռեժիմի համար՝ մինչև որ Անվտանգության խորհուրդը կորոշի այլ կերպ;
- g. Բանաձև 1244 –ում ամրագրված իրավական ռեժիմը կազմող սկզբունքներից շատերը հանդիսանում են ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունքներ և հետևաբար նրանց կիրառման հիմք է հանդիսանում ոչ միայն բուն բանաձևը, այլ նաև՝ ընդհանուր միջազգային իրավունքը:<sup>256</sup>

223. Անկախության հռչակագիրը չի համապատասխանում միջազգային իրավունքին քանի որ Կոսովոյի ժամանակավոր մարմինները իրավասու չէին ընդունել այն: Սահմանադրական հիմնադրույթերը սահմանում են, որ Ինքնակառավարման ժամանակավոր մարմինները և դրանց պաշտոնյաները պետք է իրականացնեն իրենց լիազորությունները ՄԱԿ-ի ԱՄ 1244 (1999) բանաձևին և Սահմանադրական հիմունքներում ամրագրված պայմաններին համապատասխան:<sup>257</sup>

224. UNMIK-ը չէր նախատեսում արտաքին գործերի նախարարություն ժամանակավոր կառավարման մարմինների բաժանմունքների շարքում, և ժամանակավոր կառավարման մարմինների անունից 2003 և 2005 թթ. առևտրային պայմանագրեր կնքել է UNMIK-ը:<sup>258</sup>

225. Ժամանակավոր մարմինների սահմանափակ իրավասություններն ամրագրված են Սահմանադրական հիմնադրույթների գլուխ 5-րդում, որտեղ որևէ կերպ խոսք չի գնում Կոսովոյի տարածքային կարգավիճակը փոփոխելու իրավասության մասին: Նույնիսկ մունիցիպալ սահմանները պահպանելը մտնում էր Գլխավոր Քարտուղարի հատուկ ներկայացուցչի (SRSG) իրավասությունների մեջ:<sup>259</sup>

226. Ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքների պահպանման անհրաժեշտությունը պարտադիր է: Անգամ հաշվի առնելով, որ Սերբիայի տարածքում ստեղծված իրավիճակը կարելի էր որակել որպես վտանգ միջազգային խաղաղությանը և

<sup>255</sup> Written Statement of France, p. 9, para. 18.

<sup>256</sup> Written Statement of Argentina, paras. 66-68.

<sup>257</sup> Written Statement of the Republic of Cyprus, para 92.

<sup>258</sup> <http://www.unmikonline.org/regulations/unmikgazette/02english/Econtents.htm> հղումն ըստ՝ Written Statement of the Republic of Cyprus, para. 110.

<sup>259</sup> Այն փաստը, որ ժամանակավոր մարմիններն իրավասու չէին որոշելու Կոսովոյի վերջնական կարգավիճակը, ասվում է հենց UNMIK-ի իրավաբանական գրասենյակի կողմից (UNMIK/FR/0040/01, 25 May 2001) և ավելին, UNMIK-FRY համատեղ փաստաթղթում ամրագրվել է, որ “Կոսովոյի ապագա կարգավիճակի վերաբերյալ դիրքորոշումը մնում է նույնը, ինչպես ամրագրված է բանաձև 1244-ում և այն չի կարող փոփոխվել Ինքնակառավարման ժամանակավոր մարմինների կողմից” հղումն ըստ Written Statement of the Republic of Cyprus, para. 110.



արդարացնել Անվտանգության խորհրդի միջամտությունը, մինչև այն է, վերջինիս միջամտությունը և Սերբիայի Ինքնիշխանության սահմանափակումը ժամանակավոր վարչակազմի ստեղծման միջոցով ենթադրվում էր, որ պետք է կրեին ժամանակավոր բնույթ: Անգամ այս տեսանկյունից անկախության միակողմանի հռչակումը պետք է որակվի միջազգային իրավունքին հակասող, քանի որ միջազգային իրավունքին են հակասում վերջինիս հետևանքները:<sup>260</sup>

227. Կիպրոսի Հանրապետությունը իր գրավոր մեկնաբանությունում ընդհանում է մի շարք պետությունների արտահայտած այն մտքին, որ Կոսովոյի անկախության հռչակումը Կոսովոյի ժողովրդի կողմից սահմանված ներքին սահմանադրական ակտ էր, և ոչ թե ժամանակավոր ինստիտուտների Կոսովոյի Ասամբլեայի կողմից ընդունված ակտ, որը պիտի լիներ ԱԽ 1244 բանաձևով սահմանված այդ մարմնի իրավասությունների շրջանակներում <sup>261</sup> , քանի որ հռչակումն ընդունելուն զուգորդած ժամանակավոր ինստիտուտների Կոսովոյի Ասամբլեայի բոլոր ընթացակարգերը իրականացվել են ԱԽ 1244 բանաձևով սահմանված կարգով և դրա հիման վրա տրված իրավասություններով, նախագիծը դրվել է հենց Ասամբլեայի օրակարգ, դրա անդամները ընտրվել են Ասամբլեայի կազմում Սահմանադրական հիմքերով սահմանված կարգով<sup>262</sup>. այս ամենը փաստում է, որ ամբողջ գործընթացը կարգավորվել է հենց ԱԽ 1244 բանաձևով, ինչը սակայն չի տվել Ասամբլեային անկախություն հռչակելու իրավասություն:

228. Անգամ դատարանին ուղղված հարցն է վերնագրված որպես Կոսովոյի ինքնակառավարման ժամանակավոր ինստիտուտների կողմից ընդունված անկախության հռչակագիր: Ավելին. խորհրդատվական կարծիքի նման վերնագիրը չի վիճարկվել անգամ Գլխավոր Ասամբլեայում դրա ներկայացմանը հակառակվող պետությունների կողմից<sup>263</sup>:

229. Կիպրոսը պնդում է, որ հռչակագիրը միանշանակորեն ընդունվել է Ասամբլեայի կողմից, և հետևաբար ԱԽ 1244 բանաձևի և միջազգային իրավունքի առարկա է<sup>264</sup>, որոնք նման իրավասություն չեն սահմանել Ասամբլեայի համար: Դա փաստել է նաև Կոսովոյում ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցիչը՝ նշելով որ «Ցանկացած միակողմանի հայտարարություն, ինչպիսի ձևի էլ այն լինի, որը չի հաստատվել Անվտանգության խորհրդի կողմից, Կոսովոյի ապագա կարգավիճակի վրա չունի իրավական որևէ ազդեցություն»:<sup>265</sup>

## VI. Արդյոք Կոսովոյի անկախացումը կարո՞ղ է նախադեպ ծառայել այլ նմանատիպ իրավիճակների համար

### ՈՉ

230. Կոսովոն *sui generis* հարց է և այն չի կարող լինել նախադեպ: Պնդումները, որ այս իրավիճակը կարող է օգտագործվել որպես անցանկալի նախադեպ, արդարացված չեն:<sup>266</sup>

231. Հետևյալ հանգամանքների ամբողջությունը դարձնում են Կոսովոն իսկապես յուրօրինակ հարց.

- a. 1998-1999թթ. տեղի ունեցածի բնույթն ու ծավալները/ինչպես փաստագրված է/ . կոտորածներ և կողոպուտներ, մասսայական էթնիկական գտումներ, միջազգային

<sup>260</sup> Written Statement of Spain, paras. 20-24.

<sup>261</sup> Republic of Cyprus, Comments, para. 3-7.

<sup>262</sup> Republic of Cyprus, Comments, para. 4.

<sup>263</sup> A/63/PV.22. UN dossier 6, pages 2, 11, հղումն ըստ՝ Written Comments of the Republic of Cyprus, para. 4.

<sup>264</sup> Written Comments of the Republic of Cyprus, para. 6.

<sup>265</sup> Statement by Michel Stienen, Special Representative of the Secretary-General: UN dossier 187 հղումն ըստ՝ Written Comments of the Republic of Cyprus, para. 6.

<sup>266</sup> Written Statement of the Federal Republic of Germany, p. 31.

հանրության միջամտության անհրաժեշտությունը այդ ամենը կանխելու, կամ ավելի ճիշտ՝ վերջ դնելու համար,

- b. միջազգային հանրության՝ դրա ունիվերսալ կառույցների, ինչպիսին է ՄԱԿ-ը ներգրավվածությունը 1999թ. առաջ և հետո,
- c. լարված և լուրջ, սակայն ապարդյուն բանակցություններ՝ ստեղծված իրավիճակին լուծում գտնելու համար (այլ կերպ ասած՝ այլ հնարավորությունները, քան *ultima ratio* գործողությունները, բացակայում են):<sup>267</sup>

232. Տվյալ քաղաքական գործընթացի աննախադեպությունը պայմանավորված է մի շարք փոխկապակցված գործոններով.

- a. առաջին, ամբողջ գործընթացը՝ սկսած 1999թ. մինչև անկախության հռչակման օրը Կոսովոն վայելում էր ամբողջապես անջատ և Սերբիայից տարբերվող կարգավիճակ, ռեպրեսիվ միջոցների ծայրահեղ խստությունը, որոնք Սերբիան կիրառեց Կոսովոյի նկատմամբ 90-ականներին, սպառնալիք հանդիսացավ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը, և ստիպեց Անվտանգության խորհրդին որոշում ընդունել՝ տարածքը ժամանակավոր միջազգային վարչակազմի հանձնելու կապակցությամբ;
- b. երկրորդ, դեռևս 1999թ. Անվտանգության խորհուրդը որպես Կոսովոյի միակ վերջնական կարգավիճակ դիտարկել էր անկախությունը՝ հաշվի առնելով տարածքի բնակչության ցանկությունը հարգելու բացարձակ անհրաժեշտությունը;
- c. երրորդը, 2008թ. փետրվարին հռչակված անկախությունը անակնկալ չէր, այլ՝ Անվտանգության խորհրդի հովանավորության և հսկողության ներքո իրականացված ինտենսիվ բանակցությունների արդյունք: Եվ միայն բանակցությունների կատարյալ ձախողմամբ ավարտից հետո է, որ հռչակվեց անկախությունը՝ որպես Կոսովոյի ժողովրդի կամքի իրական արտահայտում;
- d. չորրորդ, անկախությունը չհռչակվեց առանց երաշխիքների և հսկողության, անկախությունը ձեռք բերվեց խաղաղ ճանապարհով, Կոսովոյի կողմից խստագույնս պահպանվեցին բոլոր կանոնները՝ կապված ժողովրդավարության, մարդու իրավունքների, փոքրամասնությունների իրավունքների և այն նորմերի հետ, որոնք ուղղված էին տարածաշրջանում կայունության պահպանմանը:
- e. հինգերորդ, հաշվի առնելով վերոնշյալ գործոնները՝ ՄԱԿ-ը, ինչպես նաև Եվրամիությունը միանգամայն օրինականորեն շարունակում են օժանդակել Կոսովոյի իշխանություններին՝ դրանով ցուցադրելով, որ երբեք չեն դիտարկել անկախության հռչակումը որպես տարածաշրջանում խաղաղության և անվտանգության սպառնալիք:<sup>268</sup>

233. Անհրաժեշտ է նշել, որ ստատուս քվոյի պահպանումն անհնարիին էր ոչ միայն այն պատճառով, որ այն ձևական էր, այլև այն պատճառով, որ դա կհանդիսանար Կոսովոյի ժողովրդի կամքի անտեսում, ինչպես նաև, ինչպես բազմիցս ամրագրվել է քաղաքական գործընթացի մասնակիցների կողմից, կհանգեցներ ինչպես Կոսովոյում, այնպես էլ ողջ տարածաշրջանում իրավիճակի ապակայունացման և որպես հետևանք սպառալիք կստեղծեր միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը: Բացի այդ, Միջազգային վարչակազմը չէր կարող գործել անորոշ ժամանակաշրջանում, ինչով նորից խորացվում էր Կոսովոյի կարգավիճակի անորոշությունը՝ առաջացնելով բացասական հետևանքներ, հատկապես քաղաքական և տնտեսական ոլորտներում, ինչպես նաև 1244 բանաձևով այն նախատեսված էր որպես բացառապես ժամանակավոր վարչակազմ: Կոսովոյի

<sup>267</sup> Written Statement of the Federal Republic of Germany, p. 26-27.

<sup>268</sup> Written Statement of France, p. 29, para. 2.18.

միավորումը Սերբիայի հետ կարող էր հանդիսանալ խնդրահարույց, քանի որ Կոսովոյի բնակչության համաձայնությունն ստանալը քիչ հավանական էր, բացի այդ անցյալում երբեք Սերբիան հակված չէր զգալի ինքնավարություն տրամադրել Կոսովոյին: Այդ փաստը ևս մեկ անգամ հաստատվեց 2006թ. բանակցությունների արդյունքում ընդունված սահմանադրությամբ, որով բացառվում էր Կոսովոյի կայուն և իրական ինքնավարությունը:<sup>269</sup>

234. Լեհաստանը կարծում է, որ Կոսովոյի դեպքի *sui generis* բնույթը հիմնավորվում է հետևեալ հանգամանքներով՝

- a. Կոսովոյի երկարատև ինքնավարություն ու ինքնիշխանություն է վայելել, որը երաշխավորված էր նաև Հարավսլավիայի սահմանադրությամբ: Կոսովոյին և դրա ժողովրդին շնորհված էին հատուկ իրավունքներ թե՛ ՀՄԴՀ, թե՛ Սերբիայի սահմաններում: Հետագայում դրանց սահմանափակումն ու ինքնավարության բոլոր ձևերի վերացումը, ինչպես նաև մարդասիրական իրավիճակի վատթարացումը պատճառ դարձան բնակիչների կողմից իրենց անկախությանը ձգտելուն;
- b. Սերբիական իշխանության համակարգից ամբողջովին դուրս ստեղծվեցին պետությանը բնորոշ ինստիտուտներ;
- c. Սերբիայի կողմից մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի սխտեմատիկ և լայնածավալ խախտումները;
- d. Վերոնշյալ խախտումների հետևանքով Կոսովոյի կարգավիճակը «միջազգայնացվեց», որը հիմնականում էլ հիմք հանդիսացավ այն բանի համար որպեսզի միջազգային հանրությունը Կոսովացի ալբանացիներին վեցրեց *de facto* և *de jure* պաշտպանության տակ;
- e. 1999 թ.-ից ի վեր Սերբիան կորցրեց Կոսովոյի նկատմամբ իր արդյունավետ իշխանությունն ու վերահսկողությունը, որն ամբողջությամբ անցավ ՄԱԿ-ին և Կոսովոյի կառավարման մարմիններին: Սերբիան 9 տարիների ընթացքում ո՛չ իրականացրել է, ո՛չ վերականգնել իր հսկողությունը Կոսովոյի նկատմամբ: Այս իմաստով 2008թ.-ի Անկախության հռչակագրի ընդունմամբ միայն հաստատել է իրականությունը;
- f. Նման պայմաններում ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն անկարող էր միջազգային հանրության անունից քայլեր ձեռնարկել Կոսովոյի կարգավիճակը որոշելու համար, այդ իսկ պատճառով այդ քայլը ձեռնարկել է հենց Կոսովոյի ժողովուրդը 2008թ.-ի փետրվարի 17-ին խաղաղ ճանապարհով;
- g. Եթե տվյալ պետության տարածքում ինքնիշխանության իրավունքը չի կարող արդյունավետ իրականացվել, և, հետևաբար, այդ իրավունքը կոնկրետ հանգամանքներում հանգեցնում է անջատման և կարող է պաշտպանվել իրավական բոլոր միջոցներով:<sup>270</sup>

235. Դանիայի կառավարության կարծիքով Կոսովոն հանդիսանում է *sui generis* նաև այն պատճառով, որ նոր սահմանադրական կարգն ի վիճակի չէր պաշտպանել մարդու իրավունքները 1990-ականներին, ինչն իր կուլմինացիային հասավ 1998-99թթ.-ին, երբ ավելի քան 700.000 քաղաքացիներ ստիպված էին հանգրվան գտնել Կոսովոյից դուրս տեղակայված փախստականների ճամբարներում: Ավելին, կային բազմաթիվ զեկույցներ, որոնք հիմնավորում էին Կոսովացի Ալբանացիների դեմ կատարվող ծանր հանցագործությունների մասին: Զեկույցներից գատ, հանցագործությունների կատարման

<sup>269</sup> Written Statement of France, p. 40, para. 2.56.

<sup>270</sup> Written Statement of Poland, para. 5.2.

փաստերը բազմիցս հաստատվել են Նախկին Հարավսլավիայի գործերով միջազգային քրեական տրիբունալի որոշումներում:<sup>271</sup>

236. Ճապոնիայի մոտեցումն այն է, որ Կոսովոյի *sui generis* բնույթը հիմնավորվում է այդ գործընթացում միջազգային հանրության, և մասնավորապես՝ ՄԱԿ-ի ակտիվ և շարունակական մասնակցությամբ: Հետևաբար մենք չենք կարող Կոսովոյի իրավիճակի իրավական գնահատականի հիման վրա եզրակացնել միջազգային իրավունքի ընդհանուր նորմի կամ սկզբունքի առկայության մասին:<sup>272</sup>

## **ԱՅՈ**

237. Որևէ կրեպ չի մատնանշվում, թե միջազգային իրավունքի կոնկրետ որ նորմն էն, որ հատուկ հետևանքներ են առաջացնելու, եթե Կոսովոն լիներ «հատուկ դեպք»: Ինչ վերաբերում է գործի՝ որպես «նախադեպի» էությանը, ապա պետք է ասել, որ եթե հոչակագիրը համապատասխանում է միջազգային իրավունքին, ապա դա կհանդիսանա «նախադեպ»: Հակառակ դեպքում, եթե այն չի համապատասխանում միջազգային իրավունքին, ապա այն չի կարող հանդիսանալ «նախադեպ» կամ «հատուկ դեպք»՝ *ex injuria ius non oritur* սկզբունքի համաձայն:<sup>273</sup>

## **VII. ՄԱԿ-ի Միջազգային դատարանի մոտեցումների համառոտագիր**

### **A. Հարցի շրջանակները եվ նշանակությունը.**

238. Դատարանը նշում է, որ որոշ դեպքերում, երբ իր առջև դրված հարցը պատշաճ ձևով ձևակերպված չի եղել, ապա Դատարանը չի հետևել հարցի բառացի ձևակերպմանը: Օրինակ այն դեպքում երբ, հարցը «չի արտահայտել հստակորեն խնդրո առարկա իրավական հարցը» (*Interpretation of the Agreement of 25 March 1951 between the WHO and Egypt, Advisory Opinion, I.C.J. Reports 1980, p. 89, para. 35*): Կոնկրետ այս գործում Գլխավոր Ասամբլեայի կողմից առաջադրված հարցը հստակ կերպով ձևակերպված է: Հարցը կոնկրետ է և որոշակի: Գլխավոր Ասամբլեան չի հարցնում թե արդյոք Կոսովոն ձեռք է բերել պետականություն, և ոչ էլ հարցնում է Կոսովոյի՝ այլ պետությունների կողմից ճանաչման իրավաչափության և իրավական կշռի մասին:<sup>274</sup>

239. Դատարանը գտնում է, որ հարցի հիմանկան ասպեկտներից է հետևյալը. «Կոսովոյի կառավարման ժամանակավոր մարմինների կողմից անկախության միակողմանի հոչակումը», ինչից հետևում է, որ անկախության հոչակագրի հեղինակների ինքնությունը կարևոր հանգամանք է հանդիսանում: Նշված հարցին պատասխանելը կարող է օգնել միջազգային իրավունքին համապատասխանության խնդիրը լուծելու համար:

<sup>271</sup> Written Statement of Denmark, para. 2.5, p. 7. ICTY- ի որոշումներ – *Prosecutor v. Milan Milutinovic et al* (IT-05-87-T) Judgment of 26 February 2009 paras. 217-221.

<sup>272</sup> Written Statement of Japan, p. 8.

<sup>273</sup> Written Statement of Argentina, para. 60.

<sup>274</sup> Accordance with international law of the unilateral declaration of independence in respect of Kosovo, I.C.J. Advisory Opinion, 22 July 2010 (այսուհետ՝ Kosovo Adv. Op.), paras. 49-51.

240. Որպեսզի կարողանա պարզել, թե արդյոք անկախության հռչակագիրը համապատասխանում է միջազգային իրավունքին, թե ոչ, Դատարանը պետք է ազատ լինի ուսումնասիրել փաստական բոլոր հանգամանքները և որոշել, թե արդյոք հռչակագիրը հրապարակվել է ինքնակառավարման ժամանակավոր մարմինների, թե մեկ այլ կազմավորման կողմից:
241. Չնայած, որ դատական պրոցեսի մասնակցողներից շատերը հղում էին կատարել Կանադայի Գերագույն Դատարանի *re Secession of Quebec* գործով կայացրած որոշման վրա, Դատարանը գտնում է, որ սույն գործի հիմնական հարցը էապես տարբերվում է Քվեբեկի գործով քննարկված խնդիրներից: Քվեբեկի գործով ներկայացված հարցը հետևյալն էր.
- «Արդյոք միջազգային իրավունքի համաձայն Քվեբեկի Ազգային Ժողովը, օրենսդիրը կամ կառավարությունը իրավունք ունեն միակողմանի անջատվել Կանադայից: Այս կապակցությամբ, արդյոք միջազգային իրավունքում կա ինքնորոշման իրավունք, որի հիման վրա Քվեբեկի Ազգային Ժողովը, օրենսդիրը կամ կառավարությունը կարող են միակողմանիորեն անջատվել Կանադայից»:<sup>275</sup>
242. Պարզ երևում է, որ Քվեբեկի գործով Կանադայի Գերագույն Դատարանին ուղղված հարցը վերաբերում էր հենց «անջատման» իրավաչափությանը, մինչդեռ սույն գործով, Գլխավոր Ասամբլեայի կողմից տրված հարցը վերաբերում է միայն անկախության հռչակագրի իրավաչափությանը: Դատարանից չի պահանջվում պարզել, թե արդյոք միջազգային իրավունքը իրավունք է տալիս Կոսովոյին միակողմանիորեն անջատվել Սերբիայից, կամ թե արդյոք պետության կազմից որոշակի տարածքների միակողմանի անջատումը թույլատրելի է միջազգային իրավունքում:<sup>276</sup>
243. Նույնը վերաբերում է նաև այսպես կոչված «հատուցողական անջատման» (remedial secession) իրավաչափության և դրա իրագործման չափանիշների հարցին, որը, ըստ Դատարանի, չի հանդիսանում քննարկման առարկա սույն գործով:<sup>277</sup>
244. Հարցին պատասխանելու համար, անհրաժեշտ է պարզել միայն, թե արդյոք անկախության հռչակագիրը խախտել է ընդհանուր միջազգային իրավունքը կամ Անվտանգության խորհրդի 1244 բանաձևով ստեղծված *lex specialis*-ը:<sup>278</sup>

## ***B. Արդյոք անկախության հռչակագիրը համապատասխանում է միջազգային իրավունքին***

### **1. Ընդհանուր միջազգային իրավունք**

245. 18-րդ, 19-րդ և վաղ 20-րդ դդ. տեղի ունեցան անկախության բազմաթիվ հռչակումների, որոնցից շատերը հանդիպեցին այն պետությունների արտահայտված ընդդիմության, որոնցից տեղի էր ունենում անջատումը: Որոշ դեպքերում նման հռչակումները հանգեցնում էին նոր պետության ստեղծման, որոշ դեպքերում՝ ոչ: Մակայն, պետությունների պրակտիկայից որևէ կերպ չի հետևում, որ անկախության հռչակումը հանդիսացել է միջազգային իրավունքի խախտում: Ընդհակառակը, այդ

<sup>275</sup> Reference by the Governor-General concerning Certain Questions relating to the Secession of Quebec from Canada ([1998] 2 S.C.R. 217; 161 D.L.R. (4th) 385; 115 Int. Law Reps. 536) հղումն ըստ՝ Kosovo Adv. Op., para. 55.

<sup>276</sup> Kosovo Adv. Op., paras. 55-56.

<sup>277</sup> Kosovo Adv. Op., para. 82.

<sup>278</sup> Kosovo Adv. Op., para. 83.

Ժամանակահատվածի պետությունների պրակտիկան հիմնավորում է այն եզրահանգումը, որ անկախության հռչակումը որևէ կերպ չէր արգելվում միջազգային իրավունքի կողմից: 20-րդ դարի երկրորդ կեսին ինքնորոշման իրավունքի զարգացումը հանգեցրեց նրան, որ հանարավորություն տվեց անկախանալ օտարերկրյա գերակայության և շահագործման ենթակա չինքնակառավարվող տարածքներին և ժողովուրդներին (*Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 276 (1970), Advisory Opinion, I.C.J. Reports 1971, pp. 31-32, paras. 52-53; East Timor (Portugal v. Australia), Judgment, I.C.J. Reports 1995, p. 102, para. 29; Legal Consequences of the Construction of a Wall on the Occupied Palestinian Territory, Advisory Opinion, I.C.J. Reports 2004(I), pp. 171-172, para. 88*): Մեծ թվով այլ պետություններ ստեղծվել են այս իրավունքի իրացման շնորհիվ:<sup>279</sup>

246. Դատարանը, հղում կատարելով շատ պետությունների կողմից ներկայացված գրավոր դիրքորոշումների վրա, որտեղ մատնանշվում է, որ անկախության հռչակագիրը խախտում է տարածքային ամբողջականության սկզբունքը, նշում է, որ ժամանակակից միջազգային իրավունքի համաձայն, տրածքային ամբողջականության սկզբունքի կիրառման շրջանակները սահմանափակվում են միայն պետությունների միջև հարաբերություններով: Այսինքն, այդ սկզբունքը պարտականություններ է ստեղծում միայն պետությունների համար:<sup>280</sup>

247. Դատարանը գտնում է, որ այն բոլոր դեպքերը, երբ Անվտանգության խորհուրդը հակաիրավական է ճանաչել այս կամ այն անկախության հռչակագիրը, պատճառաբանել է իր դիրքորոշումը նրանով, որ այդ հռչակագիրը խախտել է ուժի կամ դրա կիրառման սպառնալիքի արգելքը, կամ այլ իմպերատիվ նորմերը:<sup>281</sup>

248. Դատարանը գտնում է, որ անկախության հռչակագիր ընդունելու համար ընդհանուր միջազգային իրավունքը չի պարունակում որևէ արգելք: Հետևաբար Դատարանը գտնում է, որ 2008թ. փետրվարի 17-ի անկախության հռչակագիրը չի խախտում ընդհանուր միջազգային իրավունքը:

## **2. Անվտանգության խորհրդի 1244 բանաձև և սահմանադրական հիմնադրույթներ**

249. Դատարանը պնդում է, որ ՄԱԿ-ի Կանոնադրության հոդվածներ 24, 25-ի և գլուխ VII-ի հիման վրա, Անվտանգության խորհուրդը կարող է ընդունել բանաձևեր, որոն պարտավորություններ են առաջացնում միջազգային իրավունքի հիման վրա: Բանաձև 1244-ը ընդունվել է ՄԱԿ-ի Կանոնադրության գլուխ VII-ի հիման վրա և հետևաբար առաջացնում է միջազգային պարտավորություններ:<sup>282</sup>

250. Հիմնական հարցերից մեկն այն է, թե արդյոք UNMIK-ի կողմից ընդունված Սահմանադրական Հիմնադրույթները կազմում են կիրառելի միջազգային իրավունքի մաս: Դատարանն այն կարծիքին է, որ UNMIK-ի կողմից ընդունված կանոնակարգերը, ներառյալ կանոնակարգ 2001/9-ը, որը սահմանեց Սահմանադրական Հիմնադրույթները, ընդունվել են ՄԱԿ-ի Գլխավոր Քարտուղարի հատուկ ներկայացուցչի կողմից՝ Անվտանգության խորհրդի 1244 (1999) բանաձևից բխող իրավասության շրջանակներում:

<sup>279</sup> Kosovo Adv. Op. para. 79.

<sup>280</sup> Kosovo Adv. Op. para. 80.

<sup>281</sup> Kosovo Adv. Op., para. 81.

<sup>282</sup> Kosovo Adv. Op., para. 85.

պարագրաֆներ 6, 10 և 11: Սահմանադրական Հիմնադրույթների պարտադիր բնույթն այսպիսով բխում է բանաձև 1244 (1999) –ից, հետևաբար նաև՝ միջազգային իրավունքից: Ինչից կարելի է եզրակացնել Սահմանադրական Հիմնադրույթներից բխող պարտավորությունների միջազգային-իրավական բնույթի վերաբերյալ:<sup>283</sup>

251. Դատարանն ընդգծում է, որ բանաձև 1244 (1999)-ը և Սահմանադրական Հիմնադրույթները վերապահում են Գլխավոր Քարտուղարի հատուկ ներկայացուցչի բավականին լայն իրավասություններ: Դատարանը նաև նկատում է, որ թե բանաձևտը և թե Սահմանադրական Հիմնադրույթները գործում էին հռչակագրի ընդունման պահին՝ 2008 թ. փետրվարի 17-ին:<sup>284</sup>
252. Պատասխանելու համար այն հարցին, թե արդյոք անկախության հռչակագիրը համապատասխանում է բանաձև 1244 (1999)-ին, Դատարանը անհրաժեշտ է համարում պարզել անկախության հռչակագիրը ընդունած անձանց ինքնությունը:
253. Անկախության հռչակագրից պարզ է դառնում, որ հռչակագրի հեղինակները տեղյակ էին վերջնական կարգավիճակի բանակցությունների ձախողումից և հռչակագրի ձևակերպումներից հստակ երևում է, որ հեղինակները նպատակ չէին հետապնդում կազմավորել Կոսովոյի մինջանկյալ կառավարություն, այլ ցանկանում էին հիմնել անկախ պետություն:<sup>285</sup>
254. Նշված եզրահանգումը կարելի է նաև հիմնավորել այն փաստով, որ հռչակագրի հեղինակները ստանձնեցին Կոսովոյի բոլոր միջազգային պարտավորությունները, որոնք ստեղծվել էին Կոսովոյի համար UNMIK-ի մասնակցությամբ:<sup>286</sup>
255. Դատարանը կարևորում է նաև անկախության հռչակագրի ընդունման ընթացակարգը և պայմանները: Այսպես, “Կոսովոյի Ասամբլեա” արտահայտությունը առկա է միայն անգլերեն և ֆրանսերեն թարգմանություններում, մինչդեռ սկզբնական Ալբաներեն տեքստում նման հիշատակում չի կատարվում որևէ տեղ: Բացի այդ, հռչակագրում ընդունված լեզուն տարբերվում է Ասամբլեայի ընդունած այլ ակտերում օգտագործված ձևակերպումներից. Օգտագործվում է. “Մենք, ժողովրդի ընտրված ներկայացուցիչները...”: Հռչակագիրը ստորագրվել է բոլոր ներկաների կոցմից, ներառյալ Կոսովոյի նախագահին, որը չի հանդիսանում Ասամբլեայի անդամ:<sup>287</sup>
256. Դատարանը կարևորում է նաև այն հանգամանքը, որ Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը որևէ կերպ չի առարկել անկախության հռչակագրի ընդունմանը, մինչդեռ նախկինում եղել էին դեպքեր, երբ Հատուկ Ներկայացուցիչը առարկել է Ասամբլեայի այս կամ այն գործողությանը՝ համարելով այն իրավասությունների սահմանանցում: Այս հիմքով Դատարանը եզրակացնում է, որ եթե Ասամբլեան գործեր *ultra vires* ապա Գլխավոր Քարտուղարի Հատուկ Ներկայացուցիչը կհայտնեի իր առարկության մասին: Այս, և վերը նշված փաստարկների հիման վրա Դատարանը եզրակացրեց, որ հռչակագրի հեղինակները, ընդունելով անկախության հռչակագիրը 2008 թ. փետրվարի 17-ին, գործել են ոչ թե որպես Սահմանադրական հիմնադրույթների շրջանակներում գործող Ժամանակավոր Ինքնակառավարման Մարմիններ, այլ որպես Կոսովոյի ժողովրդի ներկայացուցիչներ միջանկյալ կառավարության շրջանակներից դուրս:<sup>288</sup>

<sup>283</sup> Kosovo Adv. Op. para. 87.

<sup>284</sup> Kosovo Adv. Op., paras. 90-91.

<sup>285</sup> Kosovo Adv. Op., paras. 102-105.

<sup>286</sup> Kosovo Adv. Op., paras. 105-106.

<sup>287</sup> Kosovo Adv. Op., paras. 107, 108.

<sup>288</sup> Kosovo Adv. Op., paras. 108 -109.

**3. Արդյոք անկախության հռչակագիրը  
համապատասխանում է Անվտանգության խորհրդի բանաձև  
1244-ին**

257. Դատարանը նախ նշում է, որ բանաձևը իր առջև խնդիր չէր դնում լուծել Կոսովոյի վերջնական կարգավիճակի հարցը: Դատարանը որպես հակառակ օրինակ նշում է Անվտանգության խորհրդի բանաձև 1251-ը , որը վերահաստատում էր այն դիրքորոշումը համաձայն, որի Կիպրոսի հարցի լուծումը պետք է հիմնվի միասնական ինքնիշխանությամբ, միասնական քաղաքացիությամբ Կիպրոսի Պետության գաղափարի վրա: Այսպիսով Անվտանգության խորհուրդը արտահայտեց իր մշտական դիրքորոշումը Կիպրոսի հարցի վերաբերյալ: Սակայն Կոսովոյի դեպքում, բանաձև 1244 (1999)-ը որևէ կերպ չէր անդրադառնում վերջնական կարգավիճակի հարցին: Հետևաբար բանաձևը չէր բացառում անկախության հռչակագրի ընդունման փաստը:<sup>289</sup>
258. Բանաձևի հիմնական հասցեատերերը հանդիսանում են ՄԱԿ-ի անդամ պետությունները, ՄԱԿ-ի մարմինները, Գլխավոր Քարտուղարի Հատուկ Ներկայացուցիչը: Բանաձևի տեքստում չկա որևէ հիշատակում առ այն, որ այն պարտավորություններ է ստեղծում այլ ակտորների համար: Ապացուցելու համար փաստարկի տրամաբանությունը Դատարանը հղում է կատարում Կոսովոյի իրավիճակի կապակցությամբ ընդունված մի շարք նախորդ բանաձևերին, որտեղ, օրինակ, հստակ պարտավորություններ էր սահմանվում Կոսովոյի Ալբանական Ղեկավարության համար: Մինչդեռ, բանաձև 1244-ում նման որևէ հիշատակում չկա:<sup>290</sup>
259. Դատարանն այն կարծիքին է, որ բանաձևի տեքստը պետք է մեկնաբանվի դրա առարկային և նպատակին համահունչ, իսկ դրանք են՝ միջանկյալ կառավարության հիմնում, առանց վերջնական կարգավիճակը որոշակիացնելու: Իսկ նման պայմաններում, բանաձևի որևէ դրույթ չի կարելի մեկնաբանել, որպես անկախության հռչակագրի ընդունումը արգելող:<sup>291</sup>
260. Վերոհիշյալ փաստարկների հիման վրա Դատարանը եզրակացնում է, որ անկախության հռչակագրի ընդունումը չի հակասում Անվտանգության խորհրդի բանաձև 1244-ին:<sup>292</sup>

<sup>289</sup> Kosovo Adv. Op., paras. 113-114.

<sup>290</sup> Kosovo Adv. Op., paras. 115-117.

<sup>291</sup> Kosovo Adv. Op., paras. 117-119

<sup>292</sup> Kosovo Adv.Op., para. 119.